

ԿԱՍՈՒ ՄԿԻՏՁՅԱՆ

Հայ
դրոպուկահարները



ԵՐԵՎԱՆ

ГОСУДАРСТВЕННЫЙ ЭТНОГРАФИЧЕСКИЙ МУЗЕЙ АРМ. ССР
«АРМГЛАВКОНЦЕРТ»

КАМО МКРТЧЯН

АРМЯНСКИЕ ДУДУКИСТЫ

ИЗДАТЕЛЬСТВО «СОВЕТАКАН ГРОХ»
ЕРЕВАН 1988

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՀ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ, ԳԵՏԱՍԱՆԻ, ՔԱՆԳԱՐԱՆԻ,
«Հ Ա Յ Գ Լ Խ Հ Ա Մ Ե Ր Գ»

ԿԱՍՈՒ ՄԿՐՏՅԱՆ

ՀԱՅ ԳՈՒԳՈՒԿԱՀԱՐՆԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՎ» ՀՐԱՏԱՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1988

ԳՄԳ՝ 85.243
Մ՝ 806


Միլիտչյան Կ.
Մ 806 *Հայ գրողականների: Հոգվածներ:—Նր.: Սովետ. գրող, 1987.—
180 էջ.*

*Գիրքը պատմում է հայ գրողականների, նրանց արվեստի, անցած նահապետի,
կատարչական ընթացիկ անհատականությունների, միասնական փաստագրական տե-
ղեկությունների և հազարամյակների և գործունեության մասին:
Բաղկացած է երեք բաժիններից՝ «Կարգուհանր», «Փոխադրվածներ», «Ներհատարգ
ներ»:*

*Գիրքը, որ հանդիսանում է մատուցական ընթացիկի, հրատարակության և պատ-
րաստի և ազգային կրթությանը և հայաստանի ազգային պատմական լեզու-
անի գիտական խորհրդի:*

Մ $\frac{1805000000}{7150187}$ ատանց հայտարարված 87 ԳՄԳ՝ 85.246

© ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԻԷ ԱՅԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՓՈՒՅՊԱՐԱՆ...1987
«ՀԱՅԿԱՍՏԱՆԻՄԻԳ»



Դուրսից այն միակ գործիքն է, որի
նվազը առկայում է ինչ լաց մեկը:


ԱՐԱՄ ԽԱՀԱՏՐՅԱՆ

ԳՈՒԳՈՒԿԻ ԱՐՔԱՆՈՒՅԱԸ

Այս գրքում հնչում է դուրսից: Հնչում է որպես գործիք ու կախարդանք,
որպես իրողություն:

Հեղինակը, որ արվեստի անդաստանում բարի ու լավ հետք է թողել՝
ժողովրդի և հասարակական գործիչ Կամո Ակրտչյանը, հայ դուրսկանար-
ների զնգուն շեփորը հավաքել է ասես մի մեծ համերգի:

Եվ անգամ նրանք, ովքեր ծանր «են միմյանց» կյանքից վաղամեծիկ հե-
ռացած Մարգար Մարգարյանը, Լևոն Մաղոյանը, Վաչե Հովսեփյանը, այսօր
«խոսում են» Ջիվան Գասպարյանի, Սուրեն Թովմասյանի, Վլադիմիր Հարո-
թյունյանի, Եղիշե Մամուկյանի ու մյուսների հետ:



Հայ ազգային նվագարանի ընտրամիջ

Խոսում են ոչ միայն խոսելու՝ դուրսով նվագելու համար, խոսում են
իրար հասկանալու և իրենց վարպետության աստիճաններից:

Դուրսից՝ այդ ոին հավանական նվագարանը, մեր ժողովրդի սիրելին է
եղել միշտ: Դուրսովով ուրախացել են, դուրսովով հպարտացել, դուրսովի

կանչով տիրել ու մի քիչ էլ զգաստացել: Գողովը մեզ համար լեզու է եղել, և այդ լեզուն բարձրացել է հայոց արշալույսներից ու չի խոնարհվել...

Գողովկն ունի իր ներքին էությունը:

Այսօր այն խորախորհուրդ բացվում է աշխարհին որպես մեր ազգի կամչ, մեր ժողովրդի ոգի:

Այդ փոքրիկ, փոքրիկ նվագարանը մեծագործության հրաշքներ է անում:

Դրա համար մեր բոլոր համերգներում, հայ արտիստների բոլոր ելույթներում գողովը փառք է բերում:

Այս գրքի էջերը խոսում են իրար մեջ:

Ինձ թվում է անգամ, որ այս գիրքը յուրահատուկ մարտն է, որ ամեն մի գողովկամար իր վազքն է սկսում ամենամեծ մեկնարկից՝ իր ժողովրդից:

Գուցե ներկայացնելու հարկ չկա այս գիրքը, չէ՞ որ այն ամփոփում է գողովկի երաժշտության անցյալի ու պարզապես կլե՛ջները:

Ներկայացնելու հարկ չկա նաև գողովկամարներին, որոնց մեծ ու փոքր կենսագրությունները: Հեղինակը նրանց բոլորին նայել է ժամանակի մեջ, ժամանակի ուղիով: Նրանցից ամեն մեկը մեր արվեստին իր հաստատուն ու իրական երգն է բերել ու այսօր էլ բերում է:

Բերքաշատ է եղել հունձքը մեր գողովկի, որը հայ արտիստների շուրթերով անցնելով աշխարհից-աշխարհ՝ այսօր իր ուրույն և իրական տեղն ունի սովետական արվեստի անդամատանում:

Այս գիրքը նաև մեր ժողովրդի երաժշտական պատմության էջերից է: Չէ՞ որ գողովը երգում է հայ ժողովրդի կենսագրության մասին, թերթում այն:

Իմ ստեղծագործական աշխատանքի ընթացքում գրելով ոտմանա, սիմֆոնիա ու կանտատ, հաճախ ես տուն դառնալիս միացնում եմ ձայնարկիչն ու լսում մեր գողովկը: Հոգիս խաղաղվում է:


Դրա համար էլ կարողավոլ Կամ Մկրտչյանի գրքի էջերը գողովկամարների մասին, ուզում եմ, որ ձեր հոգին էլ խաղաղվի ու կարոտի մեր ս.զ.գի ստեղծած պարզ, բայց միշտ անմիջական ու ինքնուրույն նվագարանին՝ գողովկին:

Չէ՞ որ գողովը մեր սրտերի առնավառչալան է ու արտահայտիչը, չէ՞ որ գողովը մեր է:

Լսենք այդ սիրո ձայնը:

ԷՒՈՒՆՐԴԻ ՄԻՐՁՈՑՄԱՆ

**Հայաստանի կոմպոզիտորների միության
վարչության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական
արտիստ**



ԱՋՆԻՎ ՈՒ ՊԱՐՁ

Հայ ժողովրդի ազգային նվազարանների շարքում պատվավոր և բարձրագույն տեղ ունի դուդուկը:

Աշխատանքի ընդմիջմանը, թե՛ հանգստի պահին, թո՛ւ օջախում կամ հայրենի տնից հեռու, երբ լսում ես հարազատ մի մեղեդի, ազգային մի սրտատույզ երգ, հոգիդ պարտավում է ջերմությամբ: Քո սիրտը հուզում է անչափ մի խնդրությամբ, և դու էլ երգում ու մրմնջում ես այդ գուլալ մեղեդին, հարազատ մեղեդին:

Այդպես է այն, ինչ եկել է անցյալի հուշից, ավանդույթների միջով, այսօր նորից-նոր ստիպում է թե՛զ վերապրել, խորհել, ամբշնել...

Դուդուկ:

Այն ծնվել է դարեր առաջ՝ հայկական ծիրաննու փայտից:

Կարմրավուն, կարծր փայտ ունի ծիրանի ծաղը: Ծոփի, տոթի մեջ է անում, դիմանում է սառնամանիքին: Եվ շոգից ու ցրտից կարծրանալով՝ թըրծվում է: Ու երբ խփում ես ծառի բնին՝ մետաղի զնգոց է հանում, երգում է սանա:

Եվ, հավանաբար, մեր հետավոր նախնին մի օր խփել է ծիրանի ծառաբլրնին, տեսել, որ ձայն է հանում, կտրել է նրա ուսը, մշակել ու նվագել...

Դուդուկի մեղեդիներն այսօր մեզ են հասել շնորհիվ նրա կատարողների: Այդ մեղեդիները չեն կորել, դրանք ստեղծվել են մարդկային հոգու ներշնչման պահին և պահպանվել մինչև մեր օրերը:

Դուդուկն ունի ձայնանոցեր, մարդկային ձեռքերը՝ մատներ: Այդ մատները դիրիժորներ են կարծես: Նրանք լավ գիտեն, թե՛ ամեն անցքից ինչ հնչյուն, ինչ տեմպ կարելի է ստանալ:

Այդ մատները, սակայն, ինչքան էլ ճկուն, երիտասարդ կամ փորձված վարպետ լինեն, չեն կարող աշխատել առանց համագործակցման: Դրա համար էլ ամենաեականը ականջը, մաքուր լսողությունը, զգացմունքը, շրթունքը, երաժշտի բնկալումն է:

Այս ամենին պիտի զուգակցի դուդուկահարի սեփական զգացողությունը: Հավանում ես կամ ոչ, բայց անպայման կտարբերակես. նվագում է այս վարպետը: Ի՞նչ է դուդուկը: Ամեն մեկը յուրովի է զգում այն:

Դուդուկը սույն նվազարան չէ, դուդուկը հոգի է ու զգացմունք, երգ առանց խաբի, կանչ ու ճանապարհ: Դուդուկը մարդկային տրամադրություն-

ների հավաքական մի սիմֆոնիա է, որ գալիս է ձայնի երգեցողության, տրամադրության, մեղեդայնության ելևէջներից: Այն իր փոքր ձայնանցներում ամփոփում է մեր անցյալի լացը, երեկվա արցունքը, մեր ժողովրդի ոգին, այսօրվա պայծառ կյանքի հիմնը, մեր աներեր ուժը, հարսանիքների թափը, մեր ուրախության հորիզոնները, մեր սարած օրվա հմայքը:

Նշանավոր ու մեծ վարպետների՝ Մարգար Մարգարյանի, Լևոն Մադոյանի, Կարո Չարչոյլյանի, Խաչիկ Խաչատրյանի, Վաչե Հովսեփյանի, հետագայում նրանց փոխարինողների՝ Ջիվան Գասպարյանի, Սուրեն Թովմասյանի, Վլադիմիր Հարությունյանի, Մկրտիչ Մախաչյանի, Սերգեյ Կարսպետյանի, Արտավազ Տեր-Հովհաննիսյանի, Վլադիմիր Կրոյանի, Վաչե Արմենյանի, Գեորգի Մինասովի, Հովհաննես Կասրանի, այսօր երիտասարդ, շնորհալի երաժիշտ-դուրվաճարներ Եղիշե Մանուկյանի, Ռենիկ Իգնատյանի, Սարո Դանիելյանի, Ռուբիկ Հարությունյանի, Արս Դավաթյանի և մյուսների շնորհիվ այն մեղքել է աշխարհի բոլոր լեզվական պատմեջները, իր ձայնով բարձրացել ու բարձրացրել երկիր հաղթանակ՝ Հայաստանը:

Դուրովը կտրել է ամբողջ երկրագունդը: Հարսանիքներում ու խրախուճանքներում, տոնախմբություններում ու ծիսակատարություններում հնչող այլ փոքրիկ, փայտյա փողը համերգային քննահարթակ բարձրացավ:

Հարստացավ նրա երգացանկը՝ երգերից ու պարեղանակներից մինչև կոնցերտային ստեղծագործություններ:

Մեր լավագույն դուրովաճարներից մեկի՝ Հավական ԱՆԸ ժողովրդական պրոտիստ Վաչե Հովսեփյանի հիշատակին նվիրված ամենամյա՝ «Այս երեկը դուրովի հետ» հանդեսը Հայաստանի ժողովրդատի տան մեծ դանդիմն է քերտմ դուրովի սիրահարներին, արվեստի երկրպագուներին:

Չոր չեն ատում, որ երաժշտական ոչ մի նվագարան այնպես չի արտահայտել մեր ժողովրդի ապրումները, ինչպես դուրովը: Չէ՛ որ այն զուտ հայկական է՝ ճեղած մեր ժողովրդի պատմությունից:

Ժողովրդատի տանը տեղի ունեցող ավանդական այդ հավաքը՝ «Այս երեկը դուրովի հետ» միտք տվեց ստեղծելու մի գործ մեր անվանի դուրովաճարների մասին, կողք-կողքի դնելու նրանց կատարողական արվեստը, նայելու դուրովի անցած ճանապարհին, նրա վարպետների մեծ հաջողություններին՝ Աշխարհի քննահարթակներում: Միաժամանակ ցանկություն առաջացավ մեր ժողովրդի երաժշտական մշակույթի ելևէջներն ու մեղեդիները արտահայտող նվագարանների՝ բլավի, շվիի, ուրի, քանոնի, քամբիոի, սանթուրի, քյամանչայի, պարկապզովի կողքին տեսնել դուրովի՝ մեր ազգային նվագարանների ընտրանու յուրահատուկ դերը, որն անտակ գաղտնիքներ ունի իր մեջ ամբարած:

ՀԵՂՈՒՆԱԿ

ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

Մ Ա Ր Գ Ա Ր Մ Ա Ր Գ Ա Ր Ց Ա Ն



Ս Վ Ջ Բ Ն Ա Ղ Բ Ց Ո Ւ Ր

Նրան գիտեին և սիրում էին բոլորը՝ Չարենցից մինչև շուր ծախող պատանին: Վազում էին նրա ետևից, երբ փողոցով անցնում էր Մարգար Մարգարյանը՝ 30-ական թվականների ու 40-ականի սկզբների դուդուկի կնդրանի լեզվերը:

Էջմիածնեցի էր, միջանասակ, քիչ գեր, թեթևակի ճողատ, բարեհամբույր, միամիտ ու ազնիվ: Չկար մեկը, որ նրան վարպետ չանվաներ:

Մարգար Մարգարյանը առաջին պրոֆեսիոնալ դուդուկահարն էր: Նա եկավ ուստա Հարութի, Կարո Սարգսյանի դպրոցն անցած, սկսեց հարսանիքներից, հասավ ռադիոհաղորդումների կոմիտեի ժողովրդական գործիչների անասմբի մենակատարի պատվին և շարունակեց իր երթը Վարդան Բունու նվագախմբում:

Հիշենք պատմությունը:

Գաղթականները Մամուրի Գևորգի երգերը չէին երգում: «Էրգրի» երգերն էին երգում. «Որ խարս խորոտ էր, գետերն էլման էին ու տավրիկի, բարձր սարեր»:

Աղյուսաշեն քաղաքն իր երգերն ուներ՝ «Քուչա, քուչա ման էս գալիս ինչու՞՝ դու մեր տուն չես գալիս», պատեֆոնը նվագում էր՝ «Ես և իմ Մաշան ինքնակոնի մոտ» իսկ թատի վրա՝ մի անվերջանալի մուղամ: «Անգլիական

այդում», որ ամեն երեկո Վարդան Բունու թառամարների ու քամանջանարների նվագախումբը արնելյան ու եկիրուկական մեղեդիներ էր նվագում, իսկ Օարա Տալյանը կատարում էր Սալաթ-Նովայի և այլ գոտանների երգերը, էջմիածնացի պատանին սկսեց իր առաջին ելույթները:

Մարգար Մարգարյանը դուդուկի ու շվիի սիրահար էր: 30-ականի կեսերին Հայաստանի Ռադիոյի ժողովրդական գործիքների նորաստեղծ անսամբլում նա արդեն ուներ իր նվագի սեփական ձայնը:

Նա հետագայ կյանքից պատերազմի առաջին տարիներին: Բայց թողեց մի ժառանգություն, որ դուդուկի վարպետների համար այսօր իսկական դրակոն է:



Խողովանար Մարգար Մարգարյանը (ձախից՝ երրորդը) իր նվագախմբի հետ

Նրա ավանդը ժողովրդական երգերի առաջին նվագակցումներն էին: Ջայնի տեմբոլը, շրթունքի խաղերը՝ շրթնի արտաբերման վարպետությունը այսօր էլ, հրա մահից հինգ տասնամյակ անց, հիշվում են...

Մարգար Մարգարյանն առաջին էր, որ դուդուկը բարձրացրեց համերգային բեմահարթակ: Ելույթ ունենալով Ա. Մերանգուլյանի ղեկավարած ժո-

դավրյալան գործիքների անսամբլում, նա իր յուրաքանչյուր նվագով նվաճեց հանդիսատեսի սիրտը:

1939 թվականին հայ արվեստի և գրականության Մոսկովյա՝ փառատոնի տասնօրյակի օրերին Մարգարը նվագեց հավիական երգերի մի ամբողջ ընտրանի:

Հին երևանցիները այսօր էլ հիշում են Ամիրյան և Սպանդարյան, Աստաֆյան-Արովյան փողոցների վրա կատարված կինոթատրոնների սեանսները, երբ ամեն սեանսից առաջ հայտնվում էր ուստա Մարգարը ու իր նվագով կենդանացնում համր «Նամուս», «Գիքոր», «Ջարե», «Ժառ-Փուշ» կինոնկարները: Տարիներ անց, արդեն հնչյունային ֆիլմերում («Պեպո», «Ջանգեզուր», «Ասամի ձկնորսները», «Լեռնային հեղեղ» և այլն) նա նվագում էր ինքնամտաց ու պարզ, դրամատուրգիական և ուժիտրական մտահղացումների միացնելով իր նվագի ելևէջները:

Իր ստեղծագործական կյանքում նվագակցելով հայ երգի բազմաթիվ վարպետների, նա զգաց, որ դուրսըլը պետք է կատարելագործել: Եվ ստեղծեց իր դուրսըլը, որը մի քանի սանտիմետրով փոքր էր սովորականից, ձայնանցքերը մտեցրեց իրար, որի շնորհիվ բարձրագույն դուրսի հնչեղությունը:

Ամեն Բարաչանյանը հիշում է. «1938 թվականի գարնանն էր: Այդ ժամանակ սովորում էի Մոսկվայում, հայկական մշակույթի տանը: Երբ տուն եկա՝ Երևան, ինձ ասացին, որ Արամ Խաչատրյանն այստեղ է. նրան պատվիրել էին հավիական արվեստի և գրականության Մոսկովյան տասնօրյակի ստեղծագրային քալես գրել:

Նա իջել էր իր քրոջ՝ երգչուհի Թուշիկ Խաչատրյանի տանը: Գնացի: Նստած էր, իսկ կողքին նվագում էր դուրսկախարհ Մարգար Մարգարյանը կամ «ուստա Մարգարը», ինչպես կոչում էին նրան: Նա նվագում էր, Խաչատրյանը՝ լսում: Ես մտածեցի՝ քալես ուր, դուրսկն ուր: «Ամեն մի ստեղծագործություն ժողովրդական երգի ակունք պետք է ունենա, հետո հոր միայն երգահանի սրտի միջով անցնի ու նրա տաղանդով ստեղծվի»,—ասաց Արամ Խաչատրյանը»:

Հին երևանցիները հիշում են նաև, որ մեծ քանատեղծ Ելիշե Չարենցը գալիս էր անսամբլի փորձասենյակ ու ասում.

—Ուստա Մարգար, «գնացի՞նք...

Ու գնում էին Դարաշիշյակ, այսօրվա Ծաղկաձորը և բնության գրկում ըմբռնվում «Իմն էն գլխեմի» դյութիչ մեղեդին:

Չարենցը կանգնում էր ու արտասանում.

Էլի գարուն կգա, կբազլի վարդը,
Սիրելիսը էլի յարին կմնա:
Կփոխվի տարիքը, կփոխվի մարդը,

Բյրոյի երգն էլի սարին կմնա:
...Որիչ որտի քամար կհալի խունկը,
Կրացվի շուշանը, վարդերի տունկը,
Գուգալը լաց կըլի, կընկնի արցունքը,
Գերեզմանիս մարմար քարին կմնա:

**Մարգար Մարգարյանի գերեզմանաքարին աչտը հավերժանում են մեր
դուրոյի անմեռ ոնշյունները, որոնք նա պարզեց աշխարհին ու դարերին:**

¹ «Հայաստանի աշխատալորուհի», 1985, յՁ 5:

Լ Ե Վ Ո Ն Մ Ա Գ Ո Յ Ա Ն



ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Երբ բոլորեց տղայի տասը տարին մայրը նրան դուդուկ նվիրեց: Պատը երկար տարիներ նվագել էր այդ դուդուկով և կտակել թոռանը:

Այսօր այդ գործիքը Հայաստանի պետական ազգագրական թանգարանի ցուցանմուշ է այն բոլոր դուդուկների կողքին, որոնցով նա նվագել է:

Գրումրին հայ երաժշտության ու արվեստի օրրան է եղել՝ Արմեն Տիգրանյան, Ավետիք Խանանյան, էլ չենք ասում՝ Գոռան Օերան ու հայկական արվեստի գործիչների մի մեծ համաստեղություն:

1923-ին, երբ Լեհինականում քայվեց երաժշտական ստաջին դպրոցը, նա սովորեց դուդուկի վարպետների մոտ և իր առաջին քայլերն այնց փոքր քեմուս:

Ինչ պատմել նրա մասին. այսօր նա մեզ հետ չէ, և միայն մի քանի ձայնագրություններ ևն մնացել նրա մեծ սրբնօսիլը: Մինչև 1926 թվականը սովորելով երաժշտական դպրոցում, նա, շատ երիտասարդների պես, իր քախտը փորձեց այլ քաղաքներում. հաջվում՝ բժիշկ-երաժիշտ Ավանես Խոնկայանի նվագախմբում կարծես գտավ իր տեղը: Սակայն հայրենի Լեհինականը կանչում էր նրան:

Լսելով, որ կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը ցանկանում է ծանոթանալ նրա արվեստին, շտապում է հարազատ քաղաք: Այստեղ էլ նրա արվեստը կատարելագործվեց և նա դարձավ հայ դուդուկի այն կատարողը, որը հետագայում ունեցավ մեծ հաջողություններ:

Լևոն Մարդյանը ոչ միայն բարձրագրեց նվագարանի վարկը, այլև ընդ-
լայնեց նրա կատարողական հնարավորությունները: Նրա դուդուկը մեզ քերեց
հայ ժողովրդի երգի ազգային մեղեդիների մի մեծ համաստեղություն: Եվ
արդեն մեծ ճանաչում գտած Լևոն Մարդյանը 1939 թվականին, Մարգար
Մարգարյանի հետ, մասնակցեց հայկական արվեստի ու գրականության Մուս-
կովյան տասնօրյակին, արժանացավ կառավարական պարգևի և ստացավ
ստաջին մրցանակ:

Լևոն Մարդյանի դուդուկը հնչել է Միության և սփյուռքի մի շարք
բեմերում:

Լևոն Մարդյանը հինգ հարյուրից ավելի համերգների է մասնակցել մեր
համերապետությունում: Այդ համերգները մարդկանց ուրախություն են բերել
արվեստի և երաժշտության ուրախություն: Հիրավի ժողովրդական արտիստ
էր նա:

Պատմում են, որ մեծ վարպետ Ավետիք Իսահանյանը նրան մի ստիժով
պատմել է.

—Լևոն, արտասահմանից գալիս էի հաջրենիք: Ճամփին մի գյումրեցու
տեսա, նստել էր պատի տակ ու «Ալագյազ» էր երգում: Հարցրի, ասի—Էս
ի՞նչ երգ է: Պատասխանեց՝ ախպեր ջան, քո գործին գնա... Էս երգը դու չես
հասկանա, էս մեր երգն է, մեր ժողովրդի երգը: Գլուխս կախնցի, երջանկու-
թյան արցունքներով շարունակեցի ճամփես դեպի իմ գյուղը: Երկար եմ մը-
տածել: Հետո ցանկանում էի, որ «Էս ինչ գովում աշխարհ է» բանաստեղծու-
թյունը երաժշտություն ունենա: Դրա համար եմ քեզ կանչել, գուցե գտնենք:

Ու գտան: Ախպես ծնվեց՝

Միրեցի, յարս տարան,

Յարս տվին ու տարան... երգը:

Մինչև 1952 թվականը Լևոն Մարդյանն աշխատեց հայֆիլմհարմոնիա-
յում, նվագեց դուդուկ, սրինգ, շվի, գլուխա...

Այնուհետև աշխատանքի անցավ ուղիղի և հեռուստատեսության Արամ
Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների պետական անսամբլում:

Լևոն Մարդյանը իր նվագարանի, իր նվագի սիրահարն էր: Նա կարո-
ղանում էր ազգային երգը մատուցել նորովի, որով Մարգար Մարգարյանից
հետո դարձավ հեղինակություն: Լևոն Մարդյանը մեր ազգային երաժշտու-
թյան հպարտությունն է: Ինչ էլ որ նա նվագեր՝ նրա երգում կյանք կար:

Ան-մութ ամպեր ճակտիդ դիզվան

Դուման հագար, Ալագյազ,

Սիրտս արև էլ չի բացվի,

Սիրտս էլ դուման, Ալագյազ...



Արվաթանիկը և մտերիմ ընկերներ՝ ՀԱԽՀ մուլտիտանգան արտիստներ
Սողոմոն Սերաբյանը և Լևոն Մարտիրոսը, 1954 թ.

Եվ եթե դրան հաջորդում էին կյանքի և սիրո այլ երգեր, Մադոյանը
պրտի դուդուկը հնչեցնում էր կյանքի և սպրեկու դուդանցներ:
Լևոն Մադոյանի արվեստը հավերժ մնացել է մեր ժողովրդի հիշողու-
թյան մեջ: Նրա դուդուկի ձայնը այսօր էլ հուզում է, այսօր էլ արթնալու:



Լևոն Մադոյանի (ստան, ձախից՝ երրորդը) նվագակցությանը բազմաթիվ համերգներ էլ
տվել մեր ազգի լավագույն երգչուհիներ Մանիկ Գուգուրովան և ՀՍՄՀ ժողովրդական ար-
տիստուհի Սրաքսյա Գյուրգալյանը (կանգնած):

Ճրագ նվագով, զգում ես Շիրակի շնչունկան հովերի կանչը, Գյունրվա կար-
տը և ամենակարևորը՝ վարսեռի անկրկնելի, անմոռաց դուդուկի ձայնը:

Տաղանշավոր դուդուկահարի ջախի՞նձ հրա գարծրներ, ՀՍՄՀ վաստակա-
վոր արտիստ Նորայր Մնացականյանը գրել է. «Այն, ինչ հևուու ժամանակ-
ներից անխնայաբար եկել ու ամբարվել էր դուդուկահարների անդամուճանում,
բուրբուխն հրա որսւ ստացավ Լևոն Մադոյանի արվեստում: Նրա արպտող
փութը չցմաց այն ճանապարհով, որով անցել էին հրա նախորդները, այլ
լուրովի բնբնկով դուդուկի դերն ու նշանակությունը՝ նա դարս էկավ մի
լայնահուն պրտուսս, որն ասենայն իրավամբ հետագայում կրչվեց մադոյա-
նական: Դուդուկով կատարվող հայ երգն ու երաժշտությունը, որը մինչ այր
ժառտուցվել էին պարսկական մեղեդիների որոշ և երբեմն էլ հախտուն խառ-

նորոգվ, Մադոյանի մատների տակ վերստին հայացան և սկսեցին ճնշել ա-
վիկ կիրք, չափավոր ու միշտ չափի մեջ ներքին բարեկրթությամբ, ընդ ո-
րում՝ հաճախ ավիկի էպիկական, բան ջնարական շնչով: Մադոյանական այդ
կատարումներն անմիջապես գրավեցին հազարավոր սրտեր, փառք բերելով
ոչ միայն սիրված արտիստին, այլև նորովի հասկացված նրա դուդուկին: Այն
թշուր կարծիքը, որ մինչ այդ գոյություն ուներ դուդուկի վերաբերյալ իբրև
նեղ ու սահմանափակ նվագարանի, Մադոյան-դուդուկահարի վառ անհա-
տականության շնորհիվ ճօղս ցնդեց: Դուդուկը սովորական կենցաղից բարձ-
րացավ մինչև «պրոֆեսիոնալ լսարանները» և արևելյան նվագարանների
մեջ ճանաչվեց իբրև փառամեղ թագուհի: Դա Լևոն Մադոյանի պատմական
ծառայությունն էր»¹:

¹ «Սովետական արվեստ», 1986, 3, էջ 31:

**Կ Ա Ր Ո
ՉԱՐՉՈՂ ԼՅԱՆ**



ԳՈՒԳՈՒԿԻ ԱՆՓՆՈՒ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Միշտ չէ, որ մասնագետներն անգամ կարողանում են տարբերել դուրս-կահար-կատարողին: Ո՛ր է նվագում: Սակայն Կարո Չարչոլյանի նվագն ստանձնանում էր թողորից այն ստեղծագործական ինքնագրով, որը չի կարելի շփոթել: Նրա նվագը այնքան մաքուր ու անաղարտ էր, տարբեր տոնա-նայություններում նա կատարման իր սեփական ետ ուներ՝ նվագում էր հավա-սար և անցումներում մնում իրեն շատ հարագատ:

Նրա դուդուկի տեխնիկական հնարավորություններն անգերազանցելի էին կատարման յուրաձևությամբ, ձայնի որակի արտաբերմամբ: Բազմակող-մանի զարգացած դուդուկահար էր, գիտեր նոտաները:

Ուզելի Հաջիբեկովի համահեղինակությամբ դասափոք ցրեցին դուդու-կի մասին: Հանդես էր գալիս Բաքվի ժողովրդական գործիչների պետական նվագախմբում: Ծնվել էր Լեհինականում, շարունակել իր ստեղծագործական գործունեությունը Վարդան Բունու անսամբլում:

Երկար տարիներ նվագել է Ավանես Իսմիլյանի (Հովհաննես Հովհան-նիսյան) փառաբանված խմբում, 1939-ին արժանացել համամիութենական մրցույթի դափնեկրի պատվավոր կոչման, նվաճել հանդիսատեսի սերն ու միացմունքը:

Կարո Չարչոլյանին յորսմատով էր ինստրովիզացիայի արվեստը: Ուսանելով հայրենի Լեմինականում ու անցնելով Փաճոյ Կարոյի դպրոցի դասարանը, նա Սովետական Բանակում ծառայելու տարիներին կազմակերպեց ժողգործիքների մի անասնով, որտեղ ընդգրկված էին և՛ դուդուկը, և՛ շվին, և՛ դիլլը, և գրուման: Կարո Չարչոլյանը նեոավոր ակներում ցույց տվեց, որ մեր արվեստի այդ նվագարանները արտամայտում են հոգուց բխող ապրումները՝ որակաբարձներն ու տիրաբերողները:

Մի նեսուսքքի որակը Կարո Չարչոլյանի կենսագրությունից. Համերգ էր: Բարվում նշանավոր երաժիշտ, Արրբեջանական ՍՍՀ ժողովրդական արտիստ, թատևար Կուրբան Գրիմովը բեմ բարձրացավ ու ծաղկեփունջ մատուցեց Կարո Չարչոլյանին: Վերջինս նվագում էր Սայաթ-Նովայի «Գուն Էն գլեներ», նվագում էր ինքնամոտաց և վարպետորեն:

—Վարպետ,— դիմեցին Գրիմովին,— տարիքն ասած ու նշանավոր երաժիշտ էք, բայց բեմ եք բարձրանում ինչպես երիտասարդ դամհար և գրովի խոնարհում մի ջամեկի ստաջ:

Կուրբան Գրիմովը պատասխանեց.

—Եթե դուք էլ կարողանաք Կարո Չարչոլյանի նման նվագել, ես պատրաստ եմ աշխարհի բոլոր ծաղիկները բերել բեմ ու մատուցել ձեզ՝:

Ինչպես նշեցինք, Կարո Չարչոլյանը ինստրովիզացիայի մեծ վարպետ էր: Երբ նա նվագում էր Շերամի «Անպերն կլան...», «Մամկաչ» և զուգակցում «Չորսն բայաթին», անսովոր ականջը չէր կարող որոշել, թե նա ինչ գործիքի վրա է նվագում շվին, դուդուկի, կլարնետի, բլուլի, թե՛...:

Նա տիրապետում էր հայկական բազմաթիվ նվագարանների:

Ծատերը հիմա կենդանի չեն 1937 թվականի սպրիլյան համերգի այն հանդիսատեսներից, երբ համերգը ավարտվեցուց հետո Կարո Չարչոլյանը 30 րոպեից ավել, հրանց պամանջով, միացնում էր իր նվագով:

Ի՞նչ գործեր էր նա կատարում արևելքի լավագույն կոմպոզիտորների ստեղծագործություններ, Մոցարտ, մեր Հովվի կանչը, «Սկերցո» և «Դրելյուս», «Դիվերտիսմենտ»: Եվ, իհարկե, ժողովրդական «Սիրեցի, յարս տարան»:

Կոմպոզիտոր և երաժիշտ Հրանտ Թորոպանը հիշում է.

1948 թ. ամռանն էր: Գերմանական պատվիրակությունը բարեկամական այցով եկել էր Բաքու: Ինձ բախտ վիճակից ներկա լինել այն հանդիպմանը, որ կազմակերպվել էին աղբյուրեանցի մեր բարեկամները:

Կարոն նվագեց Բեթհովեն, Մոցարտ, արրբեջանական ու հայկական խաղիկներ: Գերմանացի հյուրերից մեկը մոտենավ հրան, վերցրեց դուդուկն ու ասաց.

¹ Դեպքին ակամատես է եղել ՀՍՍՀ վատակավոր արտիստ դուդուկահար Խաչիկ Խաչատրյանը:

—Այս ի՞նչ գործիք է...
—Ռուդոլֆ է:
—Եվ պրանով կարելի՞ է Բեթթովենն նվագել:
Կարո Չարչոլլյանը պատասխանեց.
—Աշխարհի բոլոր կոմպոզիտորների ստեղծագործությունները կարելի է դուրսևորել կատարել:
Կարո Չարչոլլյանը դուդուկի սամանափակ ձայնածավալով կարողանում էր իր վիրտուոզ կատարողակությունները, բարդ իմպրովիզացիոն մանրալուրջ, զարմանալի տոնայնական անցումների միջոցով ճնշեցնել ժողովրդական մեղեդիներ, դրանց դարձնելով ավելի հետաքրքիր, հարուստ կատարողական ոճի բարդ ստեղծագործություն, որը յուրատեսակ էր միայն իրեն՝ Կարո Չարչոլլյանին: Կարո Չարչոլլյանի նվագը ճնշեց իր սեփական հոգու նուզերի, տրամադրությունների և ասպրումների իրական արտահայտությունն էր: Նա իր նվագով ունկնդրին տանում էր իր մեղեդիների աշխարհը, կրք մարդը վերանում է իրական կյանքից և ասպրում հրա ճնշումների զմայլքով:
Յալոք այդ անկրկնելի կրածաշի բոլոր կատարումները մեզ չեն հասել՝ ժամանակի ձայնագրման տեխնիկայի սուղ հնարավորությունների պատճառով: Սակայն հրա թողած այդ քիչ երաժշտական ժառանգությունն էլ հնարավորություն է տալիս պատկերացնել այդ վիրտուոզ դուդուկահարի մասին, որը մինչև վերջ հարազատ մնաց իր հոգու ձայնին:
Այսօր, տարիների հետվից, լսելով Կարո Չարչոլլյանի ձայնը, մենք գնահատում ենք ոչ միայն հրա արվեստի վաստակը, այլև հրա թողած ժառանգությունը, որն այնքան թանկ է մեզ համար:

**Խ Ա Ջ Ի Կ
Խ Ա Ջ Ա Տ Ր Յ Ա Ն**

ՀԱՅԻ ՎԱՍՏԱՆԿԱԳԻՐ ԱՐՄԻԱՍ



ԸՆԶՅՈՒՂՈՒՄ Է ՏՈՎԱՆՍԱՌԸ

Հինա էլ Բջնին միշտում է որպես երածիշտ կատարողների գյուղ, հատկապես դուրսի տոմսական ավանդությունը շարունակող մի մեծ օջախ: Այդ հնագույն և հնավանդ գյուղի բնակիչների մի սովոր մտալ՝ շուրջ 100 հոգի, կրում են Խաչատրյան տոմսիկ ազգանունը, և նրանցից շատերն են հարազատացել ազգային հարստություն դարձած այս գործիքի հետ: Իրոք մեծ է Խաչատրյան տոմսաճյուղի սերը դուրսի նկատմամբ: Բջնի և հարևան գյուղերի ծերունիները իրենց պապերի միջոցով հաստատում են, որ «ավալի» ժամանակներում շուրջակա գյուղերից գալիս էին Խաչատրյան երածիշտներին հրավիրելու իրենց խնջույքներում, տոնախմբություններում ու հարսանիքներում նվագելու համար: Սեր օրերում էլ հաճախ կլմես.

- Վարպետ Հարություն, հարսանիք կա:
- Վարպետ Սարգիս, որդու ծնունդն է:
- Վարպետ Սեդրակ, տղան բանակ է մեկնում:
- Վարպետ, վարպետ, վարպետ...

Եվ այսպես անվերջ: Եվ նույնիսկ եթե մի քանի գյուղերում միաժամանակ

քեֆ ու ուրախություն էր, Խաչատրյան տոհմի կրած ժշտները գոհացնում էին բոլորին:

Տոնիկ կրած ժշտ Խաչիկ Խաչատրյանի արծաթյա օղակներով զարդարված դուրովը պահվում է որպես այդ գերդաստանի մատուցող: Արծաթյա յուրաքանչյուր օղակը որևէ մրցույթի հաղթանշան է, մի մրցանակի պատմություն:


... Դեռևս 20-ական թվականներին վարպետ Հարությունը համարվում էր Հայաստանի լավագույն դուրովահարներից մեկը: Իսկ 1939-ին, երբ նա հասել էր կատարողական բարձր մակարդակի, մասնակցեց Մոսկվայում կազմակերպված Հայաստանի արվեստի և գրականության սասչին տանջությանին և իր պատվավոր տեղը գրավեց հայկական ուսիտի ժողովրդական գործիքների անամբում:

Երաժշտական տոհմանտի անդամները տարիներ ի վեր մասնակցել են Հայաստանում անցկացվող հանրապետական մրցույթներին, փատատներին և օլիմպիադաներին ու միշտ էլ գրավել են պատվավոր տեղեր: Խաչատրյանների տոհմի վարպետ Հարությունի գործը այսօր ժառանգել և պատվով շարունակում է Հայաստանի ուսիտի և հետաատատեսության Արամ Մերանգույանի անվան ժողովրդական գործիքների վատակավոր անամբի մեհակատար-դուրովահար Խաչիկ Խաչատրյանը՝ «Բջնեցի Խաչիկը», ինչպես մտերմաբար նրան կոչում են ընկերները:

Դուրովի կատարողական բարդ տեխնիկային վարպետներն տիրապետելը, այս նվագարանի միջոցով ժողովրդական շունչն ու ոգին անաղարտ արտահայտելու հմտու կարողությունը Խաչիկ Խաչատրյանին վաղուց դարձրել են Հայաստանի կրած ժշտ-կատարողների և կրած շաատակների սիրելին: Ազգային օպերային ներկայացումները անպայման զրգակցվում են նրա մեհանակաղով: Խաչիկի դուրովի թավշյա ձայնը բազմես հնչել է հանրապետության և կենտրոնական ուսիտի ու հետաատատեսության, հայկական, վրացական և ադրբեջանական մի շարք կինոնկարներում: Կա որպես դուրովահար-մեհակատար փայլեց Ուրբեկի մի «Հավաղի համար» և «Հրաշյա Ներպիպան» ֆիլմերում:

Վարպետ Խաչիկի տունը մի իսկական թանգարան է, ուր նա հպարտությամբ ցուցադրում է դուրովների, շլիների ու սրինգների մի հարուստ հավաքածու, որը նա տարիների ընթացքում ժողովել է Հայաստանի տարբեր գյուղերից ու քաղաքներից: Այս հարուստ հավաքածուի մեջ այսօր առանձնահատուկ տեղ է գրավում եղեգնյա մի սրինգ, որն առանձնապես թանկ է վարպետ Խաչիկի համար: Այդ սրինգը մի հուշ է Մեծ Հայրենականի տարիներից:

... Մովետական րանակը ժամանակավորապես նամանքում էր, թշնամուն էր թողնում Կերթ թերակղզին: Վերջինը հետամում էին հետապուղան-



րը: Նախանցը հսկելու գործը հանձնարարված էր չորս հետախույզների, որոնց մեջ էր և տասնութամյա Խաչիկը:

— Մենք ձեր հետևից կգանք գիշերով, — սասց հրամանատարը: — Երբ մոտենալու կլինենք, մեզ ձայն կտաք դուրսկողմ:

Հետախույզները ստանալով հանձնարարությունը թաքնվեցին եղեգնոտում: Մինչև գոտկատեղը ջրի մեջ թաղված, նրանք սպասում էին: Կեսգիշերին, լուսության մեջ շունչները պահած սպասում էին, երբ պատահեց անսպասելին: Կորալ դուրսկողմ: Այն թանկագին նվագարանը, որը Խաչիկին նվիրել էր Հարություն պապը՝ թանակ ճանապարհելիս: Ի՞նչ ամեն: Շուտով կմոտենան մերոնք, պետք է ազդանշան տալ: Խաչիկը գիշերային մթության մեջ եղեգնից պատրաստեց մի նոր դուրսկողմ: Եվ վճռական պահին հնչեց դուրսկողմ:

Բնքնաշեն գործիքն անցավ ուզված ճամփաներով մինչև հայթանակ: Ռազմիկ-երաժշտի կյանքի այս դրվագը ոչ միայն նրա կյանքի իրադարձությունն է, այլև պատերազմից մնացած հուշ, հաղթանակած մեր ժողովրդի հերոսական կյանքի մի հուզիչ պահ:

Սույլ կատարող երաժիշտ չէ ՀՍՍՀ վաստակավոր արտիստ, դուրսկողմ-հար Խաչիկ Խաչատրյանը: Նա սիրով իր փորձն ու հմտությունը փոխանցում է երիտասարդ դուրսկողմ-հարների նոր սերնդին, սեր արթնացնելով նրանց մեջ դեպի ազգային սիրված, պոտանույց նվագարանը:

Խաչիկ Խաչատրյանը դասավանդում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, Էջմիածնի մանկավարժական երաժշտական ուսումնարանում և այլուր: Նա այսօր էլ ջանք չի խնայում ժողովրդական ազգային նվագաշանների պրոպագանդման, ժողովրդական արվեստի զարգացման համար:

**Ս Ո Ւ Ր Ե Ն
Թ Ո Վ Ս Մ Յ Ա Ն**

ՀԱՅԿ ՎԱՍՏԱՆԿԱՅԻՆ ԱՐՄԻՅԱ



ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Հայրը որմնադիր էր և երաժիշտ, արհեստ էր նվագում: Որդին էլ հրանքից
նվագել սովորեց:

Տղան լսում էր հոր նվագը և աչքերի առջև շունչ էին տանում հայրը
լեռներն ու հովիտները, լուսնյակ գիշերների փառը, տեսնում էր հորի մշա-
կին, որ ելնում էր գիշերով հերկելու հարկեն հողը, պատկերացնում հայրը
աղջիկների ննզամկուն պարը, լսում Սարգս-Նովայի չքմառ երգերը:

Աշխարհումս այն չիմ քաշի,
Քանի վոյր ջան իս ինձ համա...
Անմահական ջրով լիքքն
Օսկե ֆինջան իս ինձ համա...

Այդ «Օսկե ֆինջանը» ոսկե դուրդուկը, Սուրեն Թովմասյանը էր օր «հա-
վըշտակեց», երբ ութ տարեկան էր:

12 տարեկան էր, երբ արդեն նվագում էր այնպիսի վարպետների հետ,
ինչպիսիք Մարգար Մարգարյանը, Լևոն Մադոյանը, Կարո Հարջոլյանն
էին...

Սուրիկը սկսեց նվագել ռադիոյի ժողովրդական գործիչների անամբլում, միաժամանակ կոնսերվատորիայում դուդուկի դասերի էր հաճախում:

Մեղեդին ընդհատվեց պատերազմով: Եվ որպեսզի մարդկանց երգն ազատ ճախեր, թևեր առնելը կապույտ, անամպ երկնակամարում, շատերի հետ միասին գործող բանակ մեկնեց ճակ տակալին պատանի Սուրեն Թովմապանը:

Երկու լավ դուդուկ, որ նվեր էր ստացել իր վարսյետներից, պահ տվեց իր արվեստի երկրպագու վարորդ Գուրգենին, մեկն էլ վերցրեց հետը և շնագրի մեջ նվագեց իր հետ ճակատ մեկնող հայրենակիցների համար:

Մի առավոտ զարթոնեց ու տեսավ, որ շարդվել է դուդուկի եղեգնա պիպիչը: Տիրեց՝ գուցե վատ նշան է... Պատրաստեց եղեգնա մի շվի, որից այլևս չբաժանվեց, և նորից նրա նշանը հնչեց վազոնում, սիրված մեղեդիններ հավատով լցրեցին իր ու ընկերների սրտերը:



Միր ղի չարեյամի՝ վաչկ Հովսեփյանի հետ

... Սնդեկների մատուցներում չէր դադարում հրանոթների կրակը: Սովետական հրամանատարությանը «լեզու» էր պետք: Արևելքից բզկտված ճանփեղով սողում էին հետախույզները: Սողում էին դեպի թշնամու կողմից գրավված հողը, որը իրենցն էր...

Հրթիռը օդ է պահում: Ծրջապատը վտանգավոր լուսավորվում է ու նորից սթոնում: «Ան հովազի ցատկը» կատարելու էր Սուրենը: Ուժեղ մի ուսուցումով պատանի հետախույզը նետվում է դեպի ժամապահը: Պայքարը կայ ճ է տևում: Մի քանի րոպե հետո 331-րդ դիվիզիայի հետախույզ Սուրեն Թովմապանը՝ բոլորի կողմից սիրված Սելյուժան, ետ է սողում իր հետ բեռնով «լեզուն», որը կարևոր տեղեկություններ է տալիս: Իսկ հայրենիքը բարձր է գնահատում զինվորին: Սուրեն Թովմապանը պարգևատրվում է Հայրենական

մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: Վաշտում միակ հայը Սուրենն էր: Նրա միջոցով ուսս, թաթար, դազախ, ուկրաինացի զինվորները ճանաչեցին հային, հայ ժողովրդին, նրա անցյալի դառը ճակատագիրը: Այդ սերը կրկնապատկվեց, երբ Սուրենը եղևգից պատրաստած շվին մոտեցրեց շուրթերին և նվագով պատմեց իր ժողովրդի ճակատագրի մասին:

Երբ հոգևած զինվորները հավաքվում էին քիմիաժամ, նա «սասարգի» ճառքից հանում էր դուդուկը և նվագում: Ու զինվորները երագում էին, երագով տուն դառնում, բացում հարազատ տան դռները, տեսնում սիրելի, կարոտալի դեմքեր:

—Ինչի՞ մասին է քո նվագը, —խարցնում էին պլազգի զինվորները:
—Հայաստանի մասին, մեր ժողովրդի մասին, հայրենիքի մասին, հայոց աղջիկների մասին...
Մարտերից մեկի ժամանակ զոհվեց ... դուդուկը: Դա մեծ կորուստ էր ոչ միայն Սուրենի համար, այլև ամբողջ վաշտի: Հայց ուզմիկ-երամիշտը նորից շվի պատրաստեց ու էլի նվագեց: Արևելյան Պրոսպայում, մարտական ստաշարաններից հետո նա ստացավ «Փառքի 3-րդ աստիճանի շքանշան», ու շարունակեց իր ուզմաները: Բելոռուսիայի Օրշա քաղաքի մոտ ևս նրկու «լեզու» բաժին ընկավ Սուրենին: Եվ հորից՝ մարտական պարգև:



Պոլոտնաբաններ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Սուրեն Թովմազանը, Խաչիկ Ավագյանը (ստան), Գագիկ Գյուրջյանը իրենց սիրելի դեկավար, կրամշու Արմ Ավետիսյանի մոտ (Կանցնած, ձախից՝ երկրորդ)

Չորրորդ անգամ վերավերվելուց հետո դաշտային հուպիտալից հրանթիկունք տեղափոխեցին: Հենց այստեղ էլ, Երևանի զինվորական հիվանդանոցում, 1945-ին նրան ացեղության եկավ Արամ Մերանգույանը: Ծննտի վերջը դեռ չէր լավացել, սակայն Մերանգույանն ասես նշանակություն չտվեց դրան:

—Սուրեն, արի մեզ մոտ՝ անասնո՛ր, նվագի՛ր,—ստաջարկեց անվամի երաժիշտը:

Ու «հետախուզության գերագանցիկ» Սուրեն Թովմասյանը վերադարձավ ու սկսեց նվագել հարազատ անասնո՛րում: Նա ամբողջ հոգով անձնատուր եղավ իր սիրած գործին: Վարքոյ Գուրգենին պահ տված գործիքները հնչեցին նոր եռանդով, նոր ոգևորությամբ: Եվ հավկական մեղեդիները «Մանկալից» մինչև «Ան-սև աչերը» կրկին ըմբռնեցին հայ ոմկնդիները: Եվ ոչ միայն հայ: Հայաստանի երգի-պարի վաստակավոր անասնո՛րի հետ Սուրենին ոմկնդիներից Մովսիսի, Բազմի, Թրիմիսի հանդիսականները: Նա շտապ տիրապետեց նաև սաքսոֆոնին: Եվ արևելյան երաժիշտների քյուրյում քսանհինգ տարվա նրա աշխատանքը երաժշտական «խաղաղ գոյակցության» օրինակ է արևելյան և եվրոպական գործիքների, երգերի ու մեղեդիների հետ: Երկուսի մեջ էլ համագիշ են վարպետ Սուրենի նվագն ու ճաշակը: Երաժշտաներ հասարակությանը բազմիցս են հուզել նրա բարձր արվեստով դուրսևորվ կատարած «Կոունկը», «Ինոն Էն գլխենը», կլարնետով՝ «Ան աչերեն», գնչուական «Փոքրիկ ծաղիկը», սաքսոֆոնով՝ ամերիկյան պարային դիֆուլ Կո:իշ շատ գործեր:

Սուրենը հավկական երաժշտական ավանդները ճաշակով վերականգնող երաժիշտ է: Անկրկնելի է նրա՝ դուրսևորմանի վեցյակի նվագակցությամբ Սալաթ-Նուվայի «Աշխարհունս սախ չիմ քաշի» երգի կատարումը, որը բազմաձևության մի հյուրեղ ու գեղեցիկ օրինակ է: Հուզականություն, հավկական ժողովրդական մեղեդիների ներքին զգացողություն. սրանք են բնորոշ Թովմասյանի կատարումներին:

Նրան հաճախ կարելի է տեսնել կատարել Էրանից, լսել ուսիտով: Նրա գործիքի թավշյա ձա:նը միշտ տարբերվում ու հոգեհարազատ է բազմաձևագար ոմկնդիների համար:

Որպես վաստակած երաժիշտ, վարպետ կատարող, նա կրթել է երաժիշտների մի ամբողջ ընտանիք, որոնց մի մասը հիմա խմբերի դեկավարներ են, հանրաճանաչ կատարողներ, երգիչներ (Վ. Հարությունյան, Ա. Հովհաննիսյան, Խ. Ավագյան, Գ. Սիմոնյան, Ա. Վարդանյան, Ժ. Գաբրիելյան, Յ. Սահակյան, Ա. Միմապյան, Խ. Ծուշանյան, Է. Դավթյան, Վ. Հարությունյան, Բ. Թովմասյան, Ֆ. Ավոյան, Կ. Ավոյան, Եյ Մատթոյան):

1979 թվականի գարնանը Ա. Խաչատրյանի անվան մեծ համերգաբանի ընձանարթակը տրամադրվել էր հայ դուրսևորմաներին: Երևանից, Լենինա-

կանից, Արքեպեանից այստեղ էին հավաքվել մասնակցելու «Մեր դուռնիկի ճորովելը» խորագրով մեծ համերգին: Այստեղ էլ, ինչպես միշտ, ստանձնահատուկ ոնչեց Սուրեն Թովմազյանի դուռնիկը:

Նա վարպետորեն կատարեց Սալաթ-Նովայի «Գուն էն գլխեն», Վաչե Հովսեփյանի «Երեքնուկ» և «Վերստարմիր» երգերը, արժանանալով ծափերի և ծաղիկների:

Ամեն տարի մայիսի 9-ին նախկին զինվոր Սուրեն Թովմազյանին շքանշաններով պարգևատրելու էր Մեծ Հայաստանի օրվա առթիվ:

Երկար տարիներ շնորհալի երաժիշտը եղել է ժողովրդական դեկորատիվ երեսանի քաղաքային սովետի գործկոմի կուլտուրայի բաժնի ժողովրդական գործիքների կրթչության շրջանի գեղարվեստական ղեկավարը:

«Սուրեն Թովմազյանին ես ճանաչում եմ 40-ական թվականներից, — ասում է Հաջաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էլվարո Միրզոյանը: — Այն ժամանակ տեխնիկական հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Եվ կենդանի, քարո կատարումների մեջ Սուրենը միշտ էլ մի նոր նրանց, նոր գույն էր գտնում: Ես ճիշտ եմ հայ երաժշտության օրերը 1974-ին՝ ընտանիքի Սալաթնուկում: Սուրենը զարմացրեց և հիացրեց բոլորին: Ես նրան դատում եմ մեր պրոֆեսիոնալ: լավագույն կատարողների շարքը, մի դուռնիկահար, որ շատ սիրված է ու շատ շնորհալի: 12 տարեկան հասակում նա Մերանդոլյանի կազմած խմբում փայլեց որպես զարմանալի կատարող»:

«Երգի-սարի անսամբլում լսելով նրա դուռնիկը, թողեցի շվին ու անգլիսի դուռնիկի: 1935-ին, երբ վերադարձվելուց ճիշտ ուսգնահատից նորից բնի ելավ, զգացի, որ դուռնիկահարի համար կարևորը միայն լավ շուրթեր, լավ մատներ, լավ լսողություն ունենալը չէ: Այլ նաև նորը ճաշակ, նորը հոգի, սշխատասիրություն: Մեծ հուզմունքով եմ ամեն անգամ լսում Սուրենին: Այս խոսքերը ՀՍՀՄ ժողովրդական արտիստ, դուռնիկահար Վաչե Հովսեփյանը ասել է Սուրեն Թովմազյանի ճեռուստատեսությանը ոնչանց ճեղհնակալին համերգի առթիվ:

Այո, երբ Սուրենի կատարմամբ ոնչում եմ «Մայր Արաքսի սպիերով», «Գուն էն գլխեն», կամ ոնեց իր ճեղհնակած՝ «Գո սիրո ճանիսն», «Իմ երազ» երգերը, հանդիսատեսը չի կարող անհատորոջ մնալ:

...Շատ անգամ է հանդիսատեսը նրան ծափողջունով լինելու: Շատ անգամ է էր հիաստունը՝ արտանայտել: Ամա նրա հանդիսատեսներից մեկի, մեծ գրողի, մեծ մարդու, մեծ արվեստագետի կարծիքը՝ «Ժամանակ 60 միոն» գրքի անվանաթերթում՝ «Մեծ դուռնիկահարին, մեծ մարդուն՝ Սուրեն Թովմազյանին, հիացմունքով և անկեղծությամբ. **Վիլյամ Սարդյան**»:

**Վ Ա Ջ Ե
Հ Ո Վ Ս Ե Փ Յ Ա Ն**

ՀԱՅԻ ժողովրդական արտիստ



ՆՐԱ ՍԻՐՏԸ ԼԵՆՆԵՐՈՒՄ Է ...

Մեծ Հայրենականի տարիներն էին: Երկիրը պատերազմի մեջ էր: Մարտիկ աշխատում էին ռազմաճակատի համար:

Նաթեր տասը իր «տրեբորդ գրպանում» հավաքած, տրորված ու քրտղանած վերջին թղթադրամները տվեց տղային:

— Հաց կտանես:

Փորրիկն ուշացավ: Տանը անճանապարհ: Երբ եկավ, վախից տուն չմտավ, բարձրացել էր ընկուզենու կատարն ու նվագում էր հացի փոխարեն շուկայից գնած շվին:

Այդ օրվանից, երբ Նորբի վրա իջնում էր երևո՞ն, ու խտանում էին ստվերները, անցորդներն ականա դանդաղեցնում էին քայլերը:

— Վաչե՛ն նվագում է...

Զարմանալի բան է երաժշտությունը: Մոզական ուժով իրեն էր ձգել պատանուն: Ժողովրդական երգի մեղեդու անպատկեր հնչյունները մտել էին նրա ճուղու մեջ, դարձել հարսզատ ու հանգիստ չէին տալիս: Իրկնային զեփուրը մեղմորեն ավելում էր ու միանում շվի երգին: Ու տղային քվում էր, թե շվի նվագը հենց այդ զեփուրից է ծնվում, բարձրանում ու ասվաճում թեթև, ինչպես զեփուրը:


— Վաչե՛...

Տղան չէր լսում: Նրա համար ուրիշ աշխարհ չկար՝ երգի աշխարհից բացի: Եվ այդ բույեներին նրան թվում էր, թե կրանքը շվիի խնամատրուսն է, ստանց որի հնարավոր չէ սարել:

— Վաչե՛, ոչ է, իջիր՝ դասերդ մնացին...

Տղան դժկամ, խռով հոգով իջնում էր բնկուզենոց և անհամբեր սպասում հացորդ օրվան: Սպասում, որ նորից իջնի երեկոն ու նորից տրվի իր Վախարդական նվագարանին:

Ո՛վ վառեց նրա հոգում այդ սերը: Ո՛վ ստիպեց նրան ստացիմ անգամ



Ծնվում է երգը...

կրանքում խաբել տատին և հացի փոխարեն շվի գնել: Ո՛վ: Պապը մի օր փող տվեց թոռանն ու ասաց.

— Վաչե, բազա, դուդուկ ստ քեզ համար, ես դուդուկի ձենը շատ եմ սիրում:

Երկու տարի անց Վաչեն բնորոնվում է Ղ. Ղուկասյանի անվան պիոներների ու դպրոցականների պալատի ժողովրդական գործիքների անսամբլը, որը ղեկավարում էր Միշա Զաղալյանը:

Ղեկավարը անմիջապես նկատեց սանի երաժշտական բնորոնակությունները: Ծուտով նրան թույլատրվեց մենամիջակերով մանրես գալ համերգների ժամանակ: Մի համերգի ներկա էին Արամ Մերանգուլյանը և Մարգար Մարգարյանը:

— Ապրես, լավ էր,—ասաց վարպետ Մարգարը:— Բայց շարունակիր սովորել: Դուրսից պետք է խոսի մարդու սրտի նետ, հոգու նետ... Էս մեկը լավ հիշիր...

Ճանաչված երաժշտի գովեստներն ու խորհուրդների ոգևորեցին արդեն իր նվագարանին նվիրված պատանուն:

Հայաստանում այդ ժամանակ մեծ ճանաչում ունեին դուդուկահարներ Ատոն Մարտյանը և Մարգար Մարգարյանը: Արդրեցանի առիթով հաղորդում էր դուդուկի վարպետ Կարո Չարչոյլյանի ձայնագրությունները:

Անդրկովկասում հայտնի դուդուկահար Կարո Չարչոյլյանը Վաչեի ճեռակա ուսուցիչը դարձավ: Տղան ժամերով չէր հեռանում նվագարկչից, լսում էր ինքնամոռաց, սովորում հրիճն, բարձր ու հուզիչ արվեստը և երգում համդիակ իր վարպետին: Դա հրամ հաջողվեց միայն տարիներ անց...

...Պատերազմի ծանր տարիներին Վաչեն և նվագում էր, և որպես խառատ աշխատող երեսնորդ էլեկտրաստեղծիկական գործարանում:



Վաչե Հովսեփյանը Թ. Արարեցանի առջև երգի-պարի վեստավարի անամարի մեծակատար-դերձանար Հրաչյա Աբգարյանի և դուդուկահար Բենիկ Իգնատյանի նետ.

1944 թվականին նա ընդունվեց Ռադիկոմիտեի ժողգործիքների անսամբլը, որտեղ հասունացավ և հմտացավ յուրացնելով դուրսի կատարողական առանձնահատկությունները, տեխնիկական բարդությունները:

Անասնի շնորհաշատ դեկավար, կոմպոզիտոր Արամ Մերանուվյանը ջաշեր ու եռանդ չիմայնջ Վաչեին իսկական նվագող-մենակատարի բարձր աստիճանին հասցնելու հասար:

26-ամյա Վաչեն ընդունվեց Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ու ուսմանը: Այստեղ նա տեսական գիտելիքներ ձեռք բերեց, որոնց օգնեցին նրա՝ ձայնագրելու, խմբերույն երգացանկ կազմելու շլիժ, ուղղուկի ու կարճետի հասնելու:

«Ես շատ բա՛ն սովորեցի Արամ Մաղոյանից,—պատմում էր Վաչեն:—Օ՛րջս է սովան, որ նվագելու ժամանակ դուրսից պիտի «վախենա» կատարողից: Իսկ Մաղոյանի դատուկը պարզապես «չպարս էր» նրանից: Անփորձ էի, կաշկանդվում էի: Մաղոյան դրեկ էի ինչ գնով էլ լինի՝ սովորեկ վարպետանալը»:

Նորից սովորեցի, սովորեցի՝ վարպետության բարձունքին հասնելու համար:

Ծաղիկի ժողովրդական գործիքների անսամբլն իրոք ոչ մի իսկական երաժշտական դարոց դարձավ Վաչե Հովսեփյանի համար:

Զիմար էս, կրուսնալ մի,

Մեր դռներն հեռանալ մի...

Ծաղիկի ակթեմիայով հարդում էր կոմիտասյան համհարեղ երգի հնչյունները Վաչեի րույնով: Մեղծորոք ծորում է դուրսից, սանա հագացքի առջև կատարածուշ ապարուշի միջից մեկ թախանում, մեկ ծիծաղում է հեզանալ հայունին:

Այնքան կյանք, այնքան հմայք ու անմիջականություն կա նրա դուրսի հնչյուններում, որ համակ ուշադրություն դարձան լսում էս, մտացած բեզ, շրջապատը, ամենքին: Ու հաղորդակարի ձայնի նետ մարում են վերջին հնչյունները:

—Նվագում է հայկական ռադիոյի ժողգործիքների անսամբլի մենակատար, դուրսից հար Վաչե Հովսեփյանը:

Նրան ճանաչեցին: Ծանաչեցին իրի ավանդական նվագարանի՝ դուրսի լի լավագույն վարպետներից մեկի, որն իր արվեստով այդ համեստ գործիքի գոյանման շարունակության իրավունքը հաստատեց: Վաչեի արվեստը անկեղծ էր ու անմիջական, պարզ, ժողովրդի հույզերով ցողված, մաքուր ու չինչ: Նրա նվագացանկը բավականին բնորոշակ էր, ժողովրդայնական, գուսանական և պրոֆեսիոնալ կոմպոզիտորների ստեղծագործությունների նրա կատարումը մի ատանին՝ բավականությանը էին ունկնդրում՝ ամենատարբեր ներաշխարհի մարդիկ: Վաչե Հովսեփյանը ամեն դեպքում խորն էր ընկալում

կոմպոզիտորներին, կարողանում էր գտնել ամեն մեկի համար բնորոշը՝ Նրա նվագը մերթ լի էր դրամատիզմով, մերթ ջնարական էր, մերթ խոհական:

Արտիստի համերգային գործունեությունը, ուղիւ է: մետուստատեպին ելույթները, Հայաստանի ուղիւի ձայնադարանի ուսի ֆոնդում եղած բազմաթիւ ձայնագրություններն իրավամբ ճանաչում բերեցին տաղանդաւոր ուղիւկահարին:

— Հինա միակ նպատակ ժողովրդի կողմից մեր դուրսն ավելի շատ սիրել տան է: Այն ինչքան շատ մարդ սիրի, այնքան լավ: Ժունչս կողմիւ շտի կնվագեմ, մանակ թե հոգով լսեն, հոգով սիրեն:

Աս էր նրա երազանքը:

1965-ին Վաչե Հովսեփյանին շնորհիւց հանրագիտության վաստակաւոր արտիստի կոչում: Դա լրջախոն կրամշտի ստեղծագործական և կատարողական բարձր արվեստի արժանի գնահատականն էր:



Ուսուցիչն ու աշակերտը

Քրեատիկ իմաստով հարուստ և բազմազան են նաև երգահան Վաչե Հովսեփյանի ստեղծած երգերը: Նրա համերգացանկերում տեղ էին գտել և մշտպես հնչել «Վերադարձիր», «Նրեքնուկ», «Նրանի թե», «Հայաստանի աղ- ջիկները», «Իրիվնամուտին», «Հավատա ինձ», ինչպես նաև գեղջկական, հայկական ժողովրդական երգեր ու պարերուհանգիներ: Ուշագրավ է նշել, որ երգահան Վաչե Հովսեփյանի համար ստեղծագործական ներշնչանքի աղ- լյուր էին դարձել Վահան Տերյանի, Պարույր Սևակի, Սիվլա Կապուտիկյանի և մյուս հայ քանաստեղծների ստեղծագործությունները:

Ուտիտյի անասնորում աշխատած տարիներին Վաչեին մտածողուն էր մի բարդ խնդիր: Համերգային ելույթների ժամանակ անասնորի քաղցածու- րուստ ծրագրի մեջ կային համարներ, որոնց կատարման համար խիստ սահ- մանափակ էին դուրսի կատարողական հնարավորությունները: Սա մտա- ռոգում էր նաև անասնորի գեղարվեստական ղեկավարությանը:

Վաչե Հովսեփյանը փորձեր կատարեց դուրսի հոր տեսակետը տեղե- ծելու համար: Գործիքը ձեռք բերեց ավելի մեծ ձայնատարողություն: Նորու- ստեղծ գործիքը անվանվեց թաս-դուրուկ, որը նորույթ էր հայ երաժշտական գործիքների ընտանիքում:

Եվ այսպես՝ նոր ձայներ անասնորում, ձայներ, որոնք ավելի են հարը- սացնում անասնորի հնչելությունը, հնարավորություն ստեղծում կատարել նոր ու համեմատաբար բարդ ստեղծագործություններ:

Երաժշտի փայլուն կատարումները կոմպոզիտոր Յուրի Գևորգյանին մուշեցին ստեղծելու դուրսի և սիմֆոնիկ միազայանի երեք մասանոց սի կոնցերտ, որը հաջողությամբ ներկայացվեց ունկնդիրներին 1977 թ.-ին Երե- վանում: Դուրսի պարտիան առաջին անգամ կատարեց Վաչե Հովսեփյանը:

— Ես սիրով ու գործվանքով ուսումնասիրել եմ իմ ժամանակակից բոլոր հայ լավագույն դուրսկահարների փորձը,—ստել է Վաչե Հովսեփյանը: —Ինձ թվում է, որ Յուրի Գևորգյանի կոնցերտը կնկատուի, որ մեջ կոմպոզիտոր- ներն ու երաժիշտները լրջորեն նայեն դուրսիին: Իսկ մինչ այդ, ես նրաթեք եմ հավաքում՝ գիրք գրելու մեր անվանի դուրսկահարների մասին: (Մեծ երաժշտի այս երազանքը չիրականացավ նրա վաղածամ մահվան պատճա- րով):

Դուրսի լավագույն կատարող և շնորհալի ստեղծագործող Վաչե Հով- սեփյանը չէր կարող միայն իր մեջ պահել հայկական այդ սրտուուչ գործիքի կատարողական գաղտնիքները, դուրսկահարի վարսետույան քանակին, չէր կարող չնուստել դուրսկահարների նոր սերունդ ստեղծելու մասին: Նա լավ էր գիտակցում, որ դուրսը մեր ժողովրդի հնագույն մշակույթի մա- սունքն է, որը պետք է հարստանի և երբեք մոռացույթյան չպետք է տրվի: Եվ

ուրախանում էր մանկան պես, երբ իրեն էին դիմում աշակերտ-դուղդակահար-ները. «Վե՛ց էլ սովորեցրու նվագել, վարպետ»:

Վաչե Հովսեփյանը դուղդակի դասեր էր տալիս կուլտուրայի ժողովրդական կոնսերվատորիայում, ուսդիոյի անասնոջում, լինում Հայաստանի կղեկ-տիվ և պետական տնտեսություններում, ամենուր հանդիպում պատանի դու-ղդակահարներին, քաժին հանում իր փորձն ու գիտելիքները:

‘Խուրովը, որպես Արևելքում սիրված գործիք, Վաչե Հովսեփյանին ճա-նաչում յերեց ճենց Արևելքում և այն էլ՝ երաժշտական ամենատարածված ու սիրված ժանրի կատարման մեջ:

1975 թվականին Տաշքենդում հրավիրված գիտական կոնֆերանսին, որը նվիրված էր մուղամաթին, Հայաստանից մասնակցեց նաև Վաչե Հովսեփյա-նը: Երաժիշտը Տաշքենդ էր տարել իր ստեղծած «Հավակնան թալաթին» և «Աղդրեշանական մուղամաթ»: Վաչեի տեխնիկայի վիրտուոզությունը և կա-տարման զգացմունքայնությունը նրան իրավունք վերապահեցին իր ելույթով ավարտելու եզրափակիչ համերգը: Նույն տարում նա հրավիրվեց Բագու, մասնակցելու ազգային երաժշտությանը նվիրված մի խոշոր միջոցառման:

Հավակնան արվեստի օրերին՝ 1978 թվականի հունիսին Թբիլիսիի ֆիլ-հարմոնիայի հոյակերտ, նորակառույց դահլիճի կամարների տակ փրաց ուն-կընդիրներին իր արվեստով հմայեց Արամ Մերանգուլյանի անվան ժողովուր-դական գործիքների անսամբլը:

Ունկընդիրների ճիշտ դուղդակ մեջ երկար կմնա հատկապես ՀՍՍՀ վաստա-կալիտ արտիստ Վաչե Հովսեփյանի անզուգական կատարումը: Նա մեծ վար-պետությամբ ներկայացրեց անմահ Սալաթ-Նովայի «Դուն էն գլխեն» երգը:

Այդ օրերի ելույթների առթիվ «Վեչերնի Թբիլիսի» թերթը, խոսելով Վա-չե Հովսեփյանի կատարման մասին, գրեց. «Ամասրիի մեհակատար, վիրտու-ոզ դուղդակահար Վ. Հովսեփյանը սաղանդավոր, ինքնուս կոմպոզիտոր է»:

* * *

1977 թվականի հունիսին Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պալատում հան-դես եկան Հայաստանի արվեստի վարպետները: Նրանց երգն ու երաժշտու-թյունը. պարերը մի հրաշալի նվեր էին քաթվեցիներին: Մեծ Հոկտեմբերի ճոթելյանական տարում:

«...Մեծ համերգում Վաչե Հովսեփյանը Անդրանիկ Անկարյանի նվա-զակցությամբ վիրտուոզ իմպրովիզացիաներ կատարեց ժողովրդական թեմա-ներով: Խուրովը երգում էր, ծիծաղում, թախծում... Հանդիսատեսը մտքով տեղափոխվեց Հայաստանի ձյունազառաթ լեռները, զգաց լանջերն ի վեր շնչեմպացու հովերի շունչը, ծաղիկների անուշ բուրմունքը»:

Այսպես էր գրել Վաչեի նվագի մասին Աղդրեշանական ՍՍՀ վաստակա-

վոր արտիստների, Մ. Ֆ. Ախունդովի անվան Օսկերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մենակատարուհի Տադյանն Բաղիրովան Բազմի «Կոմունիստ» թերթի 1977 թ. հունիսի 23-ի համարում «Արևշող արվեստ» խորագրով հոդվածում:

Իսկ հաջորդ՝ 1978 թ. հունիսին, երբ Վաչե Հովսեփյանը Նորից հանդես եկավ Բաքվում, նրա ելույթի առթիվ կոմպոզիտոր Նարինան Մամեդովը գրեց.

«Շատ ցանկալի է ընդգծել դուդուկահար և կլարնետահար, Հայկական ՄԱՀ ժողովրդական արտիստ Վաչե Հովսեփյանի կատարողական քարձր արվեստը, որը «Կովկաս» ֆանտազիայում կատարեց վեհանվագը: Գործիքն ասես վերածվել էր մարդկային ձայնի՝ մերթ արտասանում էր, մերթ երգում: Պետք է ասել որ նա հիանալի երաժիշտ է, փառքն տիրապետում է իր գործիքին և խորապես զգում երաժշտությունը: Նրա կատարմանը հնչեց «Հովերն ըմպան» ժողովրդական երգը: Թվում էր, թե երաժշտությունը վերատեղեցում է ծաղիկների ու հողի բուրմունքը, կուսական բնության երանգները, որոնք տոնելիված են մարդու քերկրանքի համար»:

(«Կոմունիստ» 1978 թ. հունիսի 25, Բաքու):



Ծնվում է մտերիբե...

Իր սիրելի նվագարանի հետ անվանի երաժիշտը շրջել է ոչ միայն համ-
րապետությունում ու Միությունում, այլև աշխարհի շատ երկրներում՝ Ֆրան-
սիա, Եգիպտոս, Հունաստան, Թուրքիա, Բուլղարիա, Ամերիկայի Միացյալ
Նահանգներ, Իրաք, Հորդանան...

Թվում էր, թե հետավոր Իսլամոյալում, ուր ոչ մի հայ չկա, դուրսին իր
երկրպագուները չէր կարող ունենալ: Սակայն ստաջին ունկնդրումից հետո
դահլիճը խնդրում էր կրկնել «Դուն էն գլխենը», «Հովերն ընկան», «Ինձ մի
խնդիր» և այլ երգեր:

Իսկ 1974 թվականին Նյու-Յորքի դահլիճներից մեկում վաչե Հովսեփ-
յանի դուրսին ունկնդրում էին ՄԱԿ-ի 80 երկրների ներկայացուցիչներ:

1976-ին Եգիպտոսի համերգապահներում հորից հնչեցին նրա կատար-
մամբ «Սոխակը» (շլի), ժողովրդական «Օտար անաչի համփեթի վրա»,
Կոմիտասի «Կարգավիճը», Սպար-Նովայի «Դուն էն գլխենը» (դուդուկ):

Մուսկվայի «Մելոդիա» ֆիրման թողարկեց «Նվագում է վաչե Հովսեփ-
յանը» տևանվագ ձայնագրանկ: Ընդհատի դուդուկամարի կատարմամբ ձայ-
նագրված են Սպար-Նովայի «Դուն էն գլխեն», Դանիել Ղևգարյանի «Քճրի,
յո՛ թալկ», Անտոն Մարիանի «Ինձ մի խնդիր», հայկական ժողովրդական
«Հովերն ընկան», «Մամկալ» և այլ երգեր:

1978 թ. իր այցելություններից մեկի ժամանակ աշխարհահռչակ գրող
Վիլյամ Սարդյանը ցանկություն էր հագտնել լսելու լավագույն հայ դուդուկա-
նարին:

Մի լմներական հավաքություն հրավիրված էր և վաչե Հովսեփյանը:
Ինչը մյուսի ետևից նա կատարում էր հայկական ժողովրդական երգեր,
Սպար-Նովայի ստեղծագործությունները: Մեծ գրողը լսում էր լուռ, աչքերը
զոց: Մերթ-մերթ ամուր սեղմվում էին խոսի կուպերը, և դուրսում բնշանջքների
ծայրերը: Վաչեն նվագում էր ներանձնացած, ներքուստ խռովված, և ասես
այդ օրը դուդուկը նրա հոգու շարունակությունը լինել, և ինքը մատներով
իր սրտի լարերին էր դիպում: Մարեց նվագը... Լուռ էին ամենքը, ու լավեց
ծերունագարը գրողի միմուհը.

— Բո՛ նվագը արոթք է, հայու արոթք...

**Ջ Ի Վ Ա Ն
Գ Ա Ս Պ Ա Ր Ց Ա Ն**

ՀԱՍՀ ժողովրդական արտիստ



ԸՆԿ ԵՂԵԳԱՆ ՓՈՂ... ԵՐԳ ԵՆԱՆԵՐ

Նվագում էր պապը. դուրսից դալվալում էր տխրագին ու մեկ էլ՝ որսախ։ Տիրամատչ ձայն էր դա, թե՛ հարսանյաց որսախ կանչ, դժվար էր ասել։ Գեղգեղում էր դուրսից, գեղգեղանքը տարածվում էր դեպի անտառները, սարերն ի վեր, դաշտերն ի վայր։

Իսկ իրենց կառնուն հենված պապի նվագն էր լսում փոքրիկ Ջիվանը։ Նա մտածում էր, թե կգա մի օր, որ ինքն էլ պապի նման կնվագի, որ պապի դուրսիկի նման իրենն էլ կհնչի հոգեզմայլ ու հոգեզրավ։

Ծորում էր հայկական զուլալ մեղեդին և տարածվելով նեռու, շատ նեռու, պապենական խոսքը տանում դարերից ծնված, դարերից տրված ժողովրդական արտամտ խոսքին։

Մի օր էլ, երբ պապը նվագում էր, թունդիկը խնդրեց.

— Պապ ջան, դուրսից տուր ինձ...

Պապը զարմացած նայեց թունդիկին, կոպ տվեց արցունքները և դուրսից տվեց թունդիկին։

— Բապ ջան կկարողանա՞ս,— լացակունած հարցրեց նա։

— Հա, պապ ջան...

— Այդ փոքր ես։

— Բա ո՞ր տարեկանը փո՞քր է...

Որ տարեկանը շատ փոքր էր դուրսից նվազելու համար: Եվ ո՞վ ինձ
հար, որ Քաղսի գյուղում ճանաչված երաժիշտ Ղևոնդի թոռանը նվիրած դու-
րսիկը հրան կդարձնեի դուրսիկի մեծ վարպետ, թե Ջիվանը դուրսիկը կհաս-
ցընկի մասնաշխարհային ճանաչման:

Հանրապետության ժողովրդական արտիստ Ջիվան Գասպարյանը պար-
մեծ ճանաչում ունեցող դուրսիկահար է և գլխավորում է Երբալտիկոսի երա-
ժշտական կոլեկտիվների թյուրում:

Երբ նվագում է Ջիվանը, կարծես... ընդ եղեգան փող երգ ելաներ...

«Ինչու՞նք կախարդը... Այսպես են բնութագրել սովետական և արտա-
սովետական շատ թեթիթեր Ջիվան Գասպարյանի արվեստը:

Դուրսիկն ամեն դեպքում մնում է նվագարան: Կարևորը հրան խոսեց-
նելն է, հրա անաղարտ հնչյունները ժողովրդի հոգոց բխեցնելը:

Որվան ախպեր, սարեն կուզաւ...

Ասում են, թե երաժշտությունը ժողովրդական է, կոմկրետ ստեղծագոր-
ծող չունի:

Հազիվ թե:

Նուրբերը վարպետին են, երաժշտությունը՝ ժողովրդական. այն իր ան-
զուգական դուրսիկով շատ անգամ է համընդհանուր ճանաչման արժանացրել
Ջիվան Գասպարյանը:

Նրա դուրսիկը՝ այդ ազնիվ նվագարանը, իր կախարհանքով մարդու հո-
գում արթնացնում է մի անուշ թափիծ, անգութ որակահից խուսափող անմեղ
խղիկի պար, մի մեծ, հարատևող ուրախություն...

Դճում է դուրսիկը վար, և մտքերի շղթան հրան տանում է հեռու, բայց
ոչ հեռավոր անցյալ: Մի փոքր պատմություն:

... Մի օր տասը թոռան ձեռքից բռնած տարավ Երևանի Ղ. Ղու-
կասյանի անվան սիմֆոնիկայի ու դպրոցականների պալատ: Լենցին, ընդու-
նցին: Անցան ուսումնառության տարիները, ստացին համերգները:

Սկսեց նվագել աշխատանքային ուղեղների գլխավոր վարչության եր-
գի-պարի անասնորում, որը ղեկավարում էր հայ երաժշտության երախտա-
վոր, կոմպոզիտոր Երվանդ Սահառունին:

Ժատ բան ուսանեց Սահառունուց՝ բեմական համարձակություն, ան-
սամբլային կատարողականություն, մեմակատարի վարպետություն: Այստեղ
էր, որ նա մի քանի տարի աշխատեց Վաչե Հովսեփյանի հետ:

Հետո հրանք աշխատանքի անցան տարբեր կոլեկտիվներում, Վաչեն՝
ոսպիտի ժողգործիքների, իսկ Ջիվանը՝ երգի-պարի անասնոցներում:

Ջիվանը շուտով դարձավ վաստակաշատ Թաթուլ Ալթունջյանի սիրելի
սանը: Վարպետը խրախուսում էր հրան, հավատացնում, որ անասնոցի հա-

շուրջյունները մեծապես կսփված են նաև մյուս արվեստից: Ու այդ ամենից, արտառով խոսքերով ոգևորված, մեծ վարպետի ղեկավարությամբ շարունակում էր կատարելագործել իր վարպետությունը Ջիվան Գասպարյանը: Ջիվանն, ինքսրկե, առաջիններից չէր, բայց անասմբի հետ ամենուր տարավ իր նորովի խոսքը՝ դուրովի լեզվով հնչեցրած:

• • •

Երգի-պարի անասմբում և ընդհանրապես արոճեփոմնալ մյուս անասմբում, ունկնդիրները դժվարանում են մենակատարին տարբերել խմբի մյուս մասնակիցներից: Բայց երբ խմբում հնչում է Ջիվանի դուդուկը՝ տարվում ենք չի լինում: Փառաբանված անասմբի հետ Ջիվանը տարավ իր դուդուկը, ասելու ի լուր աշխարհին, թե ինչպիսի գողտրիկ, խորունկ ու թանկ խորհուրդ ունի իր մեջ այդ փայտյա փոքր ձողը:



Ջիվան Գասպարյանը արվեստակից բարեկամների՝ ԱՍԼՄ ժող. արտիստուհի Գոհար Գասպարյանի, Սիլվա Ասատրիկյանի, Խորեն Պալյանի, Վերա Հակոբյանի, տիպոլոգիայի մասնագետների հետ, ժամերայից հետո:

ԱՄՆ. 1978 թ.

Նվագում է Ջիվան Գաապարյանը:

Տարբեր դուրյակներով նվագի մեջ դժվար չէ տարբերել Ջիվանի նվագը: Այն ունի իր եղանակը, իր հանգը, իր գույնը, սեփական ձայնը: Այդ ամենին նա հասել է իր արտակարգ ընդունակության և ջանասիրության շնորհիվ:

Պատմում են, որ արտասահմանյան հերթական ուղևորության մեկնելուց առաջ Ջիվան Գաապարյանը մոտկովյան հյուրանոցում ապրել է մի քանի օր: Նշանավոր վարպետը աշակերտի նման ամեն օր պարսպում էր: Նրա դուրովի մեղեդին լսվում էր հյուրանոցի միջանցքներում: Մի օր, առավոտյան վաղ երկու օտարերկրացիներ, հավանաբար պարսեր, մտնեցել էին Ջիվանի սենյակի դռանը և լուռ լսում էին իրենց համար այնքան անծանոթ մեղեդին: Նվագը ստիպել էր նրանց կանգ առնել, համբանալ: Իսկական արվեստն այդպիսին է. ստիպում է մարդկանց կանգ առնել և համբանալ:



Ջիվան Գաապարյանն ու Գագիկ Գյուրջյանը նվագախում են ՀԱՍԷ ժողովրդական արտիստների կուսակի հռչակում

Այր, մեղեքու մեջ տվյալ ժողովրդի պատմությունն է, նրա ճակատագիրը, որը թեև անթարգմանելի է, բայց հասկանալի ու մատչելի բոլոր ժողովուրդներին:

Ջիվան Գասպարյանը խոստացածը լինելով ինքն իր նկատմամբ, դա՛ն-լիճի կամ լսողների միջև տարբերություն չի դնում լիճի դա գյուղական դա՛ն-լիճ, թե մեծ բենամարտակ՝ Կրեմլի համագումարների պալատից մինչև Եյու-Յուրքի «Մատենի հողի» սրահը...

Սատարդական վարպետության գագաթնակետին նա հասել է իր ուսուցիչներից ընդօրինակածը սեփական մեկնաբանությամբ մատուցելու ձիրքով:

Ջիվանը զարմանալիորեն կարողացավ ընկալել ժողովրդական մեղեդին, ժողովրդի ոգու ելևէջները, կարողացավ ազգային արվեստի ակունքներից վերցնել և ժողովրդին վերադարձնել իրենը, սեփականը:

Դժվար է, իհարկե, եղեգնա այդ բնքուշ ու պարզ նվագարանով վարպետորեն վերարտադրել ժողովրդի ստեղծագործությունները: Եվ նույնիսկ հասնել նրան, որ դուրսը դասվի երաժշտական դասական գործիքների շարքը, անգամ դեր ստանձնի փմֆոնկի ստեղծագործության մեջ: Սա էր գուցե և պատճառը, որ հայ կոմպոզիտորները ձեռնամուխ եղան դուրսի համար փմֆոնկի ստեղծագործությունների ստեղծմանը: Ավետ Տերտեղյանի երկրորդ փմֆոնրան շնորհալի դուրսկամարի կատարմամբ հնչեց Չեխովյան կապիտոն, Գերմանական Գեներալատական Հանրապետությունում, Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, ամենուր արժանանալով ունկնդիրների շերտ ընդունելությանը:

Ջիվանը պատմում էր, թե ինչպես է իր այդ փոքրիկ նվագարանը ծոցագրպանը դրած, ստաջին անգամ մեկնել միջազգային մրցույթի՝ 1957 թվականին Մոսկվա: Աշխարհի տարբեր ծայրերից հինգ հազար երաժիշտների էին եկել: Ժյուրին կազմված էր պատկանելի դեմքերից: «Մտածում էի, ի՞նչ պիտի անի իմ պարզ ու փոքրիկ դուրսը այդ բարդ ու փայլուն գործիքների կողքին, կհասկանան, կամ ես կկարողանամ մեր ազգային մեղեդիների գեղեցկությունը հասցնել նրանց: Ու շատ զարմացա, երբ նվագն ավարտելուց մետո իճճ ժյուրին բենամարտակից ցած կանչեց. ոչ ոքի չէին կանչել: Դուրսուկ ձեռք-ձեռք անցավ, հարցնում էին ինչ նյութից է գործիքի անունն ինչ է: Ստաջին մրցանակ չամեցի...»:

Այս փոքր շարադրանքի սահմաններում դժվար է ներկայացնել Ջիվան Գասպարյանի համերգային շրջագայությունների արտասանմանը ողջ երթուղին, թվարկենք միայն երկրների անունները՝ Ալբանիա, Հունգարիա, Բուլղարիա, ԱՄՆ, Կանադա, Սիբիր, Եգիպտոս, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Իրաք, Քուվեյթ, Հորդանան, ԳՂՀ, Ֆրանսիա...

Շատ են, բոլորը չես թվարկի, աշխարհը ինչպես ստում են, «մեծ է, բոլոր անկյուններում չես հասցնի լինել»: Ջիվան Գասպարյանի ճանապարհոր-



Հայ արվեստի վարպետները Լիբանանում 1978 թ. ՀՍՄՀ ժող. արտիստներ Լուսինն Զարբազյանի և Ֆիլան Գասպարյանի հետ

դուրյունը շարունակում են նրան նվիրված կինո և հեռուստատեսային ֆիլմերը, «Միլիոնի» ֆիրմայի արտադրած ձայնակալատակները՝ «Նվագում է Հրվան Գասպարյանը»:

Գուրուլը միշտ էլ սիրված ու հոգեհարազատ գործիք է հայ մարդու համար: Իսկ նրբ Եվազում Լ Ջիվան Գասպարյանը, թվում է, թե դուրովն է լեզու առած խոսում, երաժշտության հետ արտաբերում մաս երգի քառերը: Մեղմ, հոգեթով ձայնով հա կատարում է երգեր, որ մեզ ծանոթ են վաղուց, բայց հա բազում է երգի մի անհայտ պշխարն, նրան հաղորդում մեղքի մինչ այդ մեզ անհայտ մի շիք, այն տպավորությունը թողնելով, թե դա մի այլ երգ է, որ լսում էս առաջին անգամ: Ինքն իրեն նվագակցելով, Ջիվան Գասպարյանը երգում է. «Հովերն ըմբան...», «Որո-մորր», «Նսովշուն աղ-չիկ», «Հեյ ջան, հեյ ջան», «Թամա՛մ աշխարհն արտու էկա՛ս և շատ ու շատ այլ երգեր՝ իր կրանգով, իր նրբությամբ, իր ինքնատիպ ոճով հարևանաբնույթի հավիական ժողովրդական երգերի կատարչական արվեստը:

Քիչ կլինեն, եթե ստեինք, թե Ջիվանը միայն դուրով է նվագում: Բով
նրա գոտնա՞ն, կլարնեո՞ղ, որոնք անզուգական են, ինչպես դուրովը:

— Այս ի՞նչ հրաշք է, այս ի՞նչ նվագարան է, ի՞նչ երաժշտություն,—
զարնանում են ունկնդիրները:

Հրաշքներ ու հրաշք նվագարաններ չկան: Կան հրաշք կատարողներ,
որ պրոպիսին են դարձնում փայտե գործիքը, և ընդ եղեգան փողը երգ է
ելանում:

Այդպիսիներից է Շահ Ջիվան Գասպարյանը:
Անս թե ամերիկյան հրարախաղերի առիթով քանաստեղծ Հրաչյա Հով-
հաննիսյանին ինչ է պատմել հանճարեղ գրող Վիլյամ Սարդյանը:

— Ֆրեզնո գացի մեր խոտքին համերգը: Լավ կշալեր, կճանճա՞նս դու-
րովչին...

— Ջիվան Գասպարյան:
— Ժլ ուայք: Ջիվան Գասպարյան, շատ պատվական կշալե: Գիտե՞ս, մեկ
հայ մեռավ դանիճին մեջ, համերգի պահում: Ար, այր, լսեց դուրովը, ըն-
կալ, հետո մեռավ... խեղճ մարդ:

Նվագում է Ջիվան Գասպարյանը:
Ավելացնելու ոչինչ չկա...

Փ Ո Ւ Ա Ր Ի Ն Ո Ղ Ն Ե Ր Ը

Վ Լ Ա Պ Ի Մ Ի Ր Հ Ա Ր ՈՒ Փ Ց ՈՒ Ն Ց Ա Ն

ՀԱՅ վաստակավոր արտիստ



« Գ Ո Ր Ա Ն Ի »

Մանուկի Գևորգի երգերը ամբողջ Ապարանում տարածված էին...

... Վա՛յ մեր Ապարանա սառը ջուրը:

Ջարմ, իրոք, սառն էր, բայց երբ երգում էին, հոգիները տաքանում էր: Այլը, Մանուկի Գևորգը ապարանցու սիրտն էր: Ապարանը գով արհիպից, նրա պառլ յաջացող աղբյուրներից եկավ ու մտավ մաքրամաքոր մի երգ տղայի սիրտը: Ապարանցին երգի սիրամար է, որսվախոջան սիրամար:

Թե եղև էր Ապարանում, ապա զվարթ հարսանիքների հյուր էր եղել: Հարսանիքն պատեղ համաժողովրդական ուրախություն է: Թնդում է բնջուկը, հնչում է երգը, մեծից մինչև փոքր երգում են: Ու Արագածի լանջերից խոխոջեղով հոտում է պարզ ու հապկական հիմ մեղեդին՝ «Ճարրոմ Գարանին»:

Կարոտ կա այդ երգի մեջ, լեռների կարոտ: Սեր կա այդ երգի մեջ՝ հայ ժողովրդի, հայոց աշխարհի:

«Յարժ Գործեր»... Եկար ու ակերծեցիր տղայի հոգին:
 Ըն անտեր Մլշու դաշտ հինգ հարյուր գեղ է...
 Երբ տղան տատի հետ առաջին անգամ սար բարձրացավ, ոչխարի հո-
 տի մոտ մի պատահու տեսավ, որ նվագում էր:
 — Տա՛տ, այ տատ, ի՞նչ է նվագում:
 — Ծվի՛ր:
 — Ծվին ի՞նչ է...
 — Ծվին գործիք է... որ շվկացնում է... երգում է...
 Տղան ստեղծավ, կանգնեց նվագողի կողքին:
 — Էս ի՞նչ ես նվագում:
 — Հովվի կանչը...
 — Հովվի՛...
 — Հա, ես հովիվ եմ, էս էլ իմ կանչն է...
 Կողքին մակաղում էին ոչխարները:
 Հովվի կանչը...
 Այդ կանչը կանչեց հրան: Ու դարձավ տատին.
 — Տատ, այ տատ, էս շվից ունե՛ս...
 — Ի՞նչ, ուզում ես շվի՛ փչել:
 — Եվագե՛...
 — Ի՞նչ վաղը շվի կունենա...
 Ծվին փոքրիկ, փոքրիկ էր, թեթև, թեթև...
 Բացց դե տղան էլ փոքր էր:
 — Մեր վաղուց ակնեց նվագել,— ասաց տատը ու խաչակնքեց դեմքը,— թող
 նվագե, մարդ դառնա: Եվ նա անբաժան մնաց շվից: Ինքն իրեն համար,
 ոնց որ տատն էր ասում, փչում էր...
 Հետո այն մեղեդի դարձավ. տղան փորձեց նվագել այն մեղեդիները, որ
 լսում էր հարսանիքներում, ռախիլով, այս ու այն վարպետից: Փորձեց՝
 սկզբում դանդաղ, ապա արագաթիչ հասավ իր ցանկությանը՝ ծայրից ծայր
 կրկնել լսած մեղեդիները:
 Հարությունճանների բնուամիջում հրճվում էին.
 — Վար՛ո, ա՛յ Վար՛ո, այ բախ, մի հատ նվագիր:
 Ու նվագում էր, չէր հոգնում, չէր տրտնջում:
 Ալագալագ բարձր սարին,
 Ձրունն իջել է կատարին...
 — Ա՛յ Վաղո, ա՛յ տղա, արի հաց կեր, է՛...
 — Հիմա կգամ...
 Չէր գալիս, նվագում էր ու նվագում: Ու միշտ նորից հնչեցնում իր առա-
 ջին՝ «Հովվի կանչը»:
 Երբ տեղափոխվեցին Երևան ու Հաղթանակի կամրջի տակ մի փոքրիկ

հավկական օջախ ծխաց, եկավ նաև նրա հաղթանակը: Նրան ընդունեցին Հայֆիխարմնիս: Ըլիով նա գեղարվեստական խմբերի ու անամբլների մետ անցավ Հայաստանի ճամփաներով, առաջին ծափերը ստացավ, գովեստի առաջին խոսքերը լսեց:

Բայց շվին քիչ էր նրա համար: Ու նա ձեռքը վերցրեց դուրովը:

Դուրովը նրա սրտին մոտ էր: Խոսում էր սրտի հետ, խորհուրդ անում:

Եվ հնչեց Մանուկի Գեորգի երգը՝ դուրովի ականջավալ անցքերից: Նը-վագ՛ց՝ «Հովերն ընկան»: Ու անա, իրոք հովերն ընկան, ու անա իր երկրի գով բամբները հասան նրան:

Բայց դուրովը սիրում է, որ տատապեն իր մետ. թե ոգուն ես վարպետ դառնա՛լ՝ պիտի աշխատես, փոթորկվես, մաշվես, որ դուրովը թո հարագատն ու մտերիմը լինի:

Տարիներ առաջ մի սիրունիկ օրիորդ դահլիճում, համերգի ժամանակ, շուտ եկավ դեպի ընկերուհին ու սասաց.

— Սրանց գործն ուրախ ու հեշտ է, նվագում են, էլի...

Ես այդ ընկերուհուն չսասցի, որ «նվագում են, էլի»-ն դժվարագույն, ամենօրյա աշխատանք է, որ նվագողը պետք է ունենա բանվորի քրտինք, սարքումանի մարզանք, քնածին տաղանդ և մարդկային նուրբ հոգի: Ես չսասցի, թող այդ օրիորդը այդպես կարծի, բայց ծափահարի: Արտիստական խոհանոցին քոլորը չէ, որ ծանոթ են:

Վլադիմիր Հարությունյանի այդ աշխատասիրությունն էր, որ նրան բե-րեց Հայաստանի պարի պետական անսամբլ:

1958-ին, երբ առաջին հայտագրով անսամբլը ներկայացավ հանդիսա-տեսին, Վլադիմիր Հարությունյանը շվի ու դուրով նվագեց: Հայֆիխարմնի-այի դահլիճի կամարների տակ բացված պարային ծաղկեփնջի կողքին երի-տասարդի նվագը համոզիչ ու հմայիչ հնչեց:

Մի բան է լինել տակ մենակատար, այլ է, երբ անսամբլի մետ նվագում ես մի ամբողջ ծրագիր:

Համարները հաջորդում են իրար: Վլադիմիր Հարությունյանը շվիով կա-տարեց՝ «Սոխակը»: Նստեց անսամբլի մետ միասին: Ու հնչեց «Վախարդված ծաղիկները»: Մենամնացը դուրովի վրա՝ Վլադիմիր Հարությունյանի:

Եվ նորից՝ «Մողղակական երիտասարդական պար»: Կարճատի մենա-նվագը՝ Վլադիմիր Հարությունյանի:

Եվ վերջապես մեր գարդը՝ «Բերդը»: Զուռնայի մենամնացը՝ Վլադիմիր Հարությունյանի:

Մյանք առաջին ծրագրի հայտագրից են:

Մինչ այդ աշխատելով Հայաստանի երգի-պարի պետական անսամբլում, Վլադիմիրը մեր մեծերից՝ Թաթուլ Ալթունյանից, Ալեքսանդր Ալեքսանդրյա-նից շատ բան սովորեց:

Հետագայում, Հայաստանի պարի անսամբլում բալետմուսուկներ Էդուարդ Մանուկյանի, Իլյա Արբասովի (Յարոսլավ) և, իհարկե, կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի օգնությամբ նա կատարելագործեց իր վարպետությունը:

Պրպտուն միտքը, բնածին շնորհքը եկան լրացնելու բազմաթիվ հյուրախաղերի ռաջորությունների՝ Մոսկվայից մինչև Տաշքենդ, Տալինից՝ Արատով...

Նորաստեղծ անսամբլը մեկնեց արտասահման հյուրախաղերի՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, Չեխոսլովակիա, Ալժիր, Թունիս, Մարոկկո, Անգլիա, Ֆրանսիա, Դանիա, Ծվեյցարիա, Բրազիլիա, Արգենտինա, ԱՄՆ... 40-ից ավելի երկրներ...



Վազգում են Հայաստանի պարի պետական անսամբլի երաժիշտներ, հայր և որդի՝ Վաղիժի և Ալեքսանդր Հարությունյանները

Ու ձգվու՛ր են, ձգվի ու են ճամփաները: Ու անում, ծավալվում, հաստատուն է դառնում Վաղիժի Հարությունյանի վարպետությունը:

Արտիստը ոչ միայն գտավ բեմը, այլև բեմը գտավ նրան: Այդ նշանակում է, որ հանդիսատեսը սիրեց ու գնամատեց, մոտ բնորոնց նրա արվեստը: Գտնելով իր ինքնություն ձայնն ու երանգը՝ Հարությունյանը գտավ նաև ստեղծագործությունների մատուցման ինքնություն կերպը:

Տարիների ընթացքում Վաղիժի Հարությունյանը գգեց այն սերմերը, որոնք անցին և շատ բնորոշ են այսօր հանրապետության վաստակավոր արտիստի համար:

Արվեստի հունձըը այսօրվա արդեն ճանաչված վարպետի համար մեծ է:

ու շտալլ: Եվ շտալլ է ու մեծ նրա համար, որ Վլադիմիր Հարությունյանը մանկալի հետ մանրալ է, աշխատավոր մարդու հետ աշխատավոր:

Մանկալ ես, բեզարած ես,
Առը շուռ տուր, շուռ արի...

Երգում է Վլադիմիր Հարությունյանի դուդուկը, և դու սրտով ու մտքով տեղափոխվում ես արձակ դաշտերն ու տեսնում բեզարած յարիճ, աշխատող մանկալին:

Այս է արվեստի ուժը:

Անցնում են տարիները, բերում նոր անուններ, նոր խոսք:

Երբ անասմբի գեղարվեստական դեկավար, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանը բեմադրեց «Էնգելին», Վլադիմիր Հարությունյանը Ապենիարյանի արվեստի ակունքներից նեկտար խմելով, մատուցեց իր մենամեկազը: Խաչատուր Ավետիսյանի «Վալաչներում» նա բանաստեղծ է իր դուդուկի մենամեկազով:

Նյու Յորքում նա իր շրջն էր հավաքում ամերիկացիներին ու փչում մեր եղեգան փողը: Աշխարհի տասնյակ ծեղերն է տանում նա մեր երգն ու երաժշտությունը: Տանում է շենել ու մարտակոչ, քնարական ու գողտրիկ:

Մեծ արվեստը, իմարկե, գալիս է տաղանդից: Բայց նաև՝ աշխատանքից: Վլադիմիր Հարությունյանի մոտ այս երկուսը հանդես են գալիս միասին:

Ինչ էլ նա նվագում է (այսօր նրա կողքին նստած դուդուկ է նվագում նաև Ռուզբերով լի երիտասարդ որդին՝ Ալեքսանդրը), լավ է նվագում. նրա նվագի մեջ կա Ապարանի լեռների զուլալ ջրերի կարկաչը, Մանուքի Գևորգի երգի արժիվը, և, իմարկե, տասի առաջին շլիի «Հովվի կանչը»:

Մեծ բանաստեղծ Պարույր Սևակն ասում էր.

Բոլորն այժմ կարդալ գիտեն,

Ուրեմն փառք... կարդացածը հասկացողին:

Ինչ լավ է, որ Վլադիմիր Հարությունյանի արվեստը ոչ միայն «կարդում են», այլև ... հասկանում:

Հայ երգն ու երաժշտությունը սպարում են նրա մեջ, ինչպես Մանուքի Գևորգի երգերը՝ ժողովրդի մեջ:

Ս Ե Ր Գ Ե Ց
Կ Ա Ր Ա Պ Ե Ց Ց Ա Ն
ՀԱՍՀ վաստակավոր սրբիտ



ԱՆԿԵՂԾ ԱՐՎԵՍՏԻ ՈՒԺԸ

Հին երևանցի իր գովասանք Կոնյի բարձունքով, երևանյան դանձաբարով վառ է մնացել Երասխա Իշխան Հովհաննիսյանի հիշողության մեջ: Վարպետ Իշխանը շատ հաճախ Ցարսկի փողոցի (այժմ Ալանդյարյան փողոցի № 17 տան բակում) հայրական թրեմո տակ նվագում էր հավիկակա՛ն մին մեղեդիներ Ջիվանու, Օերամի խաղերը, Սալաթ-Նովայի հոգևայտալար երգերը, իսկ փոքրիկ տղան՝ 7-ամյա Արզակը, որին թաղի երեխաները «Լալիկ» էին կանչում, վերցնում էր տնային որևէ աման, շուտ տալիս հակառակ կողմը և թմբկահարում...

Արդեն դարձյալկան էր, երբ սկսեց թմբուկ զարկել ինքնազործ խմբում և երգել: Երգում էր մին գուսանների, ինչպես նաև Հավասու, Օերամի երգերը, երգում էր քաղցրաձայն, մանկական անմիջականությամբ: Դարձյալկան ստուգատեսներում բոլորը սիրով ծափահարում էին նրան և միշտ միջանակներ էր շահում:

Պատերազմը նոր էր վերջացել: Մարդիկ որսախույզան էին կարող: Ու տղան նոր հետ նվագում էր ընկերական հավաքություներում, տոնախմբություններում և կանաց-կանաց հասունանում:

1946 թվականից 13-ամյա պատանին սկսեց հաճախել Երևանի մանուկների գեղարվեստական տան ժողգործիքների անսամբլը, որի ղեկավարն էր Ռեոուստատեանյան և ուսիտի վաստակավոր անսամբլի ներկայիս կոնցերտմայստեր, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Արտեմ Մեջինյանը: Մեկ տարի Ռեոու աշխատանքի անցավ գուսան Ամրատի ղեկավարած խմբում, որտեղ մտոյկից հաղորդակից դարձավ հայ գուսանական երգարվեստին, սիրեց ու ճանաչեց մեր ժողովրդի գուսանական զուլալ ու վճիտ երգերը:

1949 թվականին 16-ամյա պատանին աշխատանքի անցավ Հալֆիխար-մոնիայի ժողովրդական գործիքների անսամբլում, որը ղեկավարում էր հայկական գործիքների լավագույն վարպետ, երաժիշտ Վարդան Բունին (Բունինյան): Առաջին պրոֆեսիոնալ անսամբլը հրա համար դարձավ իսկական երաժշտական դպրոց:

1952 թվականին երաժիշտ, ՀՍՍՀ վաստակավոր արտիստ Խաչիկ Ներսիսյանը Արզակ Կարապետանին հրավիրեց Գորգեն Միրզոյանի ղեկավարած ժողովրդական գործիքների անսամբլը: Այստեղ արդեն պատանուն լուրջ փորձություն էր սպասում: Նվագել մի այնպիսի երաժշտական կոլեկտիվում,



Մենն Սարգսյանն ասաց՝ դուրսից իմ հոգին է, Սերգեյ:

որ պատվավոր տեղ էին գրավում անվանի դուդուկահար Լևոն Սարգսյանը, թատահար Ալեքսանդր Սարգսյանը, քամանչահար Խաչիկ Ներսիսյանը, քանոնահար Մարտին Հովհաննիսյանը, երաժիշտներ Իլյա Մինասյանը, Գարուշ Հովհաննիսյանը, երգչուհիներ Շողիկ Մկրտչյանը, Վերգինե Բաբայանը...

Նրա նոտագրության առաջին ուսուցիչը հայրն էր, Ռեոու սկսեց նվա-

գակցել Առն Մաղոյանին: Մեծ վարպետին նվագակցելը մեծ նեղանկարներ է խոտանում, քանի որ վարպետը բոլորին չէ, որ վառանում է... սովորեցնում:

Արպես էլ եղավ:
1952 թ. աշնանը Սերգեյը մեկնեց Սովետական բանակ՝ զինվորական ծառայության:

— Ի՞նչ մասնագիտություն ունեք,—հարցրեց հրամանատարը:
— Նվագում եմ:
Հրամանատարը նրան հրավիրեց զորամասի փողային նվագախումբ՝ որ նա առաջատար կլարնեղիստ-մենակատար էր: Զորացրվելուց մետո՞ 1964 թ. Սերգեյը ընդունվեց ռադիոյի ժողովրդական գործիքների վաստակավոր անամբը:

Բայց նրա հոգին ձգտում էր դեպի դուդուկը:
Վաչե Հովսեփյանը մի օր հարցրեց.
— Դուդուկ նվագում ես:
— Քիչ եմ գրառվում,—եղավ պատասխանը:

— Ես շատ կուզեի, որ դու դուդուկ նվագես,—խորհուրդ տվեց վարպետը: Կփորձեմ,—անվտանգ պատասխանեց Սերգեյը:
1965 թ. Սերգեյը իրեն նվիրեց դուդուկին: Հետևելով Վաչե Հովսեփյանի խորհուրդներին, խորանալով դուդուկահարի վարպետության գաղտնիքների մեջ, նա վարպետից վերցնում էր այն անհրաժեշտը, որ շուտով նրան պետք է բարձունքներ տաներ:

Թբիլիսիում 1970 թվականին կազմակերպված հայ արվեստի վարպետների մեծ համերգում Ս. Կարապետյանը իր վարպետ Վ. Հովսեփյանի մետ կատարեցին Սալաթ-Նովայի ստեղծագործություններից:

Այնուհետև երիտասարդ դուդուկահարը եղավ Ֆրանսիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Հունաստանում, Իսպանիայում, Ալժիրում և այլուր: Որպես անասրի առաջատար դուդուկահար նվագակցում էր ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ Օ. Համբարձումյանին, Հ. Բազալյանին, Ռ. Մաթևոսյանին, Վ. Ռաչատրյանին, վաստակավոր արտիստ Ռ. Հովհաննիսյանին:

Ալժիրում, մի ակումբում, տեղի հարեհավարտո հայերի համար Սերգեյը նվագեց «Իլե լամանը», «Կոունկը», «Վերադարձի», «Ծախսում»: Սերգեյը դուդուկով սփյուռքի հայերին էր հասցնում մայր հանրենիքի կարոտն ու բույրը, խոտում սրտերի հետ:

Այժմ Ս. Կարապետյանը դուդուկ է դասավանդում Երևանի Սալաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում: Նրա աշակերտներից մեկը՝ Սամվել Սիմոնյանը, ավարտելով Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը աշխատում է Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անամբրում:

Օնորնաչի երաժշտի կատարողական արվեստի մասին կոմպոզիտոր Գրիգոր Հախիճյանը ասել է.

«Մերգեյ Կարապետյանն այսօր Արամ Սերանգոլյանի անվան հայկական ժողովրդական գործիքների վաստակավոր անասնաբույժի դուդուկահարների կոնցերտնաչառերն է: Նա նոր աստիճանի է հասցրել դուդուկահարի իր մասնագիտությունը, վաչե Հովնաթյանի արժանի աշակերտն է, նրա մեծ գործի շարունակողը: Նրա դուդուկը խոսում է մարդկային սրտերի մետ, նրա արտաբերած ննչումները արտամոտ են»:

Ահա թե ինչու ունկնդիրը անկեղծորեն է ընկալում ՀԱՍՎ վաստակավոր արտիստ Աերգեյ Կարապետյանի արվեստը:

Ս Ի Բ Գ Ե Յ Ս Ի Մ Ո Ն Ց Ա Ն

ՀԱՍՀ Վաստակավոր արտիստ



ԳՅՈՒՄՐԻՎԱ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՀԱՎԵԹԱՆՈՒՄ Է

Գյումրին Հայաստանի այն պատմական քաղաքներից է, որը տվել է ճանաչված բանաստեղծներ, երգիչներ, գուսաններ, երաժիշտներ: Երգի ու տոնախմբությունների այդ ավանդական քաղաքը երաժշտական տաղանդների իր բարերբեր հողում ծնեց նաև Սերգեյ Սիմոնյանին՝ այդ անկրկնելի, ինքնատիպ երաժշտին:

Ռեալիստների հասակից երաժշտական Գյումրին նրա մեջ սեր աղբյուրացրեց դեպի երգն ու երաժշտությունը: Նրա մատուցած հույսն անհապառնակ ընդունեց հայկական ազնիվ մեղեդին, նրա գեղեցիկ կվեյները, ու մի օր էլ իր ձեռքն առավ ազգային գողտրիկ նվագարանը՝ շվին, որից չբաժանվեց ողջ կյանքում:

Սերգեյ Սիմոնյանը, այդ պարզ ու հասարակ թվացող նվագարանով հիանալի կատարեց ոչ միայն հովվական նվագներ, այլև մեծ կոմպոզիտորների բարդ ստեղծագործություններ՝ Արամ Խաչատրյանի «Կոնցերտ ջութակի համար»-ը, Բիզեի «Ուվերտյուրան» «Կարմեն» օպերայից, Գրիգի «Անիտրայի պարը»...

Հանդիսավոր արարողությունների, թատերականացված ներկայացումների ժամանակ շնորհալի երաժիշտը հանդես էր գալիս զուտնայի կատարմամբ, մի նվագարան, որով թվում էր, թե կարելի է կատարել միայն բարձր ու զիկ կանչով ճշող ստեղծագործություններ: Բայց Սերգեյ Սիմոնյանը զուտնային

այնպես էր տիրապետում, որ հանդիսատեսին մատուցում էր նաև տեխնիկական բարդ ու ճուրբ մեղեդային ստեղծագործություններ:

Նույն հաջողությամբ շնորհալի երաժիշտը տիրապետեց նաև կլարնետին, իսկ նրան ավելի հարազատ էր մեր ազգային նվագարանների թագն ու պապը՝ դուդուկը:

1956 թվականին նա Լենինականից փոխադրվում է Երևան, դառնում Հաֆիլինարմոնիայի մեմակատար, այս «Մեղեդի» ժողովրդական անսամբլի նաև նա բազմաթիվ համերգներով հանդես է եկել Սովետական Միության ու նեոստոր առկուններում, դաստիարակել հայ երաժիշտների մի քանի սերունդ:

Այստիսական տարբեր խմբերի նեո հայ երաժիշտն իր արվեստն է ցուցադրել Քելդիայում, Հնդկաստանում, Հարավսլավիայում, Նեպալում, Մոնղոլիայում, Ինդոնեզիայում, Կիպրոսում, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում, Մերձավոր Արևելքի երկրներում...

Հմուտ երաժիշտ-ստեղծագործողի շատ գործեր ու կատարումներ այսօր լայն ճամպույտ ունեն ունկնդիրների շրջանում:

1967 թվականին սովետական երաժշտական արվեստին մատուցած ծառայությունների համար Սերգեյ Միաքի Միմոնյանին շնորհվում է համրապետության վաստակավոր արտիստի բարձր կոչում: Նա արժանացել է նաև բազմաթիվ պատվոգրերի, շնորհակալագրերի:

Սերգեյ Միմոնյանի արվեստի մասին կոմպոզիտոր Վլադիմեն Բալյանը գրել է. «Սերգեյ Միմոնյանն իսկական արտիստ էր բառիս ամենալայն իմաստով, որն իր արվեստը բազմառեսակ երաժշտական նվագարաններով կարողացավ մեծ վարպետությամբ ներկայացնել մեր երկրի և աշխարհի շատ բեմահարթակներում: Նրան իրավամբ կարելի է համարել ժողովրդական նվագարանների՝ շվիի, զուռնայի, դուդուկի վիրտուոզ կատարող արվեստագետ:»

Սերգեյ Միմոնյանը միայն երաժիշտ կատարող չէր: Նա ուներ նաև ստեղծագործական հարուստ երևակայություն, համերգային ճուր և ինքնատիպ ծրագրեր ստեղծելու մեծ տաղանդ: Հանդիսատեսի վրա մեծ տպավորություն է թողել Միմոնյանի «Գյուրբա հարսանիքը» համերգային կամարգիան, որը այսօր էլ սնում է «Մեղեդի» անսամբլի համերգային ծրագրում և դեռ երկար կնճա մեր հանդիսատեսի հիշողության մեջ որպես մի վառ ու գունդ ներկայացում:

Գ Ա Գ Ի Կ Գ Յ Ո Ւ Ր Զ Յ Ա Ն



ՀԱՅ ԳՈՒԿՈՒԿԻ ԿԱՆՉԸ

Գրողական Գագիկ Գյուրջյանի երաժշտական կենսագրությունը սկսվում է մի գեղեցիկ, բայց պատահական դիպվածով:

...Երեսնի հին ու փոշոտ փողոցներից մեկի կախշեղ տանիքից պոկված եղեգը հետաքրքրեց պատանի Գագիկին: Ժվի պատրաստեց, անցքեր բացեց ու սկսեց կամաց-կամաց եղանակ հորինել: Հայրը՝ Ստեփան Գյուրջյանը, երաժշտություն սիրող մի մարդ, նկատեց, որ որդու հուզու ձայքերում երգ կա թաքնված... որ երաժշտությունը տղայի էությունն է: Սկզբում որդու համար մանդոլին գնեց, հետո թատ, ապա՝ դրոպկ:

Եվ այդ նվագարանով էլ նա կախարդական ուժով կապվեց հայ արվեստին, և ամբողջ կյանքում հարազատ մնաց իր ազգի անհունվիրական գործիքին՝ հայկական դրոպկին:

Նա ոչապրոքյանք լսում էր ժամանակի ճանաչված դրոպկահարներին, լսում էր ինքնամոտաց և աշխատում սովորել դրոպկի նրբին, բարդ ու հուզիչ արվեստը, երազում դառնալ իսկական դրոպկահար:

Ժամանակի ճանաչված դրոպկահար Գորգեն Թովմասյանը, լսելով Գագիկի կատարումը, նրան առաջարկեց աշխատել Թ. Ալթունյանի անվան ժողովրդական երգի-պարի անսամբլում:

Դա 1942 թվականն էր: Անասրի շնորհաշատ ղեկավար, հայ արվեստի մեծ երաժիշտավոր Թաթուլ Ալթունյանը ջանք չիմացեց Գագիկին իսկական նվագող-մենավառարի աստիճանին հասցնելու համար: Փորձերից ազատ ժամերին Թ. Ալթունյանը շարունակում էր պարապել Գագիկի հետ, նոտաներ սովորեցնում նրան:

Աշխատասիրությունը, կարճն ու անսահման նվիրվածությունը դուդուկին ճանաչում քերտցին նրան:

Երգի-պարի ժողովրդական վառտակավոր անասնը Գագիկ Գյուրջյանի համար չարձակ էրաժշտական մի մեծ դպրոց:

Մեծ հույրենականի ամեղ օրերին Մերձբայթյան ռազմաճակատում երգի-պարի անասնային կարտավ ընդունեցին ոչ միայն հայ ճակատայինները: Հայ զինվորի համար անչափ հուզիչ էր հետախոր ափերում, պատերազմի թունաբոճի մեջ լսել հայկական դուդուկը և մտովի տեղափոխվել հայկական բնաշխարհ...

Գագիկի դուդուկը մնչում էր տխուր ու մեղամաղձոտ՝ «Քարալվան», «Կրտունկ», «Գին-յաման»:

Սակայն նրավող զինվորին սիսյն տխուր երգերը չէ, որ պետք էին: Ձին-վիրը պետք է ոգևորվեր. առնականանար, մարտնչեր: Ու հնչում են հայկական թռչարին ու վերվերին, «Սինաց երգն» ու մարտական քայլերգը: Գագիկը մինչև օրս էլ միշտ է, թե ինչպես մարշալ Հովհաննես Բաղրամյանը դուդուկների նվագակցությանը պարենք «Նորոտ է, մայլի տղեն, խորտ է» ժողովրդական երգ-պարը, իսկ վերջում սրբելով ճակատի քրտինքն, ասաց.

— Շատ համերգային խմբեր են ռազմաճակատ եկել, իսկ մերը՝ հայկականը, ատաշին անգամն է, որ պսակս հաջող էրայք է ունենում... այս համերգը նոգնի մեր հաղթանակին...

Պատերազմը դեռ չէր ավարտվել: Ալթունյանցիները համերգային շրջապատությունների մեկնեցին Պարուկատան՝ սովետական զինվորների համար համերգներ տալու: Թեհրան, Ապահան, Թավրիզ, Խոյ, Սպանատ, Թեհլի, Ռեշտ: Ահա այն երթուղին, որով անցան հայ արտիստները երեք ու կես ամսով, իրենց հետ տանելով հայ ժողովրդական երգն ու պարը, դուդուկի ախորժապուր մեղեդիները: Նրանց հետ էր նաև շնորհալի դուդուկահար Գագիկ Գյուրջյանը:

1960-ին Գագիկը կոմպոզիտոր Արամ Մերանգուլյանի նրավերով աշխատանքի է անցնում ռադիոյի պետական կոմիտեի ժողովրդական գործիքների անասնարկում: Այստեղ նա պետք է նվագեր նշանավոր և փորձված դուդուկահարներ Լևոն Մադոյանի, Վաչե Հովսեփյանի, Խաչիկ Խաչատրյանի հետ:

Արդեն պրոֆեսիոնալ դուդուկահարը 1963 թվականին նորից նրավիրվեց երգի-պարի անասնը՝ իր հետ քերելով կատարողական մեծ վարպետություն և երգացանկում ունենալով «Դու անմեղ ես», «Հովերն անցան», «Գին

յանան», «Ռական ախպեր», Սալաթ-Նովայի «Դուն Էն գլխեն», «Աշխարհս մն փանջարս է» և շատ այլ ստեղծագործություններ։

Գիտականաբար-արտիստը 1964 թվականին անասնբլի հետ հյուրահամերգների մեկնեց արաբական երկրներ՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս։

Եգիպտոսի հայկական ակումբներից մեկում Գագիկը նվագեց ժողովրդական քոչարին ու վերվերին, «Կենաց երգն» ու մարտական քաջերգը։

Արտատաք, համերպներ, ծանր էր հայրենակարոտ մարդկանց համար լսել հայրենական այդ երգերը։ Ծառերը շրջապատել էին շնորհալի երամբշտին՝ գրոցում, հարցումփորձ էին անում Մալր հայրենիքի մասին։

Եվ Գագիկը պատմում էր։ Պատմում էր Մալր Հալաստանի, պետական կոնսերվատորիայի և Օպերային թատրոնի մասին, պատմում էր հալ արվեստի մեծ հաջողությունների մասին, Մատենադարանի, Գառնիի և Գեղարդի մասին։ Եվ այս բոլորը՝ երաժշտության լեզվով, հայկական ավանդական դուդուկի լեզվով։ Մեծ Հայրենականի մասնակից, դուդուկահար Գագիկ Գյուրջյանը այսօր էլ իր դուդուկի թավշե ձալնի մեղեդիներով գեղագիտական մեծ հաճույք է պատճառում երաժշտաներ ունկնդիրներին։

**Խ Ա Ջ Ի Կ
Ա Վ Ա Գ Յ Ա Ն**



ԺՈՂՈՎՐԿԻ ՍՐՏԻ ԽՈՐՀԻՑ

Ծնորնայի դուդուկահար Խաչիկ Ավագյանը իր կատարողական քարձր վարպետության և արտօնաբերական արվեստի հաջողությունների համար պարտական է մանկության սնցած օրերին, հովիվներից լսած բլուրի ու շփի բազրը մեղեդիներին:

Խաչիկի դուդուկի ձայնը ուրիշի հետ շփոթել չես կարող: Հիմա էլ Հասարակական վարպետ դուդուկահարները շերտաբար են խոսում հրա մասին:

— Մեր Խաչիկի դուդուկի ձայնն ուրիշ է,— գրուցի ժամանակ ստաց երթալստիկտի կուլտուրայի բաժնի գործիչապին երաժիշտների բյուրոյի դիրեկտոր, երաժիշտ-վեստրան Լևոն Ավետիսյանը,— ճիշտ է, նա արտօնաբերական կողմնակիցներում քիչ նվազեց, բայց այսօր էլ նա քարձր մակարդակի վրա կանգնած երաժիշտ է, բնածին տաղանդով օժտված:

Արդյուես Լ...

Բնությունը դարձավ Խաչիկի ստացին ուսուցիչը. բնությունը ստիպեց սիրել գեղեցիկն ու վեհը, սիրել երգն ու երաժշտությունը: Ու նա սկսեց նվագել: Հաճախ պատանի Խաչիկը գնում էր հայրենի Դարսալաջազ, քարձրահուն: Աստի գազաթը, հետվից դիտում արտուի դուրս էկամ հոտը, հանում ծոցից դուդուկն ու նվագում: Տղան հոտաղների հետ մտուկի քայլում էր, իջնում ձորը՝ չոր խմելու, հետո նստում հանգստանալու...

Ով գիտե, գտցե այդտեղ, այդ պահին էլ ծնվում էր «Ռբական ակաբերը»:
Ռբական ակաբեր,

Սարեն կուգաս...

Հարուստ ձայներանգներով տիկություն ու թախիծ արտահայտող, իր պոստառը տեմբրով խոր գաղտնիքներ ունի իր մեջ ամբարած հավկական դրողուկը, որով հանդես է գալիս Խաչիկ Ավագյանը՝ ժողովրդական տոնահանդեսներում, խրախմանքներում...

— Լսե՛րով Խաչիկի դրողուկի ձայնը, մենք սեսս լսում ենք մեր բազմադարյան ժողովրդի ձայնը,—ասում է ՀՍՄՀ վաստակավոր արտիստ, դրողուկահար Խաչիկ Խաչատրյանը...

Նրա դրողուկի թափշն ձայնը առանձնապես փայլեց Անդրկովկասի մեծ երգիչ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների կատարմամբ:

«Աշխարհս մն փանջարս է», «Դուն է՛մ գլխեն», «Քամանջա» և այլ երգերի կատարումը դրողուկահարից պահանջում է մեծ վարպետություն և այդ բարդ գործիքին տիրապետելու բնածին շնորհ:

Խաչիկի դրողուկը կարողացավ հաղթանարել այդ բոլորը: Դրողուկահար Խաչիկ Ավագյանի մասին ամա թե ինչ է ասել կոմպոզիտոր, ՀՍՄՀ արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր Հախիճյանը.

«Մեր ազգային նվագարանների երաժշտական ընտանիքի մեջ միշտ էլ դրողուկը եղել ու մնում է որպես զուտ ազգային նվագարան, որի վարպետ-կատարողները ի յուր աշխարհի ընդկայացրել են մեր հայ երգն ու երաժշտությունը: Հայ դրողուկահարների ընտանիքում իր ուրույն տեղն ունի վարպետ դրողուկահար Խաչիկ Ավագյանը, որի նվագը ոչ միայն գեղազիտական հաճույք է պատճառում ունկնդրին, այլև հաստատում և ամրապնդում է նույնպես երաժշտական արվեստի ավանդույթները և սովորույթները:

Այս իմաստով մեծ գնահատականի է արժանի սիրելի Խաչիկի երաժշտական արվեստը, որը բխում է ժողովրդի սրտի խորքից, հուզեմարագատ է հային»:

Համարելով հայ դրողուկահարների անդաստանը, նա իր կողմին անեցրեց բազմաթիվ երիտասարդ երաժիշտներ, որոնք փայլեցին ավագանական քննարկական շնչով ու տեխնիկայով: Նրա աշակերտների թվում է նաև իր հարազատ որդին՝ Գագիկը:

Չնայած շնորհալի դրողուկահար Խաչիկ Ավագյանն ունեցավ իր սրժանի փոխարինողները, բայց անկրկնելի մնաց իր տեսակի մեջ:

Խաչիկ Ավագյանը ծնվեց լեռների մեջ, զգաց հավկական բնությունը, որսեց իր պատերի ավանդական նվագը և իր տաղանդի շնորհիվ դրանք մատուցեց դրողուկի միջոցով: Ու չնայած նա արդեն մի քանի տասնամյակ ապրում է մայրաքաղաքում, բայց նրա նվագը ունկնդրողը իրեն զգում է բնության գրկում, հավկական հարազատ լեռների ու կարկաշտ աղբյուրների մեջ:

**ԱՐՏԱՎ ԱԶԳԻ
ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՄԱՆ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՍՏԱՎԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂ



ԳՈՒԳՈՒԿԻ ԱՐԱՐԻՉԸ

Երգի քաղաք Կիրովականից և Արտավազի Տեր-Հովհաննիսյանը: Դեռ պատվեց վատարան պատրաստող Գրիգորին, Ասրաբը լիսայի հին անդամանում ապրող երաժիշտներ Գարշոյի և Մզոյի հարյուրավոր խմբույթ ու ձարահանքներից, նա արքայազմը ընդունեց իր դուրսովը: Ինքնուս էր, մետո դարձավ պրոֆեսիոնալ: Դարոցն ախարտելուց մետո ղեկավարեց Կիրովականի սիմֆոնիկայի պալատի երգի-սարի անսամբլի գործիքային մասը, մետո՝ շրջանային մշակույթի տան ժողովրդական գործիքների համույթը: Այնուհետև ճանապարհը նրան տարավ դեպի Ղուկաս Ղուկասյանի անվան մշակույթի տան ժողովրդական անսամբլ, իսկ մետո դարձավ ժողովրդական ֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավար:

Արտավազի Տեր-Հովհաննիսյանի դուրսովի ձայնը լավ գիտեց նրան լրատվելու: Նա իր յուրատեսակ երանգն ունի, կատարման անմիջականությունն ու վարպետությունը:

Կիրովականում, 1972 թվականին, երբ կազմակերպվեց «Հորովե» ազգագրական երգի-սարի անսամբլը, Տեր-Հովհաննիսյանը նրա մեմբերատարն ու կոնցերտմատչետերն էր: Այստեղ էլ նա պարտատեց երիտասարդ երաժիշտների մի ամբողջ համախումբ, որոնք սրտով փրով ու երախտագիտությամբ են հիշում իրենց ուսուցչին:

Նա Կիրովական քաղաքի հիմնարկ-ձեռնարկաբյուրոների ինքնագործ խմբերի կազմակերպիչն ու ղեկավարն է, Հանրապետական ու միութենա-

կան, ինչպես նաև այլ փաստաթղթերի, բեմատիկ համերգների, մեծ ու վոքեր տոնախմբությունների սիրում ու հոգին:

Հաճախ ելույթ է ունենում համերգներում, բազմիցս պարզաստորվել է ունի մերայներով ու դիպումներով: Նրա դուդուկը հնչել է Ալ. Սպենդիարյանի անվան Օպերային թատրոնի, Կրեմլի սյունազարդ դահլիճի բեմահարթակներից, նրան ունկնդրել են Փարիզում ու Գերմանիայում, Կիրովականին թարեկամ դարձած Բանիդյում (Իտալիա) ու մեզ մոտ, մեր Միությունում՝ Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Վրաստան, Ադրբեջան...

Տեր-Հովհաննիսյանի հյուրախառները Լեհաստանում. հարյուրավոր լեհեր արցունքոտ աչքերով հոտընկալա ծափահարում էին նրա դուդուկին ու կատարողի վարպետությանը:

Արտավազ Տեր-Հովհաննիսյանի դուդուկի առիներով և թավշյա տենդրաւնության հմայքին ղժվար է չեմֆարկվել: Նրա ծրագիրը ընդգրկում է երկու հարյուրից ավելի ժողովրդական երգերի մի ծաղկեփունջ:



Մտերիմ բարեկամներ են կոմպոզիտոր Գրիգոր Հախիճյանը և դուդուկահար Արտավազ Տեր-Հովհաննիսյանը

Կուզեի՞նք մեր խոսքը վատտակաշատ դուդուկահարի մասին լրացնել կոմպոզիտոր, արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր Հախիճյանի հեղինակավոր գնահատականով:

«Ի դեմս Արտավազ Տեր-Հովհաննիսյանի մենք այսօր ունենք մի Բամաս, գուսպ, ինքնատիպ երաժիշտ-դուդուկահար, որի թավշն մեղեդաւնոթյամբ կատարումները մեծ բավականություն են պատճառում դուդուկահար հաւարակությանը: Նա իր դուդուկով ու գոտնաքով, շվիով ու բլուլով շարունակում է պահպանել և ժողովրդին մատուցել մեր ազգային սուրբությունը:

րը, ավանդույթները, որը շատ շնորհակալ գործ է և արժանի է դրվատանքի»:

Արտավազ Տեր-Հովհաննիսյանը հանրապետության կոլտուրայի վաստակավոր աշխատող է, ճանաչված ու սիրված դրոլականոր, հմուտ վարպետ ու լավ ուսուցիչ: Լուսվա ձորերում նրա դրոլակը հնչեցնում է Կոմիտասի ու Քոմանյանի, Եկմալյանի, Կարա-Մուրզաի, Ռոմանոս Մելիքյանի, մեր բոլոր մեծերի ստեղծագործությունները: Փայտից սրատրաստված ավանդական դրոլակը դառնում է զգացմունքների արտիչ:

Ադ արարիչը ինքն է՝ Արտավազ Տեր-Հովհաննիսյանը:

**Մ Կ Ր Տ Ի Ձ
Մ Ա Լ Ի Ա Ս Յ Ա Ն**

ՀԱՅ վաստակավոր արտիստ



Շ Ի Ր Ա Կ Ի Ե Ր Գ Ը

Շիրակը մեր ժողովրդին և աշխարհին շատ տաղանդներ է տվել: Այս գրքի առաջին Լեզրում դուք ծանոթացաք Լևոն Մարտյանի անցած ճանապարհին: Հիմա խոսքը նրա գործի արժանատիոր շարունակող Սկրտիչ Մալխասյանի մասին է:

Երբ հայրը՝ աննաշված շվիանար ուսուս Կարոն մեկնեց ռազմաճակատ, Սկրտիչը փոքր տղա էր: Ութ տարեկան հասակից Լեւինյանի պիտույքների պալատի ժողովրդական գործիչների անսամբլում նա արդեն առաջին քայլերն էր անում:

Հին Գյումրի... Ձորի հողագից սկավոլ տների ծայքերում շատ երգ ու երաժշտություն կար: Այդ երգերը բարձրանում էին ժողովրդի սրտից, ժողովրդական վարպետների կատարմամբ: Սկրտիչը սիրեց իր Գյումրվա, իր ժողովրդի երգերը:

Երբ Հափի(նարմոնիսի Լեւինյանի մասնաճյուղի տնօրեն, հետագայում հանրապետության ժողովրդական արտիստ ժան Էլչյանը նրան Բրավոյինց ճվազելու, սպասանին մի վախ ունեցաւ, նվազել հանդիսատեսի առջև, դուրս գալ քեմանադրակ՝ անքան էլ դյուրին չէր:

Ատաշին կատարումները Լեհինականի ֆինանսմանիայում տղային բերեցին առաջին ծախերն ու առաջին գովազանքները:

«Երբ խնրի հետ բնւ բարձրացաւ,—միշտն է Մկրտիչը,—յանդիտով ծիծաղի ալիք բարձրացաւ: Փոքրամարմին, վտիտ երեխա էի, և հանդիսականներին առիթ տվի սրամտելու ու կատակելու: Իսկ երբ սկսեցի նվագել Ջիվանու «Ջախորդ օրերը»՝ քար լուրջուն տիրեց: Նույնիսկ մի քանի անգամ բնւ Բրավոյիեցին»:

Նրա առաջին քայլերը սկսվելով հարազատ Գրտնովա փոքր բեմա՛տաթակից, շարունակեցին իրենց ճանապարհը դեպի մայրաքաղաք, դեպի մեծ բեմեր:

Սամարոնցոյն «Աշխարհի ժողովրդական մուլաներ» սինյոզիտումնա տարբեր վայրերից եկած մի շարք անվանի դուդուկահարների հետ միասին քարձր պահեց իր ժողովրդի դարերից եկող ազգային երաժշտոյան պատիվը: Սինյոզիտնի քարձրագոյն պարզեր՝ աշխարհի գալաթը, հանձնելվեց նրան (սլն այժմ ցուցադրվում է Մոսկվայի Արևելքի երկրների թանգարանում):

Տարիները նրան նոր հաղթանակներ բերեցին: Մկրտիչ Մալխասյանը դարձավ ժողովրդական երաժշտական գործիքների համամիութենական և հանրապետական փառատոների ետակի դասիները:

Քսան տարուց ալելի դուդուկահար Մկրտիչ Մալխասյանը դեկտաբրում է Լեհինականի սիոներների պալատի ժողովրդական գործիքների աստանքը: Այնտեղից, ուր նա սկսեց իր երաժշտական առաջին քայլերը, նրմա դուրս են գալիս շնորհաշատ պատանիներ ու աղջիկներ: Նրանք հնչեցնում են մեր ազգային նվագարանները:

Երաժշտոյանը սկսվեց նրա նրգի ճանապարհը և երաժշտոյանը շարունակվում է: Նրա բնտանիքում երաժշտոյանը հնչում է ոչ միայն Մկրտիչի, այլ ամբողջ ընտանիքի անդամների կատարմամբ:

—Երկու դուտրերս էլ նաշնակահարուհիներ են,—պատմում է Մկրտիչ Մալխասյանը,—դեռ փոքրուց նրանց սիրելի էր ազգային երգ-երաժշտոյանը:

Մալխասյանը հնտորեն տիրապետում է հայ ժողովրդական մի շարք նվագարանների՝ դուդուկ, շվի, գուռնա, քուլ...

Բազմազան է նրա նվագացանկը՝ «Ին լաւան», Ջիվանու «Ջախորդ օրերը», ժողովրդական «Քարտվանն անց կացալ», «Լոնց, ամպերը...» և այլն:

Սակայն Մկրտիչ Մալխասյանի նվագացանկում սուհնետաշարավոր «Գրտնովա պարելանակներն են», որոնք նա կատարում է մի առանձին սիրով ու վարպետոյանը:

1978 թվականին Երևանում ձայնագրվեցին Երա հայ ազգային մեղեդիների կատարումները:

«Մեղեդի» համամիութենական ֆիրման չորրորդ անգամ Մալխասյանի կատարմանը ձայնագրեց մեր ազգային պարեղանակները: Վերջին ձայնավախտակը հայ ազգային երաժշտության 15 ատեղծագործությունների ընտրանին է:

«Իձվար գործ է ձայնագրվելը: Բայց այդ պահերին ես հպարտությամբ եմ լցվում,—ասում է Մկրտիչը:—2^{րդ} որ մեր ժողովրդական մեղեդիները շրջելու են երկրե-երկիր, դատնալու են շատերի սեփականությունը: Օտար ասփերում ապրող մեր հայրենակիցները ձայնավախտակների օգնությամբ ճնարավորություն կունենան հաղորդակցվելու հայ երգին ու երաժշտությանը, իրենց ծնող հայ ժողովրդի հոգևոր հարստությանը»:

Հայ մեծ քանաստեղծ Հովհաննես Ծիրազը գրել է. «Մեր ժողովրդական նվագարանների վարպետներն իրենց մեջ ոչ միայն պահպանում են մեր ազգային երգի համն ու հոտը, այլև խոսում են մեր սրտի ճեռ՝ մեզ դարձնելով իրենց զերիներ»:

Այդպիսին է ՀՍՍՀ վաստակավոր արտիստ, դուրսվաճար Մկրտիչ Մալխասյանը:

ՀՈՎԱՆՆԵՍ ԿԱՍՅԱՆ



Դոկտորանոս Հովհաննես Կասյան (աջից) ՀՍՍՀ
ժողովրդական արտիստ Գուրգեն Թումանյանի հետ

ՍԱՏԱՔ-ՆՈՎԱՑԻ ԸՈՒՆՉՆ ՈՒ ՈԳԻՆ

Հին քիֆիսեցիները այսօր էլ հիշում են «Պեպո» կինոնկարի նկարա-
հանումները՝ Գուր Գեոի ափին. Մետեիի բերդը տանող ճամապարհին բազ-
մուքյուն էր հավաքվել և ունկնդրում դուրսի գնալով մեղեդիները:

Դուրսով...

Անտակ գաղտնիքներ ունի իր մեջ ամբարած այս փառքիկ, փառյալ փո-
ղը, որը դարձրի ի վեր ուղեկցել է հաշիմ թե ուրախության, թե տխրության
պահներին: Նա դարձել է նրա հոգին ու զգացմունքը, երգն ու կամչը:

Փոքրիկ Հովհաննեսենց տանն էլ հաճախ էր հենչում այդ գաղտնիկ նվա-
զարանը. նվագում ու երգում էին ընտանիքի բոլոր անդամները. եղբայրը՝
Ազատը, քույրերը, ի՛նչ մայրը.

Լուսնակ գիշեր

Բուրբույին քուն չունեն...

Կամ էր փոքրիկ տղան մոր՝ տիկին Ասֆենիկի երգը և աչքերի առջև
հառնում էին հացոց մով երկնքի ու լուսնակ գիշերների փայլը, մաճկալը, որ
եղևում էր հերկելու հողը հայրենի:

Երգը ծնվում է կյանքում, աշխատանքի մեջ և կյանքն է երգի օրրանը:

«Ինչ մանուկ հասակից Հովհաննես Կասյանը երգի մեղեդիները կարողացավ ամօքվացնել իր հոգու ծալքերի միջով և հասավ այն մեծ բեմամարտական, որը կոչվում է ժողովրդական լաբան:

Տղան փոքր հասակից բախտ ունեցավ ունկնդրելու այնպիսի հույզված վարպետ դաժնուկանոսների, ինչպիսիք են Մարգար Մարգարյանը, Ասոն Մարտիկը, Կարո Չարսույանը, Վաչե Հովսեփյանը, Շուխրեյի Գևորգն ու Ասոն Ասիրյանը, Ջիվան Գասպարյանը, Թաչիկ Դոգդորովովը և Սուրեն Գիլանյանը...

Անցնում են տարիներ, մեծանում է Հովհաննեսը և համոզվում, որ առանց երաժշտության, երգի ու նվագի դժվար է իր համար: Հավաստապես մնա սիրում և նվագում էր դուդուկ, շվի, գոռնա, կարմետ: Ավագ բնկերներից լսած լսեմ մի ոչիս մեղեդի փորձում է վերարտադրել, նվագում է «Գլխ լանան» և «Զուռնի տրեհին», «Հովի կանչն» ու «Կարոյի սրվենն»:

Սակայն չէր գրհանում, նրան թվում էր, որ իր դուդուկն ահմես չի դալվայում, ինչպես Վրաստանի հովերն ու ջրերը...

Գովն սրտով ուրվական,
Թիֆլիս քաղաքը պատվական,
Հույ գեղեցիկ են, սիրական
Վրացտանա գոգայները...

Հովհաննեսն առավոտները վաղ դուրս էր գալիս տնից, գնում Քոտի ափը, նստում գետափին ու երկար, երկար նայում հոտող ջրերին...

Երաժիշտ Հովհաննես Կասյանի վարպետությունը հոկեղու, մաշակը բարձրացնելու, կատարողական բարձր կուլտուրա պատվաստելու գործում մեծ դեր խաղաց «Սալաթ-Նովա» անսամբլը, որտեղ արդեն 30 տարի նվագում է Հովհաննեսը: Անսամբլի գեղարվեստական ղեկավարն է Վրացական ՍՍՀ վաստակավոր արտիստ Մկրտիչ Ղազարյանը: Անսամբլի հետ Հովհաննեսը շրջել է Վրաստանի տարբեր շրջաններն ու քաղաքները, հանդիսատեսին ներկայացրել Սալաթ-Նովայի և ժողովրդական երգեր, որոնց մեջ լավագույն համարներից մեկը դարձավ «Որվան ակսեր»-ը.

Որվան ակսեր, սարեն կուզտ,
Սարի մարալ կըփնտրես,
Ասա, յարաք, դու չտեսա՛ր
Իմ մարպին, իմ բալին...

Հարուստ ձայներանգ, խորը տխրություն ու թփփծ ունի Հովհաննեսի դուդուկը: Նրա մեղեդիները հարազատորեն անհրադարձնում են հայկական ժողովրդական նվագարանների կատարողական արվեստի ավանդույթները, որոնց մի մասը վաղուց ճնշվել են տարբեր բեմերում և ժողովրդական տոնակներությունների ժամանակ:

Հովհաննեսը վարպետորեն տիրապետեց իր նվագարանին, աշխատանքի անցավ Թրիխիի արնելվան գործիքների երաժշտական թրպուրում, մտերմացավ հայ և վրացի վարպետ դուդուկամարների հետ, հոգու բոլոր թելերով կապվեց Սայաթ-Նովայի երգերի անգուգական կատարող Գևորգ Զաքարյանի (Գլավախ) հետ. երկար տարիներ երաժշտական համագործակցություն սկսվեց նրանց միջև. երկուսի արվեստի մեջ էլ հաստատուն տեղը գրավեց Սայաթ-Նովան՝ իր երգ ու տաղով, սիրո ու բարեկամության ընթրով:

1970 թվականի դեկտեմբերին Մոսկվայի սովետական բանակի Կենտրոնական տան դահլիճում ճեչեց կոմպոզիտոր Հայկ Մարտիրոսյանի «Տոնական հայերգանքը», որտեղ փոլային նվագախմբի հետ առաջին անգամ դուդուկով հանդես եկավ Հովհաննես Կասյանը (նվագակցող՝ Մուրեն Ներսիսյան):



Վրաստանի հայ դուդուկամարներ (ձախից) Հովհաննես Կասյանը, Յուրի Մուրտյանը, Վառդիմիր Պետրոսյանը, Մուրեն Ներսիսյանը և Կորյուն Պողոսյանը

Հայ դուդուկամարն իր հաջող ելույթի համար պարգևատրվեց ԱՍՀՄ զինված ուժերի միջնորդության պատվոգրով:


Հովհաննես Կասյանի բազմաթիվ պատվոգրերն ու զովատանագրերը, Վրաստանի ու Հայաստանի հեռուստատեսությանը տրված ելույթները նրա

արվեստի գնահատականներն են, ինչպես նաև ջերմ վերաբերմունքն այն բազմաթիվ ունկնդիր-երաժիշտների, որոնք ճանձնի պահեր են ապրել, լսելով նրա կատարումը «Կուունկը», «Հովերն րնկան», «Մանկալը», «Դիև խամանը», «Հեյ, ջանը», «Սամարին»:


Հովհաննեսի Լաճախյանի դուդուկահարների վեցյակի կատարումը վարպետությամբ էն հնչում Սալաթ-Նովայի «Աշխարհումս այս չիմ բաշիր», «Հրեն սելերը», «Աշխարհումս իմն դուն իս», վրացական ժողովրդական և այլ երգեր, որոնք բազմաձայնության գեղեցիկ օրինակներ են:

Հայկական ժողովրդական և Սալաթ-Նովայի բազմաթիվ երգերն ասե: ատելոված էն դուդուկի համար: Հազար պարեղանակները: Հայկական շատ պարեր անհնար է պատկերացնել առանց դուդուկի մենանվագի: Երգի ոգին, պարի ոգին է դուդուկը ջերմ, մեղեդային:

«Հուզականություն, հայկական ժողովրդական մեղեդիների մերքին զգացություն, պրոֆեսիոնալ կատարողականություն և վիրտուոզ տեխնիկա»,— այսպես է գնահատել Հ. Կասյանի արվեստը ռադիոյի և հեռուստատեսության Ա. Մերանգույանի անվան ժողովրդական գործիքների անասնրի գեղար-



Քիֆիսանյա Լոսիլաները զուգ ելին Գարուզ գերեզմանաբարի մոտ: Կննորումն էրգիչ Կնորզ Ջարսալան է:



վեստական դեկավար, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմսոզիստր Մանվել Բեգլարյանը:

Ամեն տարի մայիսի վերջին կիրակի օրը Թբիլիսիի Ա. Գևորգ եկեղեցու զավթում հավաքվում են բազմաճակատ երաժշտասերները՝ Վրաստանից, Հայաստանից ու Ադրբեջանից մասնակցելու ավանդական Վարդատունին, նվիրված անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության մեծ երգիչ Սայաթ-Նովայի պաշտոն հիշատակին:

Այդ օրը նորից հնչում են անմահ Սայաթ-Նովայի երգերը Թբիլիսիի դուրովահարների վեցյակի կատարմամբ, որոնց մեջ է համամիութենական և հանրապետական մրցույթների դափնեկիր Հովհաննես Կասյանը:

Հովհաննեսի ամեն մի կատարումն ունի իր նշանակությունը, ժամանակի գույները: Այսօր նա իր նստից է տանում Թբիլիսի քաղաքի դուրովահարներին, իր նվագարանին հաղորդելով այն հատուկ երգերն ու գույների ներկայանալը, որով առանձնացվում են Թբիլիսամայ դուրովահարները:

«Նրա կատարողական երգացանկում թերևս կենտրոնական տեղն ու թիմնական առանցքը մնում է անմահ Սայաթ-Նովան,—ասում է Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի նախագահ Բենիկ Սեյրանյանը:

Վարդատունի մեծ տոնահանդեսներին մասնակից են դառնում նաև հայ դուրովահարները, Սայաթ-Նովայի երգերի անզուգական կատարող, հաճախված երգիչ Գևորգ Զաքարյանը: Նրան նվագակցող դուրովահարների խմբի մեջ իր ուրույն տեղն ունի դուրովահար Հովհաննես Կասյանը: Թբիլիսիի հայ մտավորականության կողմից կազմակերպված բոլոր հանդիսություններին, պաշտոնական ու ոչ պաշտոնական միջոցառումներին ակտիվ մասնակցություն է ունենում մեր քաղաքի սիրելի դուրովահար, տաղանդավոր երաժիշտ Հովհաննես Կասյանը»:

Այժմ վարպետը նաև մանկավարժական գործունեություն է ծավալել. Թբիլիսիի № 80 միջնակարգ դպրոցի շենքում գործում է պատանի դուրովահարների դպրոց, որտեղ հայ և վրաց պատանիները իրենց փորձված վարպետից բնօրինակում են դուրովահարողական արվեստի գաղտնիքները՝ վարպետ Հովհաննեսի (Օզոն) արժանի հետնորդները դառնալու համար:

Մեր խոսքը շնորհալի դուրովահարի մասին ուզում ենք ավարտել նրա բազմաթիվ երկրպագուներից մեկի՝ ճշմանավոր գրող Վիլյամ Սարյանի հետևյալ խոսքերով. «Ես բնօրինակով Հովհաննես Կասյանի նվիրած հայկական դուրով, այն պետք է տանեմ սիրտս: Ես չեմ մոռանա նրա նվագը, որն իր մեջ պահում է Սայաթ-Նովայի շունչն ու ոգին»:

Թբիլիսի, 1959 թվական»:

**Գ Ե Ո Ր Գ Ի
Մ Ի Ն Ա Ս Յ Ա Ն**



ԱՆՄԱՅՑՈՐԳ ԿՎԻՐՈՒՄ

Գեորգի Մինասովը (Մինասյան) աշխատում է Հայաստանի գուսանական և ժողովրդական երգի պետական անսամբլում: Գրություն է նվագում:

Նա իր առաջին քայլերն արել է Բաքվում, ռադիոյի ժողովրդական գործիքների պետական անսամբլում: Նշանավոր խմբավար և դիրիժոր Ավանես Իոննիսյանի անսամբլում տարիներ շարունակ ցուցադրեց ոչ միայն դրոյուկի տիրապետման իր հմտությունը, այլև սեփական երանգը և իր կատարողական բազմազանությունը:

Գեորգի Մինասովը վարպետության հասավ հայկական ժողովրդական «Հովերն ակադեմի», «Աստղալից մութ գիշեր» ստեղծագործությունների կատարմամբ:

Նրա դրոյուկը մեղմ ու հեշտասամ է հնչում: Նկատվում է ոչ միայն երաժշտի սերը, այլ անհուն կարողություն:

Ծնորհակ երաժիշտը արդեն 5-րդ տարին է մեծ սիրով մասնակցում է Հայաստանի ժուռնալիստի տանը կազմակերպվող ավանդական «Նյա երեկո դրոյուկի հետ» երեկոյին, նվիրված ՀՍՄՀ ժողովրդական արտիստ վաչև Հովակիսյանի անմահ հիշատակին:

Երաժիշտը ճշտորեն բնթունելով իր դերը մեր արվեստի անդաստանում, կարողանում է հասցնել այն ճիշտ երանգը, որը յուրահատուկ է մեր ազգային նվագարանին:

«Դուդուկի վարպետ»․ այսպես են կոչում նրան:

Ուրախակի է, որ դուդուկի շատ վարպետների կողքին մեր արվեստում կա հայկական նվագարանի շնորհաշատ այնպիսի մեծակատար, ինչպիսին Գեորգի Մինասովն է:

Ավարտելով մեր հակիրճ խոսքը Գեորգի Մինասովի մասին, ճշևք նաև, որ նրա հայրն ու հորեղբայրը շվի, դուդուկ և սրինգ էին նվագում: Երաժշտական ընտանիքի տղան շարունակում է իր գերդաստանի լավագույն ավանդույթը:

Հայհասերգի ճախաձեռնությամբ 1985 թվականի աշնանը Լենինականում կազմակերպված «Դուդուկն է երգում Գլուխիլուն» թատերականացված մրցույթ-տոնամանդիլետում շատերի կողքին փայլեց Գեորգի Մինասովը: Լենինականի քաղաքային մարզադաշտում հազարավոր հանդիսատեսներ շունչները պահած լսում էին վիրտուոզ վարպետի նվագը և՛ զարմանում, և՛ հմայվում:

Անդրկովկասյան դուդուկահարների մրցույթում նա նվաճեց պատմիչ շիպլում:

**Ժ Ո Ր Ա
Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն**



ԳՈՒՂՈՒԿԻ ՆՎԻՐՅԱԸ

1939 թվականին Լենինականի ժողովրդական գործիչների մանկական անամբիոն 12-ամյա ժողա Սիմոնյանը սկսեց ելույթներ ունենալ: «Հոյնազանը» առաջին մեղեդին էր:

Անամբիի ղեկավարը ուշադրություն դարձրեց տղայի ունակությունների վրա: Հնոգհետև հարստացավ հրա երգացանկը: Այն ժամանակ տարածված էին «Ճորվա, Ճորվա», «Արվաչայի քյանարը» և այլ երգեր: Սակայն պատահականությունը ավելի բախտորոշ դարձավ պատահու համար: Լևոն Մաղոյանը լսեց տղայի նվագը... Լենինականի ֆիլհարմոնիայի բաց պատուհանից:

— Իսկի վո՛ւ՛վ կչափե,—հարցրեց Լևոն Մաղոյանը ֆիլհարմոնիայի դիրեկտոր ժան Էլոյանին:

— Կարծեմ քուտանչի Աղյաու թո՞ւն է:

— Էրթանը լսենք,—առաջարկեց Լևոն Մաղոյանը:

Գնացին:
**Տղան կաս-կարմիր կտրած, շեր սպառում, որ իրեն կարող են լսել սր-
 պիսի անվանի արվեստագետներ, լսեն ու... հավանեն:**
 — Տղաս, կգաս ֆիլմարմոնիս՝ նվագելու,—առաջարկեց Փան Էլյուանը:
 — Վախենում եմ,—եղալ նրա պատասխանը, ու նայեց վարպետ Լևոնի
 կողմը:
 — Օո, չվախմաս, իս կողքիդ եմ,—եղալ դուրյուկանորի պատասխանը:
 Վարպետ Լևոնի խոսքերը ոգևորեցին բնատուր շնորհով օժտված կի-
 տասարդին: Նա մի առանձին սիրով կապվեց իր գործիքին, կրկնեց բունն
 ու հանգիստը:



Հայ մեծ քանադորներ Փրազի մեծ

Նվագարանին տիրապետելու համար սրբա՛ն ջանք ու եռանդ պահանջ-
 վեց, մինչև եկալ վարպետությունը, մինչև յուրացրեց նրա կատարողական
 ոճն ու տեխնիկական բարդությունները:

Փրազ Սիրունյանը («Հավալ Փորան», Լենինականում ընդունված է մա-
 կանուն դնել ճանաչված մարդուն) իր Արշաի պատի պատմաններից գիտեք,
 որ դուրսը Հայաստանում միշտ էլ իր ծանրակշիռ տեղն է ունեցել հարա-
 77

նիքների ու խրովանձանքների, քեֆի և ուրախության, սգո և թաղման արարողությունների ժամանակ: Ծնորհիվ հայ անվանի դուրդկահարներ Սարգսր Մարգարյանի, Կարո Չարչոլյանի, Կարսայետ Եղոյանի (ուսում «Փանչո») և մյուսների, այդ նվագարանն արդեն բեմահարթակ էր բարձրացել՝ դարձել համերգային ծրագրերի մի յուրօրինակ զարդ:

Ժորա Սիմոնյանը բարձրացավ Լենինականի ճանաչված երաժիշտ-դուրդկահարների աստիճանին: Նա շրջեց հայրենի գյուղերն ու քաղաքները, ունկնդիրներին ներկայացնելով Սալաթ-Նովայի, Թերամի, Հավատու, մեռ մյուս երգահանների գործերը:

... Բարձրահասակ, բարետես այդ մարդը քայլում է աչսօր Լենինականի հին փողոցներով դեպի Արփաչալ ու Զորի Բողազ: Նա իր հոգում ամփոփում է Գյումրվա տաղանդավոր մարդկանց հիշատակը, որոնք, Խառնակյանից մինչև Տիգրանյան ոսկեգօծել են այն հողը, ուր մշտադրո՞ւմ է հայ ազգային սովետի անմար կրակը:

**Վ. Ա. ՉԵ
ՍԻՄՈՆՅԱՆ**



ԼԵՌՆԵՐԻՑ ԲԱՐՁՐԱՅՈՂ ԵՐԳԸ

Երգը հայ ժողովրդի մշակույթի ամենամին ճյուղն է, սերտորեն կապված նրա կյանքին ու կենցաղին, անցյալին ու ներկային, ազատության ու անկախության համար նրա ներսական պայքարին: Հայ երգը ազգի բնավորության, հոգեկան կերտվածքի արտահայտությունն է:

«Այն, ինչ-որ ունեցել է ժողովուրդը, երբեք չի կարելի կորցնել»,—սա է վաստակաշատ դուդուկամար Վաչե Սիմոնյանի դավանանքը:

Սիդեն չորս տասնամյակից սովելի նրա գոլտրիկ նվագարանից ճնշում է հայկական ժողովրդական նիւսախոսք երգը՝ պարզ, անբաճույճ ու փափուկ:

Հովիտի օրը է Սպիտակի շրջանում: Անտառում հավաքվել են շրջանի աշխատավորները: Տոն է, աշխատավորի, բերքի ու բարիքի: Իսկ միթե՞ հովիտները կարող են առանց գունձա-դնոյի, առանց երգ ու պարի, առանց Վաչեի նվագի: Ու կարծես առանձնում է նրանց ոտքերի տակ հողը, հողը դրոնկով ստապարեզ է ստնում արտոլ տղաների խումբը: Ուները մտալի պես իրար մեջ խրած, անդրդվելի պատը շարժվում է, շարժվում է դեպի նվագողը: Իսկ վարպետ Վաչեի նվագը ճուտում է կարկաչուն ստվի պես:

— Քոչարի, քոչարի նվագի, վարպետ Վաչե,—տարացած գոտով են հովիտը տղաները:

Դե, Վաչե Սիմոնյանի նվագած քոչարին էլ ուրիշ է, գրողական, գալստական, գրույալ, որից մեր պատերի ու սափռապատերի ձայնն է սառն լսվում: Վաչե Սիմոնյանը ժողովրդական տոնախմբությունների և որսախորհուրդների ոգին չէ միայն: Երկար տարիներ աշխատում է Սպիտակի շրջանային մշակույթի պալատի ժողովրդական գործիքների անսամբլում, որի սիրված և գնահատված դուռուկանարն ու մնակատարն է:

Երջանի մշակույթի պալատի (1949 թ.) ժողովրդական գործիքների անսամբլի հիմնադիրներից մեկն է: Անսամբլի ղեկավար, սրնգանար Աշխարհարեկ Սաքանյանի հետ միասին վարպետ Վաչեն ստեղծեց այդ խումբը:

Առաջին հերթին կազմվեց ժողովրդական և ազգային երգերի մի գոյություն ունեցող անսամբլ: Անսամբլն եղյալ շրջանի գրողներում, հողի աշխատավորների համար երգ ու պար տարավ, օգնեց, որ դաշտի մարդը լավ տրամադրություն ունենա, որ մեր ժողովրդին քերք ու բարիք շատ տա:



Վարպետ Վաչեն իր թոռնիկ-աշակերտ Արմենի հետ
արքայազմնոցի ժամին

1972 թվականից վարպետ Վաչեն միաժամանակ ղեկավարում է Սպիտակի վերելակաշինական գործարանի ժողովրդական գործիքների ինքնագործ անսամբլը, իսկ 1974 թվականին անսամբլը իր յուրատիպ համերգացանկով հանդես եկավ Երևանում:

... Հայաստանի ժողովրդային տանը վարպետիկ Վաչե Հովսեփյանի հիշատակին նվիրված էրեկո էր: Վաչե Սիմոնյանը հաջողությամբ կատարեց Վաչե Հովսեփյանի «Իրիկհամուտին» երգը.

... Հոգնել եմ ես ցավոտ, դավոտ սերերից,
Ամենքի դեմ սիրոս քացած, աչքս՝ փակ...

Այսօր էլ նվագում է Վաչե Սիմոնյանը: Կարևորը, որ հոգնություն չկա
նրա կատարումների մեջ. 200-ից ավելի հավական, ազգային և ժողովրդա-
կան երգ ունի իր համերգացանկում:

Արդեն բոլորել է նրա կյանքի կենդանուրդը, բայց, ինչպես և ստաց, կատա-
րողական արվեստի մեջ քնարական շունչ կա, երգերի պայծառ ու ջանել մի
սեր:

Այդ սերը նրա դուդուկից հորդող երգն է, Ասիտակի լեռներից բարձրա-
ցալ մեր ժողովրդի զուլալ ու արտաբաց երգը:

**Վ. Լ. Ա. Գ. Ի. Մ. Ի. Բ.
Կ. Բ. Ո. Յ. Ա. Ն.**



ԱԿՈՒՆՔՆԵՐԻՆ ԼԱՎԱՏԱՐԻՄ

Հայրը՝ Ներսես Կրոյանը, դուրսով ու գլուխն էր նվագում: Եղբայրը՝ Պապիկ Կրոյանը, նրգիչ էր: Վլադիմիրի ներխուժումն էլ երաժիշտ դարձան. աղջիկը՝ Էլմիրան, քանոնահարուհի, Կիրովյանի Մ. Թավրիզյանի սնված է-ռաժշտական ուսումնարանի ժողովրդական գործիքների անսամբլի գեղարվեստական ղեկավար, մյուս աղջիկը՝ Նելլին, քյամանչայի դասատու ուսումնարանում: Թոռնիկը՝ Նունեն, շվի է նվագում, որդին՝ Բորիսը, ակորդեոն: Իսկական երաժշտական ընտանիք է:

Իսկ ինքը՝ Վլադիմիրը, ճեռալոր այն տարիներին, 1944 թվականին Լեհիանական ֆիլմագրոմիայում լսեց Մադոյանի նվագը...

Սկսեց շվի նվագել, միշտ դուրսով երազելով:

Տոն էր նրա համար, երբ ուղիտի ժողովրդական գործիքների անսամբլը Կիրովյանն էկավ: Նվագում էր Լևոն Մադոյանը:

1949 թվականին, լսելով Վլոդյային, Թաթուլ Ալթոնյանը նրավիրեց նրան Հայաստանի երգի-պարի անսամբլ:

Աշխատեց... 13 օր: Սակայն Կիրովյանի՝ հայրենի քաղաքի կուլտուրայի բաժնի «գողացավ» նրան:

— Մերն էս, մերն էլ մենա...
Այդ օրվանից Վլոդյա Կրոյանը հայրենի քաղաքում է:

1949 թվականին տրիկոտաժի ֆաբրիկայում հիմնադրեց երգի-պարի անսամբլ: Դարձավ գործիքային մասի ղեկավար:

Ապա նոր կողելիվներ, նոր կատարումներ, նոր շրջագայություններ:
Դարձավ հանրապետական փառատոնի դափնեկիր, ճանաչվեց ընդուն-
վեց, ծափահարեցին:

Նվագում է հայկական ժողովրդական մեղեդիներ, ազգային հին ու նոր
երգեր: Նվագում է ինքնաստուգ, իր հնչերանգներով: Նվագում է, մտածելով
ու հիշելով այն հին օրերի մասին, երբ շուկայից առավ փոքրիկ շփին, երբ
Լևոն Մարտյանի դուդուկից արթած՝ իր դուդուկը նետք բերեց ու նվագեց, նը-
վագեց իր սրտի բոլոր լարերով: Հնդին դարձավ երգ, երաժշտություն, մեղե-
դի:

Դուդուկահարների անդրկովկասյան մրցույթի դափնեկիր է Վլադիմիր
Կրոյանը:

**Լ Յ ՈՒ Գ Վ Ի Գ
Ղ Ա Ր Ի Բ Յ ԱՆ**



ՃԱՏԱԿ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ

Նրա մեջ մի այրող բան կա, բորբոքող, անկասելի ձգող մի բան: Յուրաքանչյուր դուդուկանար իր ուղին սկսում է յուրովի: Այգ յուրահատկության մեջ է նրան ճանաչելու բանալին: Երբևէն մանրիսատեսի համար դժվար է թափանցել նրաժշտի ներքնաշխարհը. ինչ-որ բան մնում է խորհրդավոր, ինչ-որ բան անճանաչելի:

Դուդուկանար Լյուսիկո Ղարիբյանն իր աշխարհն ունի, իր ուրույն ու հմուտ նետագիրը:

Ալյակ է գործարանային ինքնագործ խմբից, այսա շարունակել *Թաթուլ Արտինյանի* անվան հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլում...

Նրա առաջին վարպետներից է բազմավաստակ դուդուկանար ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Ջիվան Գասպարյանը:

Երբ լսում ես Ղարիբյանի դուդուկը, կարծես վերադառնում ես հայրենի նրկիր ու տեսնում մեր եղեգներից ճնված ազգային երգի այն շտապիլը, որ այսօր ճնշում է աշխարհում:

20 տարի առաջ նա լսեց վաղամտիկ դուդուկահար Բորիս Թովմասյանին, կոմպոզիտոր Նաչատուր Ավետիսյանի «Կոտակները»:

Դուդուկն իր մոզական ուժով և երաժշտական ձգողականությամբ գրավեց պատանուն հոգին:

Ու թոռան, թոռան նրա նրազներում երգի կոտակները: Ու մնաց նրա հոգում դուդուկի կոտակը:

Կոտակները եկան անցան, դու նրանց ոնե մի գնա,
Արի, արի, եղբիկ սարի, դու մնա միշտ, մի գնա:

Լյուդվիգի համար Բորիս Թովմասյանի դուդուկը նրաչք էր, մի աշխարհ, որից ծնվեց այդ կոտակների երանը, քարձրուցավ շինջ ու կապույտ երկինքն ու տարավ իր ոնե հավերժության կրակը:

Դիտք, նրան թվաց, թե ողջ աշխարհում միայն դուդուկն է, առանց որի ճնարավոր չէ ապրել: Երևանի կարելի գործարանի ինքնագործ խմբից նա հասավ վիճել վաստակավոր կոնկրետիվ Հայաստանի Պարի պետական անսամբլ: Այդ ճանապարհը պայմանավորված է քրտնաջան աշխատանքով, ամենօրյա փորձերով, քազմաթիվ հրույթներով:

Սովորելով հայ դուդուկի վարպետներից, նրա նվազը պատր անկեղծ է ու անմիջական, լի դրամատիզմով, ջնարականության ու խոհական երանգներով: Այսօր էլ նրա հոգու երազներում թռչում են ջանկության կոտակները:

Դուդուկահար Լյուդվիգ Լարիբյանի մասին իր կարծիքն արտահայտեց կոմպոզիտոր Նաչատուր Ավետիսյանը.

«Հայաստանը բոլոր ժամանակներում ունեցել է վարպետ դուդուկահարներ, և այսօր նրանց թիվը սակի շատ է ու քազմազան: Մեր վարպետ դուդուկահարների մեջ իր ուրույն տեղն ունի Լյուդվիգ Լարիբյանը, որը համահավասար տիրապետում է թե՛ դուդուկին, թե՛ շվինգ, և թե՛ գրառնային: Նա ունի գեղեցիկ տեսքեր և նվագում է մեծ ճաշակով ու խիստ ազգային ոգով»:

**ԳՈՐԳԵՆ
Ա.Լ.ՈՅԱՆ**



ՆՐԱ ԳՈՐԳՈՒԿԸ ՈՒՐԱՅՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ

Մեր դուրսկանաների ընտանիքում Գորգեն Արդանը յուրամատուկ տեղ ունի:

Գորգեն Արդանը նվագել սկսեց, երբ 15 տարեկան էր: Ոչ ոք չսովորեցրեց նրան դուրսկ նվագել: Ձայնագրություններ էր լսում՝ Կարո Չարչոլյան ու Լևոն Մադոյան:

1950 թվականին արդեն նվագում էր վրացական ժողովրդական գործիչների անսամբլում:

1956 թվականից թատանար Մուկուչ Դազարյանի ղեկավարած՝ Կրասնաի ռադիոյին կից ժողովրդական երգի անսամբլի մեմակատարն էր, այնուհետև վրաց ֆիլմարտիկայի էստրադային անսամբլի:

Եթե մտանքը դուրսկանար Գորգեն Արդանի անցած ճանապարհին, սպա կտեսնենք, որ շրջադարձային էր նրա համար թրիլիսիում 1964 թվականին ստեղծված դուրսկանարների անսամբլը, որը ղեկավարում էր Միշա Սուքիասյանը: Այդ անսամբլը մեծ հաջողությամբ մասնակցեց անմահ Սալաթ-Նոյայի ծննդյան 250-ամյակին նվիրված փառատոնին և հորելյանական երեկոյին՝ շահելով երկրորդ մրցանակ:

Գորգեն Արղանի համար Սայաթ-Նովայի երգերի կատարումը դուրս-
կի վրա մի նշանաբան ուներ:

Արղանի կատարմամբ մրցույթում ճնշեցին «Էշխենուղը», «Բուն էն գլխե-
նը», «Քամանչան»:

Գորգեն Արղանի դուրովը ոչ միայն արտաբերում էր Սայաթ-Նովայի
երգի թախծային կանչը, այլ նաև լուսավորում մի նոր ճառագայթումով:

«Էշխենուղ» ու «Քամանչալուն» քնարական կերպարների կողքին
ճնշում էր հավատի կանչը վերադարձի կանչը:

1965 թվականից աշխատելով Վրաստանի երգի-պարի վաստակավոր
անսամբլում, նվագելով դուրուկ ու շվի, նա ոչ միայն հարստացրեց իր երգա-
ցանկը, այլև կատարողական վարպետությունը:

Գորգեն Արղանի կատարումը մի նոր երանգ տվեց մեր դուրուկի հն-
ուստաններին: Նա կարողացավ իր դուրուկի նվագը միանվել էստրադային
երաժշտությանը, հասնել նոր որակի:

Գորգեն Արղանն էստրադայում անբռնագրու է: Ինչ էլ նա նվագի՝ Վա-
չե Հովսեփյանի երգերը, «Վոտմնը», ժողովրդական երգեր, յոթ կոմպոզիտոր
Յուրի Վերդյանի «Վոնջերուղ դուրուկի համար», միշտ հարազատ մնալով
քնարին, նա դնում է իր անհատական կնիքը, որը ոչ միայն գնահատելի է,
այլև շատ ցանկալի:

Մի իտալացի դուրուկահարն ալսուր քնակվելով արդեն երևանում, նոր
ճանապարհներ է որոնում դուրուկի ննարավորությունները հանդիսատեսին
մատուցելու համար:

**Ե Ղ Ի Շ Ե
Մ Ա Ր Գ Ա Ր Ց Ա Ն**



ՀԱՅԿԱՎԱՆ ԿՂԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԱՐԵՏ ԿԱՏԱՐՈՂԸ

Եղիշե Մարգարյանը իմ կոմերիտական տարիների կենդանի, վառ ու կենսուրախ վկան է: Տարիների մտավորությունից այսօր էլ նրան համոզված եմ միշտ ժպտեինս, պայծառ հայացքով: Պարզապես դժվար է հավատալ, որ նա այսօր արդեն «շրջանցել է» իր կյանքի կեսըսրբյ:

Անհավատալի է:

Բայց ընդունված է ասել, որ «մարդն ինքն է որոշում, թե ինքն իրեն թանկ տարեկան է գգում»: Եվ ինձ թվում է, որ հիմա նա նորից, ինչպես անաչիճ անգամ՝ 1957 թ.-ին կրթարձրանա բեմամարթակ ու նորից կզերի իր դայլայլող շվիով ու նորից հաղթող կճանճաչվի:

1960 թվականին հանրապետական փառատոնում ոսկե մեդալ նվաճեց: Մտավկայի կոմպոզիտորների տան սրահում կազացած համերգը շատ պատահաճանառու էր երիտասարդ կրաճշտի համար: Ահա բեմամարթակ է բարձրանում բարձրահասակ, սև-սպռ մազերով մի հայ տղամարդ: Հնչում է հայկական անհուզական շվին՝ մեկ ուրպի, մեկ տխուր, պատմում նեռու Հայաստանում սարող ճովլի սիրո, անմահական այգիների, հազարան բլբուլի:



մասին: Գաղի՞նը լուս է, մնալված... Եվ հանկարծ խորաքանդակ կամարների տակ պայթում են ծափահարությունները՝ ջերմ, սրտաբոխ...

Առաջին շարքում նստած մի այնքան տղամարդ դանդաղ բարձրանում է տնից և բացակահանում՝ ապրես... հայ երաժշտության մեծ վարպետ, համաշխարհային ճանաչում ստացած կոմպոզիտոր Արամ Խաչատրյանն է:

Երաժիշտները բարձր գնահատեցին հայ երաժշտի արվեստը: Նա հավասարապես լավ նվագեց շվիտլ, գրոմնայով, դուդուկով... Առաջարկություն եղավ Մովսիսյանն ճաշնազրկել: Երա կատարումները՝ «Հովվի կանչը», «Դիե լամանը», «Հորթար-Հորթար», «Սուրմալու», «Բլբլույի ճիղ», «Հայաստան» ստեղծագործությունները:

Երևանի ավտոդղրի գործարան հասավ մի որսախ նամակ: «Ձեր աղծարանի աշխատող Եղիշե Մարգարյանը մասնակցել է Մոսկվայում կայացած նաևերգին, որը կազմակերպել էր ՍՍՀՄ կոմպոզիտորների միությունը և ձայնագրվել Ճայնակալատսկի համար: Նրա կատարումները բարձր են գնահատվել մանդիսականների կողմից: Հայաստանի կոմպոզիտորների միությունը խնդրում է նրան հայտնել մեր շնորհակալությունը:

Հայաստանի կոմպոզիտորների միության վարչությունն Գախագան
Լյուսարդ Միլգոյան:

Հետո նրա արվեստին էազիրդակից են դարձել Սովետական Միության բազմաթիվ վաշերում, Ռուսիայում, որտեղ շնորհալի երաժիշտը մասնակցել է նրգի համաշխարհային դիստատոնին, Բուդապիայում, Լեհաստանում, Հորդաստանում, Իրաքում և ամենուր նրա արվեստը ճուգել է մարդկանց արտերը, արժանացել համընդհանուր ճանաչման ու ճիանմունքի:

Մեծ է Եղիշե Մարգարյանի ավանդը նաև իր հարազատ ավտոդղրի գործարանի երգի-պարի խմբի կազմավորման, ավտոդղրագործների գեղագիտական դաստիարակության գործում: Որպես շնորհալի երաժիշտ-կատարող նա արժանացել է հանրապետական ու համամիութենական դափնեկրի կոչման՝ իր բարձր արվեստով նմայելով ու գեղագիտական մեծ հանուրք պատճառելով մարդկանց:

Եղիշե Մարգարյանի վաստակը գնահատվել է ըստ արժանվույն: Նա պարգևատրվել է սատովորբերով, մեդալներով: Բայց ամենամեծ գնահատանանն այն հարգանքն ու սերն է, որ սծա երեսուն տարի նա վայելում է հարազատ կրեկիթվում:

Համայնելով հայ դուդուկահարների անդատանը, նա իր կողքին ամեցրեց բազմաթիվ երիտասարդ երաժիշտներ, որոնք մարգարյանական քնառական շնչով ու տեխնիկայով փայլեցին: Նրա աշակերտների թվում է իր ճարագատ որդի՝ Մերուժանը, որի ջութակի նվագը լսելիս մտովի վերադառ-


նում եւ ու մտաբերում Եղիշե Մարգարյանի երիտասարդ տարիների կատարումները:

— Դուդուկը ազնիվ նվագարան է,— պատմում է շնորհալի դուդուկահարը, ուստի և ամեն անգամ, երբ ձևոքս եմ վերցնում այն, կարծես թե ամենում եմ, մոռանում ամեն ինչ, մտածում եմ, որ անպայման մարդու հոգին էլ պետք է մաքրվի, ազնվանա, որ աշխարհում ամեն մեկը պետք է լինի այնքան մաքուր ու շինջ, ինչպես մեր ազգային դուդուկն է:

Երբ լսում ես Եղիշե Մարգարյանի նվագը, զգում ես, թե որքան ազնվություն ու հմայք կա ծիրանի փալտից շինված այդ փոքրիկ նվագարանի մեջ, և ունկնդիրն էլ ամեն անգամ լսելով վարպետ Եղիշի կատարումները՝ մեր գողտրիկ ու սրտամոտ երգերը, որտեղ հայ մարդու խորախորհուրդ թախծ ու սեր կա անթաղված, մաքրվում է, վեհանում...

Եղիշե Մարգարյանի արվեստը մի քանի տասնամյակ է, որ շեյնդրենք ընդունվում է ունկնդիրների կողմից: Կա այսօր էլ շարունակում է բախվաճանություն պատճառել հապիսյան նվագարանների երկրպագուներին իր շնորհալի, վարպետ կատարմամբ:

**Ս Ե Գ Բ Ա Կ
Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Մ Ց Ա Ն**



ՆՐԱ ՍԻՐԻ ՕԹԵՎԱՆԸ

Շատ նվագարաններ էր լսել «Սերը» (ինչպես սիրում են կոչել նրան մասնակիցները՝ նրա դուդուկի երկրպագուները), շատերով միացել, բայց դրանց մեջ ուզեցի շոյել էր Մարգար Մարգարյանի դուդուկը՝ իր հոգեզնայլ ու թալշա տեմբրով:

Պատանի Սերյուկը մտիկից չէր ճանաչել անվանի դուդուկահարին, բայց շատ հաճախ «կպած գրամոֆոնին» ծամերով լսում էր վարպետաց-վարպետ Մարգարի դուդուկի ձայնագրությունները, լսում էր դուդուկի քաղց-րադուր ու հոգեպարար մեղեդու ելևէջներն այնպիսի հուզմունքով, որ կար-ծես, այդ նվագը պետք է դառնար ապագա ճակատագրի նախերգանքը:

Այդպես էլ եղավ: Սերյուկ Հովհաննիսյանը հնազանդ դուդուկահար Մար-գար Մարգարյանի դուդուկով և մնաց նրա անդալանան սիրահարն էր որչ կյանքում:

Աներեր եղավ սուպազ դուդուկահարի ճանապարհը դեպի ժողովրդա-կան երաժշտությունը: Նրա ավելի հասուն տարիներին դուդուկը դարձավ նրա հավատամքը:

Սեդրակ Հովհաննիսյանի համար երկրորդ ուսուցիչը դարձավ դուրովա-
հար Վաչե Հովսեփյանը, որը մի նոր երևույթ էր դուրովյանների անդա-
տանում: Վարպետ Վաչեն քացատիկ էր ու քացատիկ էլ մնաց դուրովյանար
Սեդրակ Հովհաննիսյանի համար: Վաչե Հովսեփյանի նվազը թևածեց իր
քացած զգացումների փառալոյր հանդեսում՝ մարդկանց մեջ սերմանելով քա-
րին ու ազնիվը, գեղեցիկն ու հմուտիչը:

Ուրախակի է, որ երամիշտ-դուրովյանարն ունի նաև սեփական երա-
ժըշտական ստեղծագործություններ՝ երգեր, որոնք ստղծն հնչել են Հայաս-
տանի ռադիոյով ու հեռուստատեսությամբ. դրանք են՝ «Ըտ արի, յար»,
«Սպասում եմ քեզ», «Ծով փերի», «Լմ օթևան» և այլ երգեր:

Այսօր էլ հայ դուրովյանարների գերդաստանի հասնետ զավակ դուրով-
կահար Սեդրակ Հովհաննիսյանը շարունակում է քայլել դուրովի գեղեցիկ
արանետներով:

**ԱՐՇԱԿ
ԱՐՇԱԿՈՒՆԻ**



Հ Ա Վ Ա Ս Ի Ո Ւ Փ Ը

Այսօր իմ միջոցառման ուղիքներում աննար է մնացել 40-ական թվականների Երևանը, իմ մանկության օրրանը, որ մեր ամենափրկի խաղաղիքը կոմֆետի թուղթն էր... Այսինքն՝ ով որ կոմֆետ էր ունենում, թուղթը գրքում էր ներքև: Հավաքում էինք այդ դատարկ գունավոր թղթերը և բակի մին ու մյուս ճամփաներին մրցում: Ո՛վ կհաղթի, ով ավելի կոմֆետի թուղթ կշամի:

Ու՛ն տուն չմտավ պատերազմը իր «սև թղթով», վատ «խաբարներով»: 20 միլիոն հայր, հորեղբայր, ամուսին ու տղա թղթից ավելատական ժողովուրդը մարտի դաշտերում:

Այս ակնարկում ես ուզում եմ պատմել Արշակունիների գերդաստանի մասին՝ Արշակի, Ատոնի ու Արմենի մասին:

Արշակը պատերազմի տարիների մարդկանց նմանօրինակ մի կերպար է, որ աճեց, մեծացավ Սովիեթ-բրյուրայի հաղորդագրությունների ճեղքը:

Աճան-կարմիր աշուն էր. հավաքվում էինք մենք՝ նրա հասակակիցները, գրուցում, հետաքրքիր պատմություններ անում և... նվազում: Սպասում էինք տուն դարձող հորը, բարեկամին, հարազատին: Տիրությունն ինչ-որ տեղ հաղվում էր, նեղանում:

Բնովին՝ում հաղթանակի դրոշ էր պարզված: Դրա համար սկսեց ճնշել

կլարենտը: Արշակը մինչ այդ շվի ու դուդուկ էր լսել ու հոգու խորքում մեծ սեր ունըր ազգային գործիքներից նկատումս:

Մի օր, այսօր արդեն հին վարպետ Տուշուն՝ դուդուկահար Հարություն Վարսպետյանը, դուդուկ էր նվագում հրանց բազում:

«Քունը փախավ Արշակի աչքերից: Ինչ-որ տեղից գործիք ձեռք բերեց, մի դուդուկ՝ և սկսեց «կողքից» նվագակցել հրանց:

Հետո թաթով Այրումյանի անվան երգի-պարի վաստակավոր անասնաբույժի մեծնակատար Հրաչիկ Վարսպետյանի դպրոցն անցավ: Ու առաջին սիրտ երգը հնչեց հրա շուրթերից:

Լուսնյակ գիշեր, թուրքովին բուն չունեն,
Ինձ տեսնողը կարծում է, թե տուն չունեն,
Վայ, տուն չունեն...
Տուն էլ ունեն, տեղ էլ ունեն,
Ցար չունեն...

Ժամանակի տարածված երգերից էր:

1948-ին կոմպոզիտոր Երվանդ Սահառունին լսելով հրա նվագը, հրավիրեց աշխատանքի իր դեկավարած անասնաբույժ (հա այդ ժամանակ «Աշխատանքային ռեզերվների» վարչության կուլտուրայի պալատի երգի-պարի անասնաբույժ գեղարվեստական դեկավարն էր): Այստեղ էին Վաչե Հովսեփյանը, Ջիվան Գասարյանը և ուրիշներ: Նվագակցելով հրանց, հայրենաբերեց դուդուկի վերելքի իր աստիճանները: 1949-ին մեկնելով Սովետական բանակ ծառայության, հա ստեղծեց ժողովրդական գործիքների մի խումբ և սկսեց դիմ, դուդուկ, քամանչա նվագել:

Վերադարձով երևան: Արշակը նվագակցեց Լևոն Մադոյանին, քամանչահար Գորգեն Միրզոյանին, երաժիշտ ունեցավ երգիչներ Ծողիկ Մկրտչյանի, Նորայր Մնացականյանի մետ, համերգների մեկնեց Հայաստանի շրջանները, եղբայրական հանրապետությունները:

«Հովիվ կանչը» մի իրական պատմություն է մեր լեռների մասին, մեր լեզունների մասին, որի անդրադարձումն է Հովհաննես Թիրազի «Սիամանթոն և Խջեզարե» պոեմի ներքնատողերը.

Ասում են, թե չկար երկրում ոչ մի ծաղիկ սիրտը սև,
Այդ օրվանից աշխարհ եկան կակաչները սրտանս,
Երբ որ խջեւն, Սիամանթոն ընկան սիրտ կես ճամփին,
Շնկան, հանգան, բայց չկորան... աշխարհ եկան վերստին:

Հավատի ուժը Արշակ Արշակունուց տարավ դեպի երաժշտություն: Այդ ուժն սարյուն է հրա սրտում մինչև այսօր, և այդ երգի արահետներով են գրվում հրա գավալները Լևոն ու Արմեն Արշակունիները, այսօր արդեն երիտասարդ, բայց ապագա իուստացող կրամիշտները:

**Լ Ե Մ Ի Կ
Ս Ա Հ Ա Ա Յ Ց Ա Ն**



ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԳՈՒԳՈՒԿԻ ՀԵՏ

Մեր երաժշտական մշակույթում եղել են վիրտուոզ դուդուկահարներ, որոնք այս գործիքը կատարելագործել և նոր մակարդակի են հասցրել: Սակայն մեր դուդուկահարների կողքին եղել և կան այս գործիքին նվիրված շատ երաժիշտներ, որոնք չեն երևում մեծ էկրանից. կամ նրանց մենք չենք ունենրրում համարգային դանիճներում: Այս երաժիշտ-տաղանտներին թվին է պատկանում Լեմիկ Մամակյանը, որը շուրջ 30 տարի դուդուկով հաճույք է պատճառում իր արվեստի երկրպագուներին:

Լեմիկ Մամակյանը 15-ամյա պատանի էր, երբ առաջին անգամ ձեռքն արավ դուդուկը: Նրա դասատուն և կուռքը դարձավ անվանի դուդուկահար Վաչե Հովսեփյանը, իսկ ավելի ուշ՝ ժողովրդական արտիստ Ջիվան Գասպարյանը: Լեմիկ Մամակյանը լավ դպրոց անցավ և, երկի, դա է պատճառը, որ նրա նվագը տարբերվում է...

Նրա նվագարանի հաճելի ձայնն ու տեխնիկան հնարավորություն են տալիս դիմելու մեր ազգային ամենատարբեր երգերի, մեղեդիների, պարեղանակների հաջող կատարմանը:

Ամիկ Սահակյանը ժողովրդական երաժիշտներից ստացիներից էր, որ փորձեր արեց բազմամյաց երաժշտության բնագավառում և իրեն նվագակցող երաժիշտների հետ հայ երգև ու երաժշտությունը հնչեցրեց երկնայն, եռամյաց, նաև քառամյաց: Նրա հարուստ երաժշտացանկում տեղ են գտել Մեծ Կոմիտասի և հայ անվանի գուտանների առեղծագործությունները, որոնք նրա կատարմամբ նոր երանգ և իմաստ են ստացել:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

ԵՂԻՇԵ
ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՔՆՆՈՒՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Կյանքում ամեն մարդ քննություն է տալիս՝ դարձնում, բռնում, ընտանիք առեղծվիս, իսկ արտիստը քննություն է տալիս ամեն օր՝ հանդիսատեսին:

... Այսօր Արագածի շրջանի Ախուրս գյուղը, որտեղ ծնվել է Եղիշե Մանուկյանը, կոչվում է Քերթառատ: Մանուկյանների տունը իսկական մշակույթի սկունք էր: Չէ՛ք ճախատում, հարցրեք հավաքվողներին: Գալիս էին երեկոյան և ճառում վարպետ Աղվանի օջախում: Ախուրսան փոքր գյուղ էր, բայց մարդկանց արտերը մեծ էին: Խոտում էին անցած-գնացած օրերից, հետո երաժշտություն լսում, հետո գնում հացատոմ: Հաց չէին թխում. հեքիաթ էին պատմում՝ քարո ու չարի, անցած ու գնացած օրերի, վիշապի ու ճառաստակի, կախարհի ու հրաշագործի մասին:

Այստեղից սկսվեց Եղիշե Մանուկյանի արվեստի հեքիաթային աշխարհին հաղորդակցվելը, այստեղից, և իհարկե հորից՝ Ալվանից, որը ինքնամուտաց նվագում էր, նվագում, ու որդին իր առաջին դասերն էր ստանում:

Կամաց-կամաց տղային սկսեցին օգնել, վստահել: Կլարենտի վրա նրա կատարումները հուզում էին ունկնդիրին, բայց ինքը զուտնա նվագելու հետ մեկտեղ որիչ նպատակ ուներ: Ասում են ցանկությունները միշտ չէ, որ կատարվում են, բայց Եղիշե Մանուկյանի ցանկությունը կատարվեց:

Ռուդոլֆը, զուտ հակակամ լինելով հանդերձ, իր մեջ կուտակած ուժի նաև տարբեր երաժշտական երանգավորում, տարբեր ճնշելություն: Օտարազգիները դուրովը համեմատել են հորդի հետ, հակակամ պիեզո՝ ֆիելտայի:

Տասնութամյա պատանի Եղիշեն Հայաստանի պարի պետական անսամբլ եկավ սրինգով: Տղան, ձեռքում սեղմած ծոցում թաքցրած սրինգը, վախվորած մտնեցավ անսամբլի գործիքային մասի դեկավար, կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանին:

... Եվ գոլտրիկ սրնգից գեղգեղաց մեր անզուգական «Հովվի կանչը»:

Պա 1967 թվականին էր:

Այդ օրվանից Եղիշեն դարձավ Հայաստանի պարի պետական անսամբլի նվագող, առաջին անգամ ոտք դնելով երաժշտական արվեստի այն մեծ ճանապարհը, որով անցել էին հանրաշանհ երաժիշտներ Լևոն Մադույանն ու Վաչե Հովսեփյանը, Ջիվան Գասպարյանն ու նրա ուսուցիչ՝ Վլադիմիր Հարությունյանը: Այդ օրվանից նա մի համեստ տեղ գրավեց գործիքային խումբի մեջ, ներքուստ հպարտանալով, որ ինքը նստել է իր ուսուցչի՝ ՀԱՍՀ վաստակավոր արտիստ Վլադիմիր Հարությունյանի կողքին: Եվ վարպետը ջերմությամբ ընդունեց ու սովորեցրեց նվագելու արվեստը իր բազմաթիվ աշակերտներից մեկին՝ Եղիշե Մանուկյանին:

Անսամբլում Եղիշեն շվիով նվագեց իր սիրած երգերը՝ «Հովվի կանչը», «Իլե յամանը», «Սոխակը» և որիչ շատ ստեղծագործություններ: Բայց հաճախ, բրդրից գաղտնի, իր ձեռքն էր վերցնում դուրովը, փորձում ճնշելով հանրաճանաչ դուրովահար Մարգար Մարգարյանին:

Հետամուտ լինելով նվագարանի ամկեղծ պիքնեթին, Եղիշեն հենց սկզբից կարողացավ դուրովը խոսեցնել ոչ այնպես, ինչպես ընդունված է, այլ այնպես, ինչպես սիրտն էր թելադրում:

Ռուդոլֆի գլխավոր հասակահիշը տեսքն է: Եղիշեն կարողացավ գտնել միայն իրեն հատուկ տեմպը: Ընդամենը տաս անցք ունեցող այս գործիքը մի նոր փայլ ստացավ նրա աճող վարպետությամբ:

Ռուդոլֆը առաջին հերթին երաժշտի ընկալումն է:

Եղիշե Մանուկյանի կատարողական վարպետությունը ոչ միայն պայմա-

նավորված է նրա դուրսի մաքուր արտաբերմամբ, այլև անհայտ հանդիսատեսին հասցնելու անհատական եղանակով:

Բեմի վրա Եղիշեն արտաբերում հանգիստ է, գոսպ և համաչափ: Առաջին պահերին անգամ ընկնված, մի քիչ էլ անխտամ: Բայց ամա նա նվագում է: Հնչում են առաջին ակորդները, Եղիշեն մոռանում է դանիճը, մոռանում է որ նվագում է, մոռանում է հանդիսատեսին, ձուլվում երաժշտությանը: Նա նվագում է իր համար, իր սրտի, իր կարոտների համար:

Երջանիկ է այն ժողովուրդը, որ կարող է իր փոքրիկ, ազգային նվագարանով աշխարհ նվաճել: Երջանիկ է դուրդկանար Եղիշե Մանուկյանը, որը պար կանգնելով Մուկվայի, Լեմինգոսայի, Կիկի, Պրագայի, Վարշավայի, Փարիզի, Լոնդոնի, Կոպենհագենի, Վիեննայի... Նյու-Յորքի բեմամարտակներում հնչեցնում է մեր «Պիե-Յամանը» ու «Հովիկի կանչը», հայկական ժողովրդական մեղեդիների ազնիվ ընտրանին:

Երիտասարդ երաժշտի կատարմամբ մեծ վարպետության են հնչում Սալյար-Նովայի շատ ստեղծագործությունները՝ «Ռոն էն գլխեն», «Մե խոսք ունին», «Աշխարհս մե փանջարա է», «Քամի վոր ջամ ին», «Քամանգա», «Աշխարհումս ախ շիմ բաշի»...

Երիտասարդ դուրդկանարի կատարումը յուրօրինակ է, ինքնատիպ գունա նվագարանով:

Զարմանալի հնչելություն ունի ավանդական գոռնան: Տղամարդկանց պարերը հնուց ի վեր աչքի են ընկել իրենց հատուկ առնակներով, մարտական ոգով, օրինակ, «Բերդ» պարը, «Մասունցիների պարը», «Քոչարիճ» և այլ պարեր, որոնց միշտ նվագակցում են գոռնա-դրոլը:

Տքնում է, պարսպում, սոլորում... սոլորեցնում: Իսկ հին Ախուլարում դեռ հիշում են վարպետ Աղվանին, որ նվագում էր հացատանը և որ այն հեքիաթի երկիր էր դարձել, հիշում են և փոքրիկ Եղիշեն, որ սակնապիշ լսում էր ու ոգևորվում:

Արաածի շրջանի այդ հեռավոր գյուղը պար կոչվում է Բերքատա:

Իրոք, այդ վանային գյուղից կալ բերք ու բարիք է գալիս, ոչ միայն բերք ու բարիք, այլև հայկական նվագարանների գույալ ու շինչ մեղեդիներ:

Ստեղծագործական նոր որոնումների մեջ է երիտասարդ երաժիշտ Եղիշե Մանուկյանը, որը դեռևս մեծ հեռանկարներ ունի երաժշտական արվեստի բնագավառում:

Իսկ քննությունը շարունակվում է. շնորհաշատ դուրդկանար Եղիշե Մանուկյանի կյանքի ու արվեստի քննությունը:

**Ս Ա Ր Ո
Գ Ա Ն Ի Ե Լ Ց Ա Ն**



ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐԶԸ

... Երգի, ժողովրդական տոնախմբությունների սիրամար էին Սարոյի ծնուկերը, երբայրներն ու հարազատները: Ըստքս և կիրակի օրերին իրենց գյուղից ճամփա էին ընկնում, գնում Գառնի և Գեղարք, մասնակից լինելու տոնախմբություններին, որտեղ հնչում էին ժողովրդական երգեր, որ գետինը թնկում էր պարույների ոտքերի տակ: Փոքրիկ Սարոն ճետում էր պարույների գեղեցիկ ու ուրախ շարժումներին, վերացած ոնկնդրում նվագողներին...

— Մալրիկ, ինչի՞ մասին եմ այս երգերը, — մեկ անգամ հարցրեց մորը: — Է՛, որդիս, հայրդ եթե ողջ լիներ, միշտ կատեր, թե ինչի՞ մասին... Նու ևս կողմերի ճանաչված երաժիշտներից էր, սպրկապուկ էր նվագում...

... Մայրը շլի գնեց, իսկ Սարոյի երբայրները՝ Ժորան, Լյուդվիգը, Լևոնը, Նորայրը դարձան ուսուցիչները: Նրանք նվագում էին շլի, քուլ, դուրուկ, զուռնա, և հազվական օջախը միշտ յի էր հոգևապար մեղեդիներով:

— Հայկական երգն ու երաժշտությունը, — սասմ է Սարո Դանիելյանը, — ինձ այնքան հրապուրեցին, որ ես իմ կյանքը չէի պատկերացնում առանց երաժշտության... Անեն ինչ վճռված էր՝ ես նվիրվելու էի հայ երգին ու ե-

րաժշտարվեստին: Ես չէի պատկերացնում, որ իսկական երաժիշտ դառնալու համար պետք է տքնաշան, դժվարին ու համառ աշխատանք:

Հայրենի գյուղում գործում էր ինքնագործ խմբակ՝ ժողովրդական երգի, պարի համույթ: Բոլոր մասնակիցները հողի ջանքի աշխատավորներ էին: Երեկոյան դաշտերից ու այգիներից վերադառնալով, հավաքվում էին կուլտուրայի ակումբում ու փորձում՝ նվագում էին, երգում, պարում, որսխառնում, մտքեր փոխանակում: Հետզհետե այդ հավաք-փորձերը վերածվեցին ու դարձան մի համերգային ծրագիր: Ինքնագործ խմբի ղեկավար Արթուր Ատկանյանը գանգրամեր տղային լավ ընդունեց՝ հենց սկզբից գնահատեց նրա մղումը դեպի արվեստը, դեպի երաժշտական գործիքները: Սկսվեցին պարսպուճերի համառ ժամերը: Չէ՛ր ստացվում: Դե իհարկե, չէր ստացվում:



Ջիվան Գապարյանն ու Սարո Դանիելյանը:
«Արպետի հետ միշտ էլ հեշտ է նվագել»:

Սարոն հաճախ էր նստում ռադիոյի կողքին ու սպասում, թե կրք կնվագեն իր սիրած արվեստագետները՝ Ատոհ Մարդյանը, Վաչե Հովսեփյանը, Ջիվան Գապարյանը... Նրանք ախր ուրիշ ձևով էին նվագում: Նրանց կատարումների մեջ թայսի հետ միասին մի ճեռավոր կանչ կար նաև, սրտեր մորմոքող, սրտեր մտեցնող մի կանչ: Ինչի՞ց էր դուրսկը՝ դուրսկ էր, շվի՛՛՛ շվի: Երաժշտությունն ու երգն էլ կարծես հույճ մեղեդին էին արտաբերում՝ հույճ ժողովրդային պատումի: Իսկց նրանց դուրսկն ասես այլ լիներ, երկնքից ըՇկած լիներ:

Այս բոլոր հնչյունների վարպետ կատարման սրատախանը Սարոն հետ գտավ: Այն կախված էր արվեստագետի ոչ միայն վարպետությունից, որը շատ կարևոր էր, այլ նաև սեփական ձայնը, գույնը, ոճը ունենալու ինքնա-

տիպություն: Դա է պատճառը, որ մեծերին չեն շփոթում, չեն մոռանում: Ուր էլ որ լինեն՝ նրանք, այդ մեծերը, երգի, երաժշտության վարպետները, նրանց սիրում են, նրանցով գնալովում:

Վախը սրտում, քայց նպատակը իր համար պարզած, Սարո Դանիելյանը դուրս եկավ բեմամարտակ ու նվագեց ժողովրդական «Լուսնակ գիշերը»:

Սարոն գտավ իր երգի հիմնական բանալին, որով և մոտեցավ սիրած գործիքին: Հետզհետե հասկանալով դուդուկի անմեկնելի թվացող գաղտնիքները՝ նա հպտնագործեց նվագարանի համար ամենաբնորոշն ու հատկանշալուսները:

— Դուդուկի ձայնը շատ նման է մարդու ձայնին, սպն գալիս է ներքին Լուսնուհից, սաես շարունակում է քո ձայնը,—ասում է Սարոն:

Սակայն մինչև Սարո Դանիելյան դուդուկահարի մասին հանգստանորեն պատմեղը, ամենք մի լիթիական շեղում ու ետ գնանք կենսագրության թերթիկներով:

— Ինչո՞ւ է քո անունը Սարո... Երկի թրումանյանն է մեղավոր՝ Անուշ, Սարո...

— Չէ, այդպես չի,—պարզամտորեն ասում է Սարոն: Մերոնք սար էին բարձրանում ու ճանապարհին ծնվեցի ես: Այդ պատճառով էլ անունս Սարո դրեցին:

... Գուցե սարերից եկող հովերը շշմեցացին տղայի ականջին, որ երգի հովիվ դառնա, և որպես այդ հովերի պատասխան՝ տղան մոր գնած շվին շտրթերին դրեց ու նվագեց:

Գուցե, ո՞վ գիտե...

Ինքնագործ արվեստի անամրյներից նա լիովին չհրաժարվեց անգամ 1976 թվականին Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանն ընդունվելուց հետո:

Հորդի դասարանը, որ սովորեց Սարոն, վարում էր Կոմիտասի անվան կոմսերվատորիայի դոցենտ, Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստ Քրիստ Բաբայանը:

Ամեն նվագարան չէ, որ սովյալ պահին կարող է արտահայտել քո հոգեվիճակի հնչյունը: Դրանց միջից ստանձնանում է դուդուկը՝ մեր ազգային նվագարանների թագն ու պսակը:

Անես սրտիցդ հուսով արցունն է մտնում քո մատների միջով դուդուկի պարզ տարածքի ներսը, գրկում նրա քիչ գորշալուս իրանը, գրուցում իր անցածի, ներկայի ու ապագայի մասին:

Այս ամենը Սարոն առավել լավ ու պարզորոշ ըմկալեց, երբ սովորում էր Կոմիտասի անվան կոմսերվատորիայում:

Առաջին քայլերը մեծ բեմում Սարո Դանիելյանն արեց դուդուկի անվանի վարպետ Ջիվան Գասպարյանի հովանավորությամբ:

Ինքնակեն, պատիվ էր նստել արդեն լայն ճանաչում ու հանդիսատեսի սե-
րը վայելող դուդուկահար Ջիվան Գասպարյանի կողքին, լսել նրա նվագը,
նրա ինքնատիպ, ուրույն կատարումները: Ամեն համերգ, ինքնակեն, մի դաս
էր նրա համար, նոր որոնումների, նոր հնչյունագործությունների դաս, երգի-
պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավարները, Ջիվան Գաս-
պարյանի և մյուս վարպետների հետ մեկտեղ, շատ օգնեցին Սարոյին վար-
պետության ճանապարհին: Երգի-պարի անսամբլում, իր առաջին մենանվա-
զով, Սարո Դանիելյանն ատանձնացավ գործիքային խմբից:

«Քչամանչա», «Ուզունյարա», «Էրզրումի շորր» կանացի պարերի այս
պատկերասրահում Սարո Դանիելյանն իր համար գտավ այն դուդուկը, որի
մասին երազել էր շատ տարիներ առաջ:

— Եթե գոտնան պայքարի է կանչում, ապա դուդուկը հանգստացնում է
քեզ ու հիշողություններ բերում: Ոչ, չկարծեք, թե դուդուկը միայն տխրու-
թյան գործիք է: Գոդուկը շատ նուրբ է, լիրիկական, մարդամոտ ու քաղցրա-
լեզու:

Իսկ գոտնա՞ն: Ահա տղամարդկանց խրոխտ «Քոչարին»: Հիմա հնչում
է ավանդական գոտնան, հնչում է Սարո Դանիելյանի կատարմամբ ու դրա-
նից սարն ավելի առնական ու տպավորիչ է դառնում:

Երգի-պարի անսամբլում աշխատած տարիները արվեստի լավ դպրոց
եղան Սարո Դանիելյանին համար:

Մեր ժողովրդական, ավանդական ու սրտամոտ «Գիւ լամանը», «Ռու-
կան անպերը», «Ալազյազը», «Հովերն ընկան», միջնադարյան «Հավուն-Հա-
վուն», «Վարդանի մոր ողբը» ստեղծագործությունները ոչ միայն մշտական
գրանցում ստացան նրա համերգային ծրագրում, այլ կատարումից կատա-
րում հղկվեցին ու դարձան արվեստագետի հոգու խոստովանանքի իրա-
կան վկաներ:

Դրա կողքին չկորան, այլ ամրապնդվեցին նրա շվիի, գոտնայի, կլար-
նետի, ռոբոյի, բյուլի վրա հնչող կատարումները: Պարեղանակների լավա-
գույն կատարումներից են «Ուզունյարան» ու «Թարաքանան» հայկական
խրախնանքի և ուրախության մտելիները, ժողովրդական համով-հոտով լի,
մաքրամաքոր խաղիկները, «Մարտունու քոչարին», «Ծիրակի ժողովրդա-
կան պարեղանակները», «Ձուռնի-տրեզին»:

Վերջին տարիներին նա հանդիսատեսին ներկայացրեց իր ստեղծագոր-
ծությունները և այս անգամ զարմացրեց ոչ միայն իր վարպետությամբ, այլ
նաև երգամանի ճիշտ անդրադարձմամբ՝ դեպի մեղեդին, դեպի ժողովրդա-
կան երգապատմը: Ս. Դանիելյանի մտտ կա պահանջ հանդիսատեսի հետ
կիսելու իր սպրումները, կիսվելու, վիճելու:

Սովետական Միության ժողովրդական արտիստ, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Էդվարդ Միրզոյանը մի առիթով ասաց, որ. «Ի դեմս Սարո Դանիելյանի մենք պատր ունենք մի շնորհալի, գրագույն, ինքնատիպ դուդուկահար-երաժիշտ, որը լի է ստեղծագործական մեծ վերելքով, պատրաստ է հանդիսատեսին բավականաչափ պատճառել իր դուդուկի և մեր մյուս ազգային գործիքների թալշե, հոգեզնայ մոտեցանությամբ»:

Մեծանուն կոմպոզիտորի գեներատական չափազանց պարտավորեցնող է: Այդ լավ է հասկանում երիտասարդ երաժիշտը: Հայկական երգը, հարյուր մեղեդիներ հարյուր անբաժան են Հայաստանի գյուղերում և քաղաքներում, Մոսկվայում ու Լեհիզգրադում, Կիևում, Մինսկում, Օմսկում, Ուլանուդեում, Թբիլիսիում...

... Երիտասարդության ու ուսանողների մոտկական համաշխարհային 12-րդ փառատոնում Սարոն արժանացավ դիպլոմի:

Անդրկովկասյան դուդուկահարների մրցույթ-տոնահանդեսում պատվավոր դիպլոմ նվաճեց:

Դաջնամորի ստեղծների վրա ու դուդուկի ելեւջներում ծնվում են նոր գործեր՝ նվագում է, գտնում ու որոնում Սարո Դանիելյանը, որ վաղը իր արվեստի բերկրանքը կհան հանդիսատեսի հետ:

Հանդիսատեսը սիրում է նրան, սիրով ընդունում: Խստապահանջ հանդիսատեսի գեներատականը նրա վաղվա հավատն է նաև:

Միշտ է այն արվեստագետը, որը հանդիսատեսի հավատը միշտ պահում է իր հոգու ծալքերում, իր արվեստով նորովի ծլարձակվում հազարավոր սրտերում:

Սա է արվեստագետի երջանկության կամորջը:

**Բ Ե Ն Ի Կ
Ի Գ Ն Ա Տ Ց Ա Ն**



ԱՎԱՆԳՈՒՅԹԸ ԾԱՌՈՒՆԱԿՎՈՒՄ Է

...Նա առաջին անգամ էր կոչը ունենում Հայաստանի ժողովրդի տանը: Դա մի սովորական համերգ չէր... Այդ օրը հավաքվել էին լավագույն դուրսկանաբանները՝ մասնակցելու «Այս երեկ դուրսկի հետ» հանդեսին:

Ժողովուրդներ, արվեստագետներ, կոմպոզիտորներ, և ողջակի դուրսկի սիրահարներ հավաքվել էին ճարտարապետական ինքնատիպ ոճով կառուցված դահլիճում ունկնդրելու ժողովրդական այնքան սիրելի նվագարանի համերգը:

Ձայն է խնդրում կոմպոզիտոր Մանվել Բեգլարյանը.

— Դուրսկը փնկով բացատարա հակակամ նվագարան, իր մեջ կուտակել է նաև տարբեր ժողովուրդների երաժշտական երանգներ ու հնչողություններ: Այն բացառիկ բնութագրություն է գտնում Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների մոտ:

Այսօր Հայաստանն ունի շնորհալի դուրովահարների մի մեծ խումբ, ուր իրենց պատվալիք տեղն ունեն հայկական ռադիոյի և հեռուստատեսության ժողգործիքների անսամբլի մենակատարները, այդ թվում մեր շատ սիրելի երիտասարդ դուրովահար Բենիկ Իզնատյանը:

... Բենիկը ռադիոյի անսամբլ եկալ էրևանի սփոներների պալատի հայկական ժողովրդական գործիքների անսամբլից: Անսամբլի ղեկավար Հակոբ Արաբյանը սիրեց լրջախոն Բենիկին և մեծ հետանկար տեսալ պատանու կատարողական տեխնիկայի, գեղարվեստական ճաշակի և իր գործիքի ճկատմանը ունեցած ճիւղվածոյան մեջ:

Առաջին անգամ դուրովիկը հնչեց «Ով սիրուն, սիրուն» երգի կատարմամբ: Ել ինեց այս երգն էլ կանաչ ճանապարհ թագեց նրա համար դեպի հայ ժողովրդական գործիքային արվեստը, դեպի մեծ քննախորթակ: Ու այդ ճամբի սկզբին նրա կողքին էր հայ տաղանդավոր դուրովահար Վաչե Հովսեփյանը:

1968 թվականին, մի օր տասնվեցամյա պատանին իր գործիքով հայտնվեց Վաչեի տանը: Մեծ վարպետը ցանկացել էր լսել տղային և իր կարծիքը հայտնել: Վախորած, հուզված, Բենիկը հանեց դուրովիկը և սկսեց նվագել ժողովրդական երգեր: Մեկ, երկու, երեք. հետո վարպետը ցանկացալ լսել նաև նրա գրունայի նվագը: Նորքում, էրևանի այդ գեղատեսիլ վայրում հնչեց Բենիկի գրունան: Վարպետը համոզվեց, որ պատանին տիրապետում է նաև գրունային:

Ել ինեց այդ նույն 1968 թվականին Բենիկ Իզնատյանը Վաչե Հովսեփյանի խորհրդով աշխատանքի անցալ հայկական ռադիոյի ժողգործիքների անսամբլում որպես դուրովահար: Այստեղ նա անդուլ աշխատանքով, իր արվեստի կատարելագործումով քայլեց այն ճանապարհով, որով անցել էին անվանի դուրովահարներ Մարգար Մարգարյանը, Լևոն Մադոյանը ու Ռիմա զիսալորում էր ինքը՝ Վաչե Հովսեփյանը: Հենց նրանից էլ Բենիկը ստորրեց թե նոտագրոյությունը, և թե դուրովիկի նվագարվեստի թագում գաղտնիքներն ու նրբերանները:

Բենիկի ականջին այսօր էլ հնչում են վաղամեծիկ վարպետի շատ ու շատ խորհուրդներն ու հորդորները:


— Գիտուկը թարդ գործիք է, Բենիկ ջան, նրան տիրապետելու համար մեծ կամք ու հնտոյություն է պետք: Բայց ամենակարևորն այն է, որ դու զգաս հայ երաժշտության թորր նրբոյությունները, մտ լինես հայ և համաշխարհային երաժշտական արվեստի սկուրներին: Մրտունդ միշտ երգես նվագածդ ամեն մի ֆրագը...

Այսօր Բենիկ Իզնատյանը իր անխախտ տեղն ունի անսամբլի դուրովահարների վեցակում: Նրա մի շարք մենանվագները հայ դուրովիկային արվեստի սիրված կատարումներից են:

Երիտասարդ երաժիշտն իր երգացանկում հարազատ է մնացել նաև անդրկովկասյան ժողովուրդների մեծ երգիչ Ասլաթ-Նուրալին: Նրա կատարմամբ այսօր ի սփյուռս աշխարհի ճնշում են «Դուն Էն գվինն», «Աշխարհումս այն չիմ քաշի», «Քանի վուր ջան ին» և այլ երգեր, ինչպես նաև ժողովրդական «Գլե յաման», «Հոլերն ընկան», «Որական ախպեր», Անտոն Մահլյանի «Ինձ մի խնրիր», Հրանտ Թորոսյանի «Մտորումներ» և այլ ստեղծագործություններ:

Ստեղծագործական նոր որոնումներով լի երիտասարդ դուրյակնաբը դեռևս շատ ասելիք ունի, իսկ իր ունկնդիրը՝ սպասելիք նրա արվեստից:

**ԱՐՄԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ**



ՃԱՆԱԳԱՐՎ ԳԵՊԻ ԱՐՎԵՍ

Արմենը ճիշտ է վեց տարեկան էր, հարը՝ վարպետ Ղազարը, իր երաժշտ ընկերներով հավաքվում էին տանը՝ Աշտարակի շրջանի Օհանավան գյուղում։ Հենում էր հավանական երաժշտությունը, փոքրիկը լսում էր սկանալիչ, ինքնամոռաց ու չէր զգում, թե ինչպես ազգային երգը սողոսկել էր իր մանկական հոգին, դարձել միս, դարձել արյուն։ Սի տարի անց, սպարանցի Սանթրոսը տեսնելով տղայի անորդ ղեպի երաժշտությունը, նրան նվիրեց իր գործիքներինց մեկը։

— Նվագիր, Արմեն ջան, գուցե մի օր էլ դու դառնաս դոդոկահար։

Դժվարությամբ էր նվագում. սովորեցնող չունեիր։ Սկավեցին փորձերը, սեփական ուժերով, սեփական լսողության շնորհիվ։

1957 թվականին Աշտարակում, հանրապետական փառատոնի շրջանա-
յին փուլում, իր դպրոցի կողմից երկուս ունեցավ Արմեն Սարգսյանը «Յուրի»
պարի կատարմամբ, որի նվագակցությամբ պարեց 8 տարեկան բուլդը՝ Թեո-
ֆին Սարգսյանը։

Ծնողների միակ երազանքն էր, որ Արմենը մեկնի Երևան, սովորի երաժշտական դպրոցում: Արմենը Երևանում ընդունվեց Ղ. Ղուկասյանի անվան պիոներների և դպրոցականների պալատի ժողովրդական գործիքների անսամբլ, որի գեղարվեստական ղեկավարն էր ՀՄՍՀ վաստակավոր արտիստ Նորայր Հովհաննիսյանը:

Դուդուկի երիտասարդ դասատու Արշոժա Նաչատրյանը փոքրիկ տղային սովորեցրեց ազգային նվագարանի վարպետության գաղտնիքները: «Հովիվի կանչը», «Նազ պար», «Մաղկեփունջ» և անսամբլային շատ այլ համարներ Արմենին ճանապարհ հարթեցին դեպի արվեստ:

1966 թ. Արմեն Սարգսյանը ընդունվեց Երևանի Թոմասոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի ճորտի բաժինը (այդ տարիներին ուսումնարանում դեռևս դուդուկի բաժին չկար): Դասատուն՝ ՀՄՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Քրիստափոր Բարսեղյանը շատ ջանքեր թափեց երիտասարդ երաժշտին տանելու դասական երաժշտության անուսկ աշխարհը:

Ծատ չանցած, Արմեն Սարգսյանը ոչ միայն վարպետացավ ճորտի պրոֆեսիոնալ կատարողականության մեջ, այլ նույնիսկ որպես մենակատար հանդես եկավ ուսումնարանի սիմֆոնիկ նվագախմբի մեծ (2ինստրագա, կոնցերտ 4 մասից): Հետո Արմենը համերգային շրջապայության մեկնեց Մերձբալթիկա՝ Տալլին և Ռիգա քաղաքները:

1970 թվականին Արմեն Սարգսյանն ընդունվեց Կոմիտասի անվան պետական կրճերվատորիայի ճորտի բաժինը, իսկ 1977 թվականից նա Հասարակական օտարիտի և հեռուստատեսության պետական կոմիտեի Արամ Մերանդուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլում աշխատում է որպես դուդուկահար-երաժիշտ:

— Արմեն Սարգսյանը լուրջ, կազմակերպված երաժիշտ է,— սառց անսամբլի գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր Մանվիկ Բեգլարյանը: Նրա դուդուկի աստղվա կատարումները հույս են ներշնչում, որ Արմեն Սարգսյանը դեռևս իր նոր խոսքը կասի հայ երաժշտական արվեստի պրոպագանդան գործում, կրթորձանա այդ արվեստի ճանապարհով:

**Ռ Ռ Ի Բ Ի Կ
Հ Ա Ր ՈՒ Փ Ց ՈՒ Ն Յ Ա Ն**



ԻՆՏԵՆՍԻՎ ԱՐՎԵՍՏ

Թ. Ալթունյանի անվան երգի-պարի վաստակավոր անսամբլի մենակատար-դիրիժոր Ռուբիկ Հարությունյանն իր կատարողական արվեստում ինքնատիպ է: Նրա կատարողական արվեստը լի է ստեղծագործական ավյունով: Այդ երաժշտի փայլուն տաղանդը բացահայտող արվեստի մեջ չեն գցացվում ոչ հաղթանարված դժվարությունները, ոչ էլ կատարողական արվեստի նանապարհ անցած աշխատանքը: Իսկ նրա ստեղծագործական կյանքը անցել է արթունյանական վաստակավոր կռիվների, որը հարուստ է ստեղծագործական ներշնչանքով՝ հալկական ժողովրդական երաժշտական արվեստի ավանդույթներով:

Նա ծնվել է Հրազդանի շրջանի Վերին Ախտա գյուղում և իր մանկության տարիներին դասավանդել հալկական բնաշխարհի անկրկնելի գեղեցկությամբ, նենց այդ բնությունից էլ փոխտեղ է իր նվագի գույները, արևից՝ ջերմությունը, երկնքից՝ անսահմանությունը:

Աշխարհին բարի աչքով նայելը, գեղեցիկով զարմանալու և հրճվելու ունակությունը բոլորին չէ, որ տրված է: Դեռ մանկության տարիներից պատանու լսողությունը ազահորեն ընկալեց իր երաժշտական գերդաստանի ավանդական գլուխայի մեղեդիները, լսեց գլուխաշի հորեղբոր՝ Աղաբեկի և 110

թմրկահար հոր՝ Բազարեկի գեղջկական կատարումները ու կարծես թե երակներում հորդեց նաև պապի՝ Հովրամի ջանել օրերի երգը:

Երաժշտական գերդաստանի ավանդները փոխանցվեցին որդուն: Ռուբիկը հաճախ էր մեծանաակ երաժիշտների հետ մասնակցում տարբեր տոնախմբությունների, լսում մեր ազգային երգերը, տեսնում հայկական շորջպարերը, լարախաղացի կատարումները, և դրանք չէին կարող չգաթալկել շնորհալի սղային:

Եվ մի օր էլ Ռուբիկը վերցրեց հորեղբոր գոռնան և... սկսեց նվագել: Իհարկե, սկզբում անվարժ, դողդոջուն ձայներանցների արտաբերմամբ: Հորեղբայրը այլևս չէր չվերցրեց գոռնան. «թող մտը մնա, գուցե շարունակի մեր գործը»—մտածեց նա:

Այդպես էլ եղավ: Հայկական ավանդական նվագարանը անդավանանքին ծառայեց տղային: Գյուղական, գեղջկական գուրպակ երգերն ու պարեղանակները, դրանց անարատ կատարումները՝ Գյուլնո, Վերվերի, Քոչարի, հարսանեկան շորջպարերը, ազգային մուլանները արմատներ գցեցին պատանու հոգու մեջ և նրան տարան դեպի ժողովրդական երաժշտության անտակ ու խորունկ աշխարհը:

Ռուբիկ Հարությունյանի կատարողական արվեստը որոշակիորեն կապված է ՀԱՄՀ ժողովրդական արտիստ, դուդուկահար Ջիվան Գասպարյանի հետ:

Ռուբիկը մինչև հիմա էլ հիշում է այն դասերը, որոնք ստել է Ջիվան Գասպարյանից: Նա իր առաջին վարպետի շնորհիվ ստացավ ժողովրդական երաժշտության այն կենսափոթը, որը մեծ դեր խաղաց նրա երաժշտական հալացքների ձևավորման գործում:

Ժողովրդական ակունքները նրան տվեցին ազգային երաժշտության շունչն ու ոգին հասկանալու հմտություն ու վարպետություն:

Ռուբիկ Հարությունյանը Երևանի մանկավարժական ուսումնարանում կրթություն ստանալուց հետո գործիքին ավելի հիմնավորապես տիրապետեց, ավելի մոտեցավ հայ ազգային երաժշտությանը, սիրեց այն և նվագում է մինչև օրս՝ Կոմիտաս, Սյալաթ-Նովա, Անտոն Մայիլյան, գուսաններ Շերամ, Ջիվանի, Շամեն, Աշոտ, երգահան Վաչե Հովսեփյան, ժողովրդական երգեր: Սրանք կազմում են երիտասարդ դուդուկահարների համերգացանկի լավագույն նմուշները: Իսկ երբ ելույթ է ունենում Թ. Աթունյանի երգի-պարի վաստակավոր անսամբլը, համերգային ծրագրում միշտ ստանձնացվում է Ռուբիկ Հարությունյանի մենակատարումները: Երբ կատարվում է Սյալաթ-Նովայի աղջիկների պարը, Աննայի մենավարին ուղեկցվում է Ռ. Հարությունյանի անկրկնելի մենանվագը, հետո հանդիսատեսը ոգևորության ծափահարում է նրա Ախալցխեյի կանացի պարի մենանվագը, Եզրումի շորթում և սպի համարներ:

Ռուբիկ Հարությունյանը տարիների ընթացքում վարպետացավ նաև անասնաբույժ Երգիշ-Երգշունիներից նվազակցելով: Անասնաբույժ մենակատար-երգիշ Թովմաս Պողոսյանը «Կոունկ» կամ գուսան Շահենի «Իմ Էլինար» և այլ համարներ միշտ հաջողությամբ կատարում է շնորհալի դուդուկահարի նվազակցությամբ:

— Ես Ջիվան Գասպարյանին համարում եմ ոչ միայն դուդուկի իմ ստա-
ջին ուսուցիչը, այլև իմ երաժշտական կյանքի ուղեմիշը, որի շնորհիվ եմ հա-
սկ վատաբանված արթունանական անասնաբույժ մենակատարի պատվարեչ
դիրքին: Շնորհակալ եմ,— երախտագիտությամբ ասում է շնորհալի դուդու-
կահար Ռուբիկ Հարությունյանը:

**ԱՐԱՐՈՏ
ԴԱՆԱԿԱՆ**



ԱՄԵՆ ԻՆՉ ԳԱՒԻՍ Է ՀՈԳՈՒՑ

Ընդամենը 10 տարեկան էր, երբ Հաղպատի լեռներում առաջին անգամ լսեց իր հոր՝ երկաթուղային Արարատ Դավաթյանի շվիի քաղցր կանչը. լսեց նրա կատարմամբ «Հովվի կանչը», «Հալիական պարեղանակները»: Հալիական մեղեդին թափանցեց նրա ջանել հոգու մեջ: Պատանին վերսցած լսում էր իր հոր երգն ու նվագը, ակամա ինքն էլ էր ձգտում երգել կամ նվագել: Ու մի օր փոքրիկ տղայի ձեռքն ընկավ առաջին երաժշտական գործիքը... մանրակալից մնացած մի կտորված խողովակ, որի վրա մի քանի անցք կար միայն: Տղան ծանուկ դուրս եկավ տնից և բավի մի անկյունում սկսեց նվագել հորից լսած մեղեդիները: Նվագեց իր հոգու մեջ թաքնված մեղեդին՝ «Հովվի կանչը»: Հետո դուրս թռավ, վազեց դեպի վանքի դուռը Հաղպատ, նստեց պատի մոտ, հաճեց իր «գործիքը», նորից նվագեց: Այդ արդեն Սալար-Նովայի «Թու էն գլխենն էր»:

Այդ օրվանից Արարատին հանգիստ չէին տալիս հալիական հուզաբաթավ մեղեդիները, հանգիստ չէր տալիս Սալար-Նովան:

Երազ տեսա, Սալաթ-Նովեն
Մոտս եկավ սազը ձեռին,
Էնպես անուշ խոսքերի ասավ,
Կարծես ուներ երկնքի պղծաբը ձեռին...

Հայրը, տեսնելով տղայի երաժշտական ընդունակությունները, նրան ուղարկեց Երևանի №13 երաժշտական գիշերօթիկ դպրոց: Ընդունվեց կարճնեւթի բաժին (այն ժամանակ դպրոցի կամ շվիխ բաժիններ չկային):

Արարատ Դավլաբջյանը բնորոշ ավարտեց երաժշտական տասնամյակը, հաջողությամբ ընդունվեց և ավարտեց նաև Երևանի Կոմիտասի անվան կոմպոզիտորիան, Մլրտիչ Թուվակյանի դասարանը:

Բայց դպրոցը հանգիստ չէր տալիս: Մի օր էլ նրան հրավիրեցին Հասարակական ժողովրդական գործիքների պետական նվագախումբ: Վեկավարը Հայաստանի լեմբինյան կոմերսիոնիության միջանակի դափնեկիր, շնորհալի երաժիշտ Կառլեն Միրզոյանն էր: Լսեց տղային և խորհուրդ տվեց դպրոցի անցնել:

Եվ սկսվեցին ու հարատևեցին փայտյա այդ նվագարանի գաղտնիքներին տիրապետելու քրտնաջան փորձերը: Որպես նվագախմբի երաժիշտ, նա շրջեց Հայաստանի գյուղերն ու քաղաքները, հանդիսատեսին ներկայացնելով Սալաթ-Նովայի «Մի խոսք ունիս», «Աշխարհումս այս չիմ քաշի» շքնաղ երգերը, «Որսկան ախպերը», «Քարավանն անցավը», «Ալագազը», ժողովրդական ուրախ մեղեդի «Տարան-տարանը»:

— Կրճքային հարուստ ձայներանգ, խոր տիրություն ու թայփծ արտահայտող տեմպր ունի Արարատ Դավլաբջյանի դպրոցը,— ասում է Կառլեն Միրզոյանը: — Նրա մեղեդիները հարազատորեն անդրադարձել են նաև հայկական ժողովրդական մյուս նվագարաններում՝ հասնելով գոռոնա, պիտ, պարկապուկ, որոնք արդեն հնչել են արտասահմանյան մի շարք մեծ քննադատարաններում՝ Չեխովսկայիայում, Հունգարիայում, Սիրիայում, Հրեղ-կաստանում, Վիետնամում... Նրա անդրազային դուրսկն ու գոռոնա հնչեցրել են «Լուսնյակ գիշերն» ու «Օվե յամանը», «Ասրերի հովիմ մեռնմն» ու «Քարավանն անցավը», հավակար «Յալախուն» և ազգային գոլորիկ երգերն ու պարերանակները:

Սակայն երիտասարդ երաժիշտ, ազգային տարրեր նվագարանների կատարող Արարատ Դավլաբջյանի երաժշտական կենսագրությունն աղթանով չի սահմանափակվում: Նա շարունակում է կատարելագործել իր արվեստը, խորանալ ազգային նվագարանների տիրապետման գաղտնիքների մեջ, հետևողականորեն վերցնել հայ դպրոցահարմաների կուտակած մեծ փորձը, իր երաժշտական ծիածանի երփներանգների միջոցով մատուցել հանդիսատես-

սին, ճանդիսատես, որը դեռ երկար կճափանարի երիտասարդ, խոստումնա-
լից երաժիշտ Արարատ Դավաթյանի արվեստին:
Այսօր Հայաստանի ժողովրդական գործիքների պետական նվագախմբի
մենակատար, դուդուկահար-կոնցերտմատեր Արարատ Դավաթյանի ար-
վեստը ձգվում է վերը՝ թաց ճանապարհով:

**Հ Ե Ն Ր Ի Կ
Ք Ո Ւ Մ ՈՒ Ն Ց Ա Ն**



ՔՆՍԱՐԱՅԱՆ ԸՆՉՈՎ

Վերջերս մայր հանդիսատեսին մի նոր որսախորշում բերեց Հայաստանի ժողովրդա-գոասանական պետական նորատեղծ անամբը (գեղարվեստական դեկլարացիա՝ ՀՍՍՀ վաստակավոր արտիստ, կոմպոզիտոր Ռոբերտ Այթումյան)։

Անամբը խոստապահանջ ունկեղիներին մայր գոասանական երգի և ժողովրդական տվանդական հարսանական ծեսերի, ազգային երգ ու պարի մի հիանալի ծրագիր ներկայացրեց։

Անամբը իր ծանրակշիռ տեղն ունի նվագախումբը՝ ազգային նվագարաններով համակցված։ Անամբի վարպետ դուռուկանար Գևորգի Մի-նասյանի (վերջերս Բաքվից Երևան տեղափոխված) կողքին այլի բնկավ երիտասարդ դուռուկանար, Երևանի պետական կոնսերվատորիայի ժողովրդական գործիքների բաժնի շրջանավարտ, դուռուկանար Հենրիկ Թումանյանը։

Ստեղծագործական մեծ ճանապարհ չի անցել տակավին երիտասարդ դուռուկանար Հենրիկ Թումանյանը։ Բայց որսախաղին այն է, որ նա երամշտական իր ճանապարհը սկսել է «Կակաչ» պարտին անամբում (որտեղ նվագել է դուռուկ, շվի, գրունա), այդ անամբի հետ համերգային շրջագա-

շրթյունների մեկնել արտասահման՝ Իսպանիա, Պորտուգալիա, Անգլիա, Հոլանդիա...

Դուրովի իր սուգին դասերն առել է վարպետ դուդուկահար, ՀՍՄՀ վատավալոր արտիստ Խաչիկ Խաչատրյանից, իսկ 1984 թվականից աշխատում է «Հայրամերգին» կից ժողովրդագուսանական անսամբլում:

— Հենրիկ թունանյանն, իհարկե, երիտասարդ երաժիշտ է,—ասում է անսամբլի գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր Ռուբեն Ալթունյանը,— ավելից որակալին աչն է, որ նա մեծ սիրով ու խանդավառությամբ շարունակում է այն գեղեցիկ ավանդույթները, որոնք առեղծվե են մեր նայ անվանի դուդուկահարները:

Հենրիկը կիրթ, չափավոր, քնարական շնչով ասպրող երաժիշտ է, ձգտում է հոյ երգն ու երաժշտությունը անարատ ձևով մատուցել հանդիսատեսին:

Հենրիկ թունանյանի կատարողական արվեստը մեզ ստիպում է ասելու, որ նա թեանկարներ ունեցող երաժիշտ է:

... Եվ իրոք: Լսում ենք երիտասարդ դուդուկահարին, որակալում և համազվում, որ ի դեմս նրա արվեստի, մեր նայ դուդուկահարների գեղատեսանը հարստանում է մի նոր, յուրօրինակ դուդուկահարով:

**Ա Վ Ե Տ Ի Ք
Թ Ո Վ Մ Ա Ս Յ Ա Ա Ն**



Հ Ո Վ Վ Ի Կ Ա Ն Չ Ը

Հովիվը սարում տխրեց,
Սիրո երգը նվագեց...

Հովական մաքրության ու սարկի գրկում մի մեղեդի էր ննչում լեռների երգը:

Այդ երգը ծանոթ էր փոքրիկ Ավետիքին դեռ շատ վաղուց, երբ հայրը՝ Պետրոսը, կարմնտի վրա հակական մեղեդիներ էր կատարում: Տղան լսում էր ու ասում.

— Էլի, պա, էլի նվագիր:

Երբ մեծացավ, հայրն ասաց.

— Սիրու՛յ՛ ես երաժշտություն...

— Իհարկե...

— Եթե սիրում ես, ապա դու էլ նվագիր:

— Դե տո՛ւր կարճատև:

— 2Է, դու պետք է դուդուկ նվագել սովորես:

— Դուդուկ... Բայց ի՞նչու՞ դուդուկ:

— Որովհետև մեր ազգային նվագարաններից ամենամալիչն ու ամենասիրելին դուդուկն է: Դուդուկ նվագիր:

Ու տղայի համար դուդուկ գնեց:

Տասնչորսամյա երեխան սկսեց առաջին հնչյուններն արտաբերել:
Հիմա այդ հնչյունները կենսագրություն ունեն:
1979-ին Ալետիք Թովմասյանը Երևանի քաղաքային սովետի երաժշտական խմբերի դուդուկահարների անսամբլի մեծ կոլեկտիվի անդամներից առաջինն էր: Նրա անդրամիկ քայլերին օգնեց փորձված դուդուկահար Սուրեն Թովմասյանը:
Տղային քաջակերեց ՀԱՍՀ ժողովրդական արտիստ Ջիվան Գասպարյանը, որն այդ անսամբլի հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարն էր:
Հնչեցին առաջին ինքնուրույն կատարումները՝ Վաչե Հովսեփյանի «Երիկնածամին», ժողովրդական «Ալազազ», «Որսկան ախպեր», «Վարդանի մոր ողբը»:
Ալետիքի նվագը հասավ ունկնդրին: Ընդունեցին, ծափահարեցին, բարի ճանապարհ ցանկացան:
Տարիների հետ նրա դուդուկի նվագն սկսեց ձեռք բերել իր սեփական ձայնը, համար, յուրահատկությունը:
1983-ի աշնանը ես լսում էի նրան ժուռնալիստի տանը, ուր Ալետիքը դուդուկահարների անսամբլի հետ կատարում էր «Ջայն տոր, ով ծովակը»:
Իր վարպետի Ջիվան Գասպարյանի հետ Ալետիքը շատ երոյթներ է ունեցել, ձայնագրվել: Մեկնել է Մոսկվա, մասնակցել նաև հրապարակային և շեֆական համերգների:
Նրա դուդուկն այսօր նոր երթուղի է դուրս գալիս: Սակայն ինչքան էլ հետանում են օրերն այն նախկին կատարումից, նրա հոգում ու արտում մընում է մի մեղեդի. հնի անմոռաց սերը, որից և նա սկսեց իր երաժշտական կենսագրությունը՝ «Հովվի կանչը»:
Թող միշտ մաքուր ու իրական լինի սարերի գրկում հնչող ու մարդկանց կյանքը զարդարող նրա դուդուկը:

**Մ Ե Ր Ո Ւ Ճ Ա Ն
Ս Ա Ր Կ Ս Ց Ա Ն**



ԵՐԳԻ ՃԱՌՓՈՆԵՐԸ...

12 տարեկան էր Մերտժանը, երբ առաջին անգամ իր ձեռքը վերցրեց մեր ազգային գոյությունը նվազարանը՝ դուրսուկը: Նա այն սիրեց, երբ անընդհատ լսում էր հոր՝ Գրիգորի երգը. հավանական ճին ու քաղցր երգերը, գեղջկական «Քեկե, լսում» ու Խառնակյանի «Աև, մոթ անպերն», Սպար-Նույսի «Աշխարհումս այն չիմ քաշիլը» և Շերամի «Ամպերն ելան բուր-բուրն»: Այդ երգերը մտան պատանի Մերտժանի հոգու ծալքերը, մտան ու հանգիստ չէին տալիս, երգը անընդհատ տղային մղում էր դեպի նվազարանը: Նվ այդ նվազարանը գտնվեց:

Մի օր էլ հազրը դուրսով քերեց տուն.

— Նվագիր, որդիս, նվագիր, մեր ազգային երգը առանց դուրսովի տղիսը է, սատը:

Հոր խոսքերը ոգևորեցին որդուն, նա առաջին անգամ էր տեսնում փայլուն այդ փոքր նվազարանը, որը հետագայում պետք է դառնար նրա երաժշտական կյանքի ուղեցույցը: Այդպես էլ եղավ:

Մերտժանը ընդունվեց Տ. Չոխաչյանի անվան երաժշտական դպրոց, սովորեց նվագել իր ազգային նվազարանի վրա, հետո տղան երջանիկ պատանականությամբ հանդիպեց մեր դուրսովի լավագույն վարպետներից մե-

Կի՛ճ Խաչիկ Խաչատրյանին: Այդ հանդիպումը զուր չանցավ: Վարպետը պատանի երաժշտին առկորեցրեց դուդուկի կատարման վարպետության գաղտնիքները: Ու մի օր էլ երաշխավորեց նրան աշխատելու «Հայնամերգի» երաժշտական կոլեկտիվներում:

Սա բուրջ, պատասխանատու գործ էր, որը տղայի առաջ պահանջ էր դնելու անբնդիստ կատարելագործվել ու համերգային նոր ծրագիր պատրաստել: Շատով այդ կոլեկտիվը մեկնեց Հայաստանի շրջաններն ու քաղաքները՝ Բանդրանոր տալու:

— Ես կունքում միշտ երագվ կմ նմանվել մեր դուդուկի մեծ վարպետին՝ Վաչե Հովսեփյանին,—պատմում է Մերոման Սարգսյանը: —Այդ սերն էլ ինձ տարավ դեպի ազգային նվագախումբ, տարավ դեպի Վահան Տերյանի պոեզիան, որն այդքան սիրում էր վարպետը:

Այնպես պատահեց, որ «Հայնամերգի» կոլեկտիվներից մեկը մասնակցեց Վահան Տերյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգին, գրողի հայրենիքում՝ Գանձաղում: Այստեղ Մերոման Սարգսյանը հաջողությամբ կատարեց Վաչե Հովսեփյանի «Վերադարձի», «Երեքնուկ», «Ինձ մի խնորիր» և այլ երգեր: Իսկ 1981 թվականին երիտասարդ երաժիշտը համերգային կոլեկտիվի նետ մեկնեց ԲԱՄ:

Դուդուկամար Մերոման Սարգսյանից հանդիաստեղ դեռես շատ սպասելիքներ ունի:

ՆՐԱՆՔ ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ, ՆՐԱՆՑ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ...

Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում կրոյթ էին ունենում Կոմիտասի անվան Պետական երաժշտանոցի ժողովրդական նվագարանների բաժնի ուսանողները:

Նրանցից երկուսը՝ Արմեն Ստեփանյանն ու Արա Բախտիկյանը ցուցադրեցին դուդուկի որոնման պատմաաշխատական նոր ելագծեր: Այդ պատճառով ցանկացանք գրքիս այս էջերում տեղ տալ նաև ուսանող երաժիշտներին:

ԱՐՄԵՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

1980-ին ընդունվելով Երևանի Կոմիտասի անվան երաժշտանոցը, Արմենը երաժշտական նախնական կրթություն ուներ, ավարտել էր ՄԱՀՄ ժողովրդական արտիստների Հավանուշ Դանիելյանի անվան երաժշտական դպրոցը, դաշնամուր սովորել:

Նրա սերը դեպի դուդուկը եկավ հորից՝ երկարամյա երաժիշտ-դուդուկահար Հակոբ Ստեփանյանից, ինչպես նաև Հայաստանի պարի պետական անսամբլի դուդուկահար Եղիշե Մանուկյանից:

Կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի օգնությամբ նա կարողացավ զգալիորեն հարստացնել երաժշտական գիտելիքները և, ընդունվելով Բարձրագույն ուսումնական հաստատություն, առաջին փորձերը վերցնելով Խաչատուր Ավետիսյանից, դարձավ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Ջիվան Գասպարյանի սանը:

Կոմիտասի անվան երաժշտանոցում պատրաստում են գրագետ երաժիշտներ: Դրանցից մեկն էլ հիմա ուզում է լինել Արմեն Ստեփանյանը:

Կոմպոզիտորների միության դահլիճում նա կատարեց Սալաթ-Նովայի «Մի խուսք ունիմ», միջնադարյան «Հավուն-Հավուն», Դանիել Ղազարյանի «Լամբեր մարջան» երգերը, որոնք սիրով ընդունվեցին:

Արմենը շարունակում է մեր դուդուկի լավագույն վարպետների ավանդույթները:

Բարի ճանապարհ երիտասարդ դուդուկահարին և նրա նվիրումին՝ ազգային նվագարաններին:

ԱՐԱ ԲԱՒՏԻԿՅԱՆ

Իր Հայրիկ պատից նա լսում էր ժողովրդական մեղեդիներ: Պատը նվագում էր ամենուր՝ հարսանիքներին, ծննդին, տխրություններին: Նվագում էր դուդուկ, գլուխ, կարմետ, նվագում էր իր որդու՝ Արաի հետ միասին: Այդ էր պատճառը, որ Արա Բախտիկյանի սրտում բազմից ու ատանձնացավ դուդուկի մեղեդին:

Պատը նրան դուդուկ նվիրեց, սովորեցրեց, պարսպեց երկար...


1982 թվականին Արան արդեն Կոմիտասի անվան երաժշտանոցի սան էր՝ Զիվան Գաապարյանի ու Խաչատուր Խաչատրյանի աշակերտը:

Ընդունելության քննություններին նվագելով ժողովրդական «Հովերն քնկան», Սալաթ-Նովայի «Մի խոսք ունիմ», «Ղազարի պարը», նա հանձնաժողովի անդամներին ներկայացավ իր սեփական տարբերակով՝ դուդուկի ոլրովն երանգավորումով:


Կոմպոզիտորների տան դասիծում նորովի ննչեցին նրա կատարմանը Խ. Ավետիսյանի պիեսը՝ երկու դուդուկի համար, հայկական «Հորովեր», Անտոն Մախլյանի «Ինձ մի խնորիք» և այլ գործեր:

Արա Բախտիկյանը, շարունակելով մեր դուդուկի շուրջ աշխարհայինը, ցանկանում է նրա մեջ գտնել նաև նորը, որն այսօր յուրահատուկ է ազգային նվագարաններին:

Բարի երթ նրան՝ ստեղծագործական մեծ ճանապարհին:



Արա Բախտիկյան



